

ԱՐԱՄ ՄԻՄՈՆՅԱՆ

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2014/2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
Կրթական գործունեություն.....	8
Գիտահետազոտական գործունեություն	31
Գիտական գրադարան	38
Հրատարակչական գործունեություն.....	41
Միջազգային համագործակցություն	46
Հանրային կապեր և տեղեկատվական համակարգեր.....	50
Աշխատանք ուսանողների և շրջանավարտների հետ	59
Մոցիալական քաղաքականություն.....	71
Տնտեսական գործունեություն	74
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ	76
Հավելված.....	85

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2014/2015 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանի գործունեությունը բոլոր բնագավառներում կազմակերպվել և իրականացվել է ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված խնդիրներին ու նպատակներին համապատասխան: Միաժամանակ, ծավալուն աշխատանք է կատարվել ԵՊՀ զարգացման նոր՝ 2016-2020 թթ. ռազմավարական ծրագրի մշակման ուղղությամբ:

Հաշվետու ուստարին Համալսարանի համար հիշարժան ժամանակահատված էր նաև իրավակազմակերպական առումով. ՀՀ Կառավարության որոշմամբ «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը վերակազմակերպվեց հիմնադրամի: Իրավակազմակերպական նոր ձևին համապատասխան՝ որոշ փոփոխություններ կատարվեցին Համալսարանի կառավարման համակարգում: Ստեղծվեց ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը՝ որպես Համալսարանի կառավարման բարձրագույն մարմին:

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ կյանքի բոլոր բնագավառներում իրականացված բազմաթիվ միջոցառումներն ու ծրագրերը կոչված են եղել խթանելու Համալսարանի առաջընթացը, ապահովելու նրա մրցունակությունը միջազգային գիտակրթական ասպարեզում:

Արդյունավետ աշխատանք է իրականացվել ուսումնական գործընթացի բարելավման ու զարգացման, կրթության որակի ներքին ապահովման համակարգի կատարելագործման, դասավանդման որակի բարձրացման, ուսուցման տեխնոլոգիական հենքի նորացման և ծավալման, գիտահետազոտական գործունեության ընդլայնման, ուսանողական միջոցառումների ակտիվացման և այլ ուղղություններով: Ծավալվել են կրթության կազմակերպման աշխատանքների բարելավման և մեթոդների նորացման, կրթության բովանդակության հարստացման և որակի բարձրացման, միջազգային չափանիշներին դրանց համապատասխանեցման ուղղությամբ մի շարք գործընթացներ:

Իրականացվել են գիտական բազմաթիվ աշխատանքներ, դրամաշնորհային ծրագրեր, ակտիվացել է ուսանողների ու ասպիրանտների մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքներում: Կազմակերպվել և անցկացվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներ, կոնֆերանսներ, գիտագործնական

սեմինարներ ու քննարկումներ, որտեղ համալսարանականները ներկայացրել են կատարված ուսումնասիրությունների արդյունքները, արժանացել բարձր գնահատականների: Արժեքավոր ուսումնասիրություններ են կատարվել Համալսարանի գիտահետազոտական ինստիտուտներում և կենտրոններում:

Կազմակերպվել և իրականացվել են Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված բազմաթիվ ծրագրեր ու միջոցառումներ:

Շարունակվել է ԵՊՀ հրատարակչական գործունեությունը, անխախտ պարբերականությամբ լույս են տեսել գիտական հանդեսները:

Արդյունավետ է եղել նաև ԵՊՀ գործունեությունը միջազգային կապերի բնագավառում: Շարունակվել է համագործակցությունը արտերկրի բազմաթիվ գիտակրթական ու մշակութային կենտրոնների հետ, կնքվել են համագործակցության նոր պայմանագրեր: Իրականացվել են համատեղ կրթական, գիտական, մշակութային ծրագրեր ու միջոցառումներ, դասախոսների և ուսանողների փոխանակություն, փոխայցելություններ և այլն: ԵՊՀ են այցելել Հայաստան ժամանած օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյաներ, դիվանագիտական կենտրոնների ներկայացուցիչներ, գիտության և մշակույթի գործիչներ, կազմակերպվել են հանդիպումներ մեր երկրում հավատարմագրված դեսպանների հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են աշխատանքները սոցիալական քաղաքականության ուղղությամբ: ԵՊՀ վարչակազմի ու արհեստակցական կազմակերպության ուշադրության կենտրոնում են եղել Համալսարանի աշխատողների հանգստի, առողջության պահպանման, սոցիալական այլևայլ խնդիրներ, ձեռնարկվել են դրանց լուծմանն ուղղված միջոցառումներ:

Աշխատանքներ են տարվել տնտեսական և ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ: Բարելավվել է ԵՊՀ նյութատեխնիկական բազան: Ձեռք են բերվել ժամանակակից նոր սարքավորումներ: Շարունակվել են աշխատանքները տեղեկատվական համակարգերի, համակարգչային տեխնիկայի, ներհամալսարանական համակարգչային ցանցի սպասարկման, զարգացման և արդիականացման ուղղությամբ: Շարունակական աշխատանքներ են տարվել հասարակության հետ կապերի զարգացման, ԵՊՀ վարկանիշի և հեղինակության բարձրացման ուղղությամբ, ակտիվ համագործակցություն է ծավալվել հայաստանյան և արտերկրի տպագիր և էլեկտ-

րոնային ՁԼՄ-ների հետ: Կատարվել են բարեկարգման ու վերանորոգման ծավալուն աշխատանքներ և այլն:

Համալսարանական բոլոր գործընթացներին ակտիվորեն մասնակցել են ուսանողական կառույցները:

Հետևողական աշխատանքներ են իրականացվել նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում:

* * *

Ստորև հանգամանորեն ներկայացվում է Երևանի պետական համալսարանի՝ 2014/2015 ուսումնական տարվա գործունեությունը՝ ըստ ոլորտների:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2014/2015 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում շարունակվել են աշխատանքները ծրագրային նորոգման, ուսումնական գործընթացի կազմակերպման բարելավման, որակի ներքին ապահովման համակարգի զարգացման, դասավանդման որակի բարձրացման և մի շարք այլ ուղղություններով:

Հաշվետու ժամանակահատվածում Համալսարանի ուսումնակրթական գործունեությունն իրականացվել է հետևյալ հիմնական ուղղություններով:

1. Որակի ապահովում

Շարունակվել են որակի ապահովման և բարելավման գործընթացները: «ՀՀ միջին և բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների պետական հավատարմագրման կարգի» դրույթների համաձայն՝ 2012 թ. մարտին ԵՊՀ-ում մեկնարկեց և անցած տարիներին Նիդերլանդների հավատարմագրման կառույցի անմիջական մասնակցությամբ իրականացվեց ինստիտուցիոնալ և փորձնական ծրագրային հավատարմագրում: Այդ նպատակով Համալսարանը նախաձեռնեց ինքնագնահատման գործընթաց՝ գնահատելու համար իր գործունեության արդյունավետությունը բոլոր հիմնական ոլորտներում, վերհանելու ձեռքբերումները, առկա թերություններն ու բացթողումները, ինչպես նաև նախանշելու վերջիններիս վերացման ուղիները: Կազմվեց ԵՊՀ ինքնագնահատման զեկույցը, որը հրապարակվեց և տարածվեց ԵՊՀ ներքին և արտաքին շահակիցների շրջանում և ներկայացվեց միջազգային փորձագիտական խմբին: Խումբը փորձագիտական այց կատարեց Համալսարան՝ իր վերջնական գնահատականը տալու նպատակով: Փորձագիտական խմբի ղեկավար, Բրյուսելի համալսարանի նախկին ռեկտոր Բեն Վան Կամպը և խմբի անդամները փաստեցին ողջ գործընթացի բարձր կազմակերպվածությունը, անմիջական և անկաշկանդ շփումները ուսանողների և դասախոսների հետ, ինչպես նաև նրանց պատրաստվածությունն ու իրազեկվածությունը: Այցից հետո փորձագիտական խումբը ներկայացրեց իր զեկույցը՝ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման վերաբերյալ: Արդյունքում, փորձագիտական խումբը պետական հավատարմագրման 10 չափանիշներից 9-ի գծով ԵՊՀ գոր-

ծունեությունը գնահատեց դրական: Անբավարար էր գնահատվել միայն գիտահետազոտական գործունեությունը՝ կրթության և հետազոտության անբավարար կապի և հումանիտար գիտություններում միջազգային հրապարակումների սահմանափակ քանակի պատճառով: Փորձագետները, ամփոփելով ԵՊՀ գործունեության ձեռքբերումները և բացթողումները, առաջարկել են նաև Համալսարանի հետագա արդյունավետ գործունեությանը միտված երաշխավորություններ:

Հաշվի առնելով փորձագիտական խմբի առաջադրած երաշխավորությունները՝ ԵՊՀ աշխատանքային խմբերում մշակվել, համակարգվել և վերջնական տեսքի է բերվել «ԵՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական գնահատման երաշխավորությունների իրականացման գործողությունների ծրագիրը, որը հաստատվել է ԵՊՀ գիտխորհրդի կողմից և ներկայացվել ՈԱԱԿ:

Վերոնշյալ կազմակերպված ու նպատակալաց աշխատանքները տվեցին ցանկալի արդյունք: Արդեն 2015 թ. մարտի 7-ին Երևանի պետական համալսարանին տրվեց պետական հավատարմագրման թիվ 1 վկայականը, որով հավաստվում է, որ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովի 2015 թ. փետրվարի 21-ի թիվ 1 որոշմամբ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին շնորհվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 6 տարի ժամկետով:

Փաստենք, որ հավատարմագրման գործընթաց իրականացրած հայաստանյան բուհերից ԵՊՀ-ն միակն էր, որին հավատարմագրում շնորհվեց 6 տարի ժամկետով:

*** * ***

Անցած ուստարում շարունակվել են գործընթացները դասընթացների և կրթական ծրագրերի որակի և արդյունավետության գնահատման առցանց էլեկտրոնային համակարգի ստեղծման ուղղությամբ: Կատարվել են աշխատանքներ նոր կրթական ծրագրերի մշակման, ծրագրերի փաստաթղթային փաթեթների ստուգման և մասնագիտական եզրակացության տրամադրման ուղղությամբ: Հրատարակվել է ԵՊՀ դասախոսական կազմի տարեկան գործունեության գնահատման ղեկավար ձեռնարկը, որը ներառում է դասախոսի ինքնագնահատման ընթացակարգը և ձևաչափը, գործընկեր դասախոսների և անմիջական ղեկավարի կողմից դասախոսի գնահատ-

ման ընթացակարգը և ձևաչափը, ինչպես նաև դասախոսի գնահատման չափանիշները՝ դասավանդման և ուսումնամեթոդական գործունեության, գիտահետազոտական և ստեղծագործական գործունեության, հասարակական և վարչական գործունեության ոլորտներում: Լրամշակվել և հրատարակվել է «ԵՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների» 3-րդ հրատարակության անգլերեն տարբերակը՝ 2008-2013 թթ. համար: Ֆակուլտետներում շարունակվել են կրթական վերջնարդյունքների վրա հիմնված ուսումնական ծրագրերի մասնագրերի մշակման աշխատանքները:

Լրամշակվել են առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների համար նախատեսված «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» տեղեկատվական ձեռնարկները, որոնք տեղադրվել են ԵՊՀ կայքէջում: Տպագրվել են համաեվրոպական ձևաչափի դիպլոմի հավելվածները առկա և հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար:

ԵՊՀ-ն ԿԳՆ-ի, ՀՀ և եվրոպական մի շարք գործընկեր բուհերի ու կազմակերպությունների հետ համատեղ շարունակել է նախորդ տարում մեկնարկած TEMPUS “ARMENQA” ազգային նշանակության ծրագիրը՝ ուղղված որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների (ՈԱՇ և ՈՈՇ) իրականացմանը ՀՀ-ում:

Կազմվել և 2014 թ. հունիսին ՀՀ կրթության և գիտության նախարարությանն է ներկայացվել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի նոր նախագիծը, որը նախապես հավանության է արժանացել եվրոպական փորձագետների և բուհական հանրության կողմից:

* * *

Համալսարանում կրթության որակի շարունակական բարելավմանը նպաստող կարևոր գործոններից են դասավանդման արդյունավետության վերաբերյալ ուսանողական կիսամյակային հարցումները և Համալսարանում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության ամենամյա հարցումները: Դրանք էլ ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով հաշվետու ուստարում ամբողջությամբ փոխվել է ուսանողական հարցման հարցաթերթը, և լրամշակվել է շրջանավարտների հարցման հարցաթերթը: Լրամշակվել են նաև համապատասխան կանոնակարգերը:

Տարվել են աշխատանքներ հեռակա ուսուցման համակարգի ուսանողների շրջանում ուսանողական հարցումն առցանց կազմակերպելու ուղղությամբ: Մշակվել և վերլուծվել են վերջին երեք տարվա շրջանավարտների բավարարվածության արդյունքները, կատարվել է համեմատական վերլուծություն, պատրաստվել է ԵՊՀ 2011-2013 թթ. շրջանավարտների բավարարվածության և զբաղվածության զեկույց, որը հրատարակվել է 2015 թ.:

2014/2015 ուստարում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական կիսամյակային հարցումներին մասնակցել է բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի 8236 ուսանող, որը կազմում է այդ համակարգի ուսանողության 66,8 %-ը: Հարցումների արդյունքում հումանիտար մասնագիտությունների գծով միջին թվաքանակն միավորը կազմել է 4,51, իսկ բնագիտական մասնագիտությունների գծով՝ 4,53: Ինչպես նախորդ, այս ուստարում ևս ուսանողական հարցման արդյունքներն օգտագործվել են դասախոսների պաշտոնավարման և առաջխաղացման համար անցկացվող մրցույթներում: ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցումներին 2014/2015 ուստարում մասնակցել է բակալավրիատի 639 և մագիստրատուրայի 850 շրջանավարտ: Հարցումների արդյունքները որոշակի դեր են ունեցել ուսումնական ծրագրերի և ուսումնական միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումների մշակման համար:

Կրթության որակի ապահովման և բարելավման կարևորագույն պայմաններից մեկը աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստումն է գործընկերության շրջանակներում: Շարունակվել է «Սինոփսիս-Արմենիա» ձեռնարկության հետ ձևավորված համալսարան-գործատու փոխշահավետ համագործակցությունը, որի շրջանակներում իրականացվող կրթական գործընթացներում 2014/2015 ուստարում ընդգրկվել են ԵՊՀ բակալավրիատի, մագիստրատուրայի, ինչպես նաև ասպիրանտուրայի 38 սովորողներ:

2. Ուսումնական գործընթացի ընթացիկ կազմակերպում և բարելավում

Շարունակվել են ուսումնական գործընթացի բնականոն ընթացքի ապահովմանը և բարելավմանն ուղղված աշխատանքները: Իրականացվել է բակալավրիատի ու մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման առաջին կուրսի ուսանողների և ԵՊՀ-ի միջև ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ պայմանագրերի կնքման գործընթացը: Կատարվել են աշխատանքները ուսանող-դասախոս թվաքանակի հարաբերակցության օպտիմալացման ուղղությամբ: Կատարելագործվել է էլեկտրոնային տեղեկատվական “SuperVision YSU” ծրագրի ավտոմատացված համակարգը, կարևորվել են աշխատանքներն ուսումնական գործընթացի պլանավորման, կառավարման և կատարողականի վերահսկման ուղղությամբ: Իրականացվել են աշխատանքներ ուսումնական պլաններից ուսումնական աշխատանքային պլանների անցման ուղղությամբ, և դրանց հիման վրա կազմվել են ամբիոնային բեռնվածությունները: Նույն համակարգի միջոցով յուրաքանչյուր կիսամյակ վերահսկվում է ամբիոնների կատարողականը, որի արդյունքները հաշվի են առնվում հաջորդ ուսումնական տարվա ամբիոնային բեռնվածությունների հաստատման ժամանակ:

Կրթության որակի բարելավման, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով միջոցներ են ձեռնարկվել պրոֆեսորադասախոսական կազմի աշխատածավալների օպտիմալացման ուղղությամբ:

Ֆակուլտետների հետ շարունակվել են աշխատանքները քննաշրջանների և փոխատեղման արդյունքները ուսանողների համար առավել հասանելի և թափանցիկ դարձնելու ուղղությամբ:

Ուսումնական գործընթացը կազմակերպելու համար հաշվառվել է լսարանային ֆոնդը, և իրականացվել են աշխատանքներ արդյունավետ օգտագործման և դասերի կանոնավոր կայացման ուղղությամբ: Տարվել են աշխատանքներ դասատախտակները էլեկտրոնային ձևով կազմակերպելու ուղղությամբ: Սկզբում այն փորձարկվել է չորս ֆակուլտետներում, և այդ ֆակուլտետների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա համապատասխան շտկումներ են արվել, իսկ 2015/2016 ուստարվանից այն կիրառվել է բոլոր ֆակուլտետների առկա և հեռակա ուսուցման համակարգերում: Էլեկտրոնային դասատախտակի կիրառումը հնարավորություն է տալիս նաև ավտոմատացնել լսարանային բաշխվածությունը:

2014/2015 ուստարում ևս ֆակուլտետներում և կենտրոններում շարունակվել են ուսանողի ուսումնական քարտի էլեկտրոնային տարբերակով ուսանողների անձնական գործի վարումը՝ դեկանատների գործավարությունը առավել հստակեցնելու և գործառույթները օպտիմալացնելու համար:

Կատարվել են աշխատանքներ ուսումնական գործընթացին վերաբերող թղթաբանությունն ավտոմատացնելու ուղղությամբ: Մշակվել և ավտոմատացվել են ուսումնամեթոդական վարչության կողմից տրվող ավելի քան 30 հրամանների ձևաձևները և ներբուհական տեղափոխությունների հաշվարկների ընթացակարգը:

Համակարգվել է մինչև 12 կրեդիտ պարտք ունեցող ուսանողների դիմումների ընդունման և քննությունների վերահանձնման գործընթացը, որը “SuperVision YSU” ծրագրի միջոցով կազմակերպվում է ավտոմատացված եղանակով: Նույն ծրագրի միջոցով կազմակերպվում են նաև Ազգային բնակ մեկնող և վերադարձող ուսանողների դիմումների ձևակերպումները:

Տարվում են աշխատանքներ “SuperVision YSU” ծրագրի միջոցով բոլոր դիմումները, վերականգնվող ուսանողների առարկայական տարբերությունների հաշվարկի ձևաթուղթը, ինչպես նաև քննաշրջանից և լուծարքային շրջանից հետո պարտք ունեցող ուսանողների անվանական ցուցակների ամփոփումը ավտոմատացնելու ուղղությամբ:

Ընթացիկ ուստարում իրականացվել է ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման գործընթացը կրթության որակի ապահովման խիստ պահանջներով՝ առաջնորդվելով գործող կանոնակարգով: ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների և ԵՊՀ ֆինանսական միջոցների հաշվին իրականացվել է ուսանողական նպաստների հատկացումը: Առաջադիմության արդյունքներով նպաստ է տրվել բակալավրիատի և մագիստրատուրայի 1424 ուսանողի, որոնցից 341-ը՝ բակալավրիատի 1-ին, 346-ը՝ 2-րդ, 356-ը՝ 3-րդ կուրսերից են, իսկ 381-ը՝ մագիստրատուրայի 1-ին տարվա սովորողներ են: Համակարգի փոփոխման են ենթարկվել բակալավրիատի 1-ին կուրսի 109 (31,9 %), 2-րդ կուրսի 72 (20,8 %), 3-րդ կուրսի 96 (26,9 %) և մագիստրատուրայի 1-ին կուրսի 53 (13,9 %) ուսանողներ:

Հասարակական ակտիվություն ցուցաբերած բարձր առաջադիմությամբ ուսանողներին հատկացվել է կրթաթոշակ: Բացի պետական կրթաթոշակից՝ հատկացվել են նաև ԵՊՀ-ի և այլ կազմակերպությունների կողմից սահմանված անվանական

կրթաթոշակներ, որոնց թիվը 52 է, իսկ ստացողների թիվը՝ 64: «Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բուհի վճարովի համակարգում սովորող ուսանողներին հատկացվել են ուսման վարձի զեղչեր: Այդ զեղչերից 1-ին կիսամյակում օգտվել է 1221 ուսանող, 2-րդ կիսամյակում՝ 1851: Նրանցից 1-ին կիսամյակում 851-ը եղել են բակալավրիատի, 194-ը՝ մագիստրատուրայի ուսանողներ, 176-ը՝ աշխատողների երեխաներ, իսկ 2-րդ կիսամյակում 1393-ը եղել են բակալավրիատի, 290-ը՝ մագիստրատուրայի ուսանողներ, 168-ը՝ աշխատողների երեխաներ: Երկու կիսամյակներում կիրառված զեղչերի գումարը կազմում է ավելի քան 267 մլն դրամ: Կատարված գործընթացն ըստ ուսուցման ձևի, ֆակուլտետների, մասնագիտությունների, կուրսերի, զեղչված տոկոսի չափի, կարգավիճակի և գումարների մանրամասն ամփոփվել է առանձին գրքի տեսքով, որը ներկայացվել է նաև ԿԳՆ:

Շարունակվել են առաջադիմության վերահսկման աշխատանքները՝ զեղչերի կիրառման և նպաստների հատկացման գործընթացն առավել հստակ և անթերի կազմակերպելու նպատակով: Ինչպես նախորդ, հաշվետու ուստարում ևս ՏՏԿՀ կենտրոնում և Ուսումնամեթոդական վարչությունում շարունակվել են քննությունների արդյունքների մշակման ավտոմատացման խնդիրների վերաբերյալ ուսուցողական աշխատանքները ֆակուլտետների ղեկնաստների և կենտրոնների աշխատողների հետ՝ միտված համակարգչային այդ ծրագրից օգտվելու նրանց հմտությունների զարգացմանը:

Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովման նպատակով բոլոր գործողություններն իրականացվել են՝ հետևելով ՀՀ կառավարության, ԿԳ նախարարության և ԵՊՀ կանոնակարգերին ու պահանջներին:

Իրականացվել են լսարաններում տեսախցիկների տեղադրման աշխատանքներ՝ տեսագրելու ամփոփիչ ատեստավորման ընթացքը և ապահովելու ամփոփիչ ատեստավորման արդյունքների բողոքարկման գործընթացը:

Ուսումնամեթոդական վարչության կողմից կազմակերպվել և իրականացվել է ելքային արդյունքների վերահսկման ընթացքը: Ամփոփվել, այնուհետև ԿԳՆ են ներկայացվել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

2014/2015 ուստարում պատրաստվել և շրջանավարտներին են հանձնվել 3355 դիպլոմ, որոնցից 835-ը՝ առկա ուսուցման համակարգի բակալավրիատում, 1269-ը՝ մագիստրատուրայում, 770-ը՝ հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատում, 353-ը՝ մագիստրատուրայում, 86-ը՝ նախորդ տարիների (այդ թվում՝ 2-ը նախորդ տարիների 5-րդ կուրս) շրջանավարտների: Վերականգնվել և տրվել են շրջանավարտների 42 դիպլոմի կրկնօրինակներ:

Շարունակվել են ուսանողական շարժի հաշվարկման և վերահսկման աշխատանքները: Ձևակերպվել են ՀՀ զինված ուժերում ծառայելու, ազատման, տեղափոխման, վերականգնման, արտերկիր գործուղման, հիվանդությունների պատճառով տարկետման, ինչպես նաև ուսումնական գործընթացին առնչվող այլ հրամաններ:

Հաշվետու ուսումնական տարում ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն և ՀՀ ԿԳՆ են ներկայացվել 1-ԳՄ և 3-ԳՄ ձևաչափերով վիճակագրական հաշվետվությունները, որոնք ներառում են քննությունների արդյունքները և շրջանավարտների վերաբերյալ այլ տվյալներ, ինչպես նաև ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմին առնչվող տեղեկատվություն: Մշակվել են ամբիոնային բեռնվածությունների, զեղչերի, տեղափոխությունների և քննաշրջանների արդյունքների տվյալները, որոնք ամփոփվել են առանձին գրքույկի ձևով:

ԿԳՆ-ի կողմից ՀՀ բուհերի վարկանիշավորման գործընթացի համար հաշվետու ուստարում ևս հավաքագրվել են ԵՊՀ վարկանիշավորման ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տվյալները, ամփոփվել և ներկայացվել են ԿԳՆ: 2014 թ. բուհերի վարկանիշավորման արդյունքում ԵՊՀ-ն իր ցուցանիշներով կրկին առաջինն էր:

Բանկերի կողմից ուսման վարձի վճարման համար ուսանողներին տրամադրվող վարկի գործընթացը ավելի հստակ կազմակերպելու համար յուրաքանչյուր կիսամյակ ԵՊՀ-ն ՀՀ բանկերի միություն է ուղարկում ուսումն ընդհատած ուսանողների տվյալները՝ նրանց վարկեր չտրամադրելու համար:

2014/2015 ուստարում շարունակվել է համագործակցությունը ՊՆ բարձրագույն կրթական հաստատությունների հետ՝ նրանց ցուցաբերելով մեթոդական աջակցություն ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կազմման ու իրականացման ուղղությամբ: ԵՊՀ ուսումնամեթոդական վարչությունը շարունակել է Հայաստանի ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանի հետ համագործակցության շրջանակներում ԵՊՀ

դասախոսների կողմից այդ բուհում մի շարք առարկաների դասավանդման գործընթացի կազմակերպումը:

Համալսարանում ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչներից է պրակտիկան: Նախապատրաստական համապատասխան աշխատանքներից հետո ուսումնական պլաններում նախատեսված պրակտիկաները իրականացնելու համար ներկայումս Համալսարանն ունի 85 պայմանագիր, որոնք կնքված են պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների և նրանց ստորաբաժանումների հետ (ինչպիսիք են՝ ՀՀ Նախագահի աշխատակազմը, ՀՀ վարչապետի աշխատակազմը, ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ Սահմանադրական դատարանը, նախարարությունները, ՋԼՄ խմբագրությունները, դպրոցները, միջազգային կազմակերպությունների երևանյան ներկայացուցչությունները): Պրակտիկայի վայրերն ընտրելիս հաշվի են առնվել գործատուների պահանջները, որը հետագայում աշխատանքի տեղավորման հարցում կնպաստի շրջանավարտների մրցունակ լինելուն, և որի շնորհիվ որոշ շրջանավարտներ աշխատանքի են անցել ՀՀ Ազգային ժողովում, Պաշտպանության նախարարությունում, դպրոցներում, դեղագործական կազմակերպություններում, արտադրական ձեռնարկություններում և այլ կազմակերպություններում: Առանձին դեպքերում անհատական կարգով պրակտիկաներ են կազմակերպվել ԵՊՀ-ի հետ համագործակցության պայմանագիր ունեցող այլ պետությունների առաջատար բուհերում և գիտահետազոտական կենտրոններում: Բացված նոր կրթական ծրագրերում մեծ ուշադրություն է դարձվել պրակտիկաների ծրագրերի կազմմանը:

Արտադրական պրակտիկայի վայրերն ընտրելիս հաշվի են առնվել աշխատաշուկայի պահանջները, ուսանողների նախասիրությունները, ինչպես նաև անցած տարիների ընթացքում ֆակուլտետների կողմից ներկայացված առաջարկությունները: Նոր կրթական ծրագրերին համապատասխան ընդլայնվել է պրակտիկայի անցկացման աշխարհագրությունը: Արտադրական (այդ թվում՝ մանկավարժական) պրակտիկա է անցել 5919 ուսանող (բակալավր և մագիստրոս), ուսումնական պրակտիկա են անցել 1416-ը, որոնցից 1408-ը՝ դաշտային: Բոլոր պրակտիկաներն անցկացվել են ռեկտորատի կողմից հաստատված երթուղիներով:

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի «ԳԲՀ ռադիոֆիզիկա» մասնագիտացման ուսանողները արտադրական պրակտիկան անց են կացրել «Նեյշնլ-ինստրումենթս»-ի հայաստանյան մասնաճյուղում:

ղում: Ֆիզիկայի ֆակուլտետի միջուկային ֆիզիկայի ամբիոնի ուսանողները արտադրական պրակտիկան անց են կացրել ՀԱԷԿ ՓԲԸ-ում:

Համալսարանականների ուսումնական (դաշտային) պրակտիկան անցկացվել է ԵՊՀ-ի Բյուրականի և Հանքավանի հանգրվաններում (աշխարհագրության և երկրաբանության, կենսաբանության ֆակուլտետների ուսանողների համար): Այդ ֆակուլտետների, ինչպես նաև դեղագիտության և քիմիայի, պատմության, աստվածաբանության ֆակուլտետների մի շարք պրակտիկաներ կազմակերպվել են մեկօրյա կամ 2-4 օր տևողությամբ ավտոբուսային երթուղիների ձևով՝ ՀՀ-ում և ԼՂՀ-ում: Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանողները ծանոթացել են ԼՂՀ գետահովիտների երկրաձևաբանությանը, եղել են Դրմբոնի և Կաշենի հանքավայրերում, այցելել են Դադիվանք, Գանձասար, Շուշի և Տիգրանակերտ: Հաշվետու ուստարում հատուկ ուշադրություն է դարձվել հայագիտությանը, որի նպատակն էր պրակտիկայի միջոցով էլ ավելի ամրապնդել ուսանողների գիտելիքները նշված ուղղությամբ: Սոցիոլոգիայի ֆակուլտետի ամառային պրակտիկան նվիրված էր Մեծ եղեռնի վերաբերյալ դարաբաղյան հասարակության կոլեկտիվ հիշողության ուսումնասիրմանը: Սոցիոլոգիայի ֆակուլտետի արտադրական պրակտիկան ինչպես անցած 2 տարիներին, այս տարի նույնպես անց է կացվել Շուշիում:

3. Ընդունելության նախապատրաստում

Խորապես գիտակցելով այն հանգամանքը, որ հանրակրթության ոլորտի բարեփոխումների ներկա փուլի հիմնական խնդիրը կրթության որակի ապահովումն է, ինչպես նաև հաշվի առնելով դիմորդների հավաքագրման գործում առկա որոշակի դժվարությունները՝ կապված մի շարք օբյեկտիվ իրողությունների հետ (դպրոցներում շրջանավարտների թվի նվազում, պետական բուհերի միջև մրցակցության ուժեղացում, Երևանում Մոսկվայի պետական համալսարանի մասնաճյուղի բացում, Ամերիկյան համալսարանում բակալավրիատի ընդունելություն, ԵՊՀ կազմում ավագ դպրոցի և քոլեջի բացակայություն և այլն) ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչության ջանքերով հաշվետու ուստարում ընդլայնվել և ակտիվացվել է Համալսարանի գովազդարշավը ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Տարվա սկզբից կազմակերպվել են հանդիպում-գրույցներ, քննարկումներ աշակերտների, ծնողների, ուսուցիչների հետ: Աշխատանքի արդյունավետությունը խթանող հանդիպումների ընթացքում ներկայացվել են ԵՊՀ մասնագիտությունները, մանրամասն պարզաբանվել են շարունակական կրթության և ընդհանուր հիմունքներով բակալավրի ծրագրով բուհ ընդունվելու կարգերը: Այս գործընթացին ակտիվորեն մասնակցել են ֆակուլտետների դեկանները:

Հաշվի առնելով մեր երկրի զարգացման հիմնական միտումները և միջազգայնորեն ընդունված կրթական չափանիշները՝ հաշվետու ժամանակաշրջանում նույնպես մեծ ուշադրություն է դարձվել ավագ դպրոցի ինստիտուցիոնալ համակարգի կատարելագործմանը, հանրակրթության արդյունավետության բարձրացմանը՝ դրանով իսկ նպաստելով ավագ դպրոցի կայացման գործին՝ օգտագործելով ԵՊՀ և՛ պրոֆեսորադասախոսական, և՛ նյութատեխնիկական ներուժը: Հանրակրթության համակարգում առկա հիմնախնդիրների լուծման նպատակով մեր ռեսուրսներն ավելի նպատակային օգտագործելու համար 2014/2015 ուստարում ԵՊՀ-ն համագործակցության պայմանագրեր կնքեց Երևանի 2 և ՀՀ մարզերի 3 ավագ դպրոցների հետ՝ դրանց թիվը հասցնելով 34-ի:

Վերը նշված ավագ դպրոցներում ԵՊՀ տարբեր ֆակուլտետների 36 փորձառու դասախոսներ լրացուցիչ կրթական ծրագրերով հատուկ դասընթացներ են վարել: Տեղին է նշել նաև, որ դասախոսների վարձատրությունն իրականացվել է ԵՊՀ միջոցների հաշվին: Նշված ծրագիրը բավականաչափ մեծ արձագանք է ստացել ինչպես դպրոցների տնօրինության, այնպես էլ ծնողական խորհուրդների կողմից:

Համալսարանի հետ պայմանագիր կնքած ՀՀ մարզերի դպրոցների համար վարչության կողմից մշակվել և հաջողությամբ իրականացվում է առանձին ծրագիր: Դրա հետ մեկտեղ, հաշվետու ժամանակաշրջանում ծավալուն աշխատանք է կատարվել թվով 28 հիմնական և ավագ դպրոցներում ու վարժարաններում, որոնց հետ ԵՊՀ-ն ունի համագործակցության երկարաժամկետ համաձայնագրեր:

Վարչության աշխատողները ԵՊՀ բոլոր ֆակուլտետների դեկանների և պրոֆեսորադասախոսական կազմի աջակցությամբ կազմակերպել են ակնարկային և բովանդակային դասախոսություններ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար: ԵՊՀ վարկանիշի բարձրացման, կրթօջախի մասին լիարժեք պատկերացում կազմելու համար և խիստ կարևորելով հանրակրթա-

կան դպրոցների բարձր դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ հաշվետու ուստարվա ընթացքում մայրաքաղաքի և մարզերի 100-ից ավելի դպրոցների շուրջ 2000 աշակերտների համար կազմակերպվել են «Բաց դռների օր» և նպատակային ճանաչողական այցեր ԵՊՀ՝ ապագա դիմորդներին հնարավորություն ընձեռելով հանդիպելու Համալսարանի և ֆակուլտետների ղեկավարության և դասախոսական կազմի հետ, մեր ուսումնական ծրագրերին և ուսումնառության առկա հնարավորություններին ծանոթացնելու նպատակով:

2014/2015 ուսումնական տարում ԵՊՀ-ի կողմից առաջարկվող կրթական ծրագրերի և մասնագիտությունների մարքեթինգն ակտիվացնելու, անհրաժեշտ տեղեկատվությունը հասարակությանը, մասնավորապես դիմորդներին հասանելի դարձնելու նպատակով նախապատրաստվել և 2500 տպաքանակով հրատարակվել է «Դիմորդի ուղեցույց-2015» ձեռնարկը, որն անհրաժեշտ տեղեկատվություն է պարունակում ԵՊՀ ֆակուլտետների, մասնագիտությունների, հեռակա ուսուցման համակարգի, նախապատրաստական դասընթացների և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի մասին: Նույն նպատակով պատրաստվել և 5000 տպաքանակով հրատարակվել են նաև ԵՊՀ-ն ներկայացնող գունավոր բուկլետներ: Ուղեցույցները և բուկլետները անվճար բաժանվել են հանրապետության հանրակրթական բոլոր հաստատություններին: Կատարելագործվել է Համալսարանի ինտերնետային կայքում դիմորդների հետ տարվող աշխատանքների լուսաբանումը ինչպես հարց ու պատասխանի, այնպես էլ դիմորդի ուղեցույցը կայքում տեղադրելու միջոցով:

Արդեն յոթ տարի անընդմեջ վարչությունը դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար կազմակերպում և անց է կացնում հանրակրթական տարբեր առարկաների գծով օլիմպիադա ԵՊՀ-ում և ՀՀ մարզերում:

Նախորդ տարիների համեմատ մեծացել է մասնակից դպրոցների աշխարհագրությունը, աճել է մասնակիցների թիվը: Հատկանշական է, որ հաշվետու ուստարում օլիմպիադան կազմակերպվել է ՀՀ բոլոր մարզերում, ինչը յուրատեսակ ստուգատես է հանդիսանում բարձր դասարանի աշակերտների համար նախքան միասնական քննություններ հանձնելը, մինևույն ժամանակ նպաստում նրանց մասնագիտության ընտրությանը: ՀՀ 269 դպրոցներից օլիմպիադային մասնակցել է 3010 աշակերտ: Հաղթող են ճանաչվել 465-ը, որոնցից 221-ը արժանացել են I, II, III կարգի դիպ-

լումների, իսկ 244-ը՝ գովասանագրերի (համեմատության համար նշենք, որ 2009 թ-ին օլիմպիադայի մասնակիցների թիվը եղել է ընդամենը 600, իսկ պարզևատրվողներինը՝ 167): Ուրախալի է, որ օլիմպիադայում հաղթած աշակերտների շուրջ 70 %-ը դիմել է ԵՊՀ:

Օլիմպիադան կազմակերպված անկացնելու գործում մեծ լումա ունեն նաև ՀՀ բոլոր մարզերում գործող մեր ներկայացուցչությունները, որոնք շուրջամյա ակտիվ աշխատանքներ են տանում իրենց մարզերի դպրոցներում ԵՊՀ կրթական ծրագրերի և մասնագիտությունների մասին անհրաժեշտ տեղեկատվություն ապահովելու ուղղությամբ:

Դպրոցներում տարվող աշխատանքներն ավելի լայն թափով իրականացնելու համար ս. թ. սեպտեմբերին մենք դիմել ենք ՀՀ կրթության և գիտության նախարարին և նրա միջոցով ՀՀ կառավարությանը՝ Երևանի Լ. Շանթի անվան թիվ 4 հիմնական դպրոցը հանձնելու ԵՊՀ-ին՝ Համալսարանի կազմում հենակետային վարժարան ստեղծելու նպատակով: **Համոզված ենք, որ այն հետագայում հանրապետության նմանատիպ կրթօջախների շարքում կդառնա լավագույններից մեկը:** Հենակետային վարժարանը, գտնվելով ԵՊՀ-ի անմիջական հարևանությամբ, մեծ հնարավորություն կընձեռի առավելագույնս օգտագործելու Համալսարանի լաբորատոր բազան և մարզահամալիրը, ինչպես նաև կապահովի պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվ մասնակցությունը ուսումնական գործընթացին:

Կրթական համակարգի զարգացումների համատեքստում կարևորվում է նաև պետական մասնագիտական քոլեջների շրջանավարտների որակյալ կրթության շարունակականության լուրջ խնդիրների լուծմանն աջակցելը, որն ուղղված է նաև նրանց կրթամակարդակի բարձրացմանը: Ելնելով դրանից, ինչպես նաև դեպի Համալսարան դիմորդների հոսքի պահպանման նպատակով հաշվետու ուստարում ծավալուն աշխատանք է կատարվել ԵՊՀ-ի հետ համագործակցության պայմանագիր ունեցող 16 քոլեջների շրջանավարտների հետ. նրանց ներկայացվել են համալսարանական մասնագիտությունները, շարունակական կրթության և ընդհանուր հիմունքներով բակալավրի ծրագրով բուհ ընդունվելու կարգերը: Արդյունքում, նշված քոլեջներից շարունակական կրթություն ստանալու նպատակով 18 մասնագիտությունների գծով 82 հայտ է ստացվել: Շրջանավարտներից 76 հաջողությամբ հանձնել է տարբերությունները և հրամանագրվել 2-րդ կուրսում:

Ինչպես յուրաքանչյուր տարի, հաշվետու ուստարում ևս ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչությունը առկա և հեռակա ուսուցման համակարգերի դիմորդների համար կատարել է մշտական տեղեկատվական աշխատանք՝ մեծապես օժանդակելով ԵՊՀ 2015 թ. ընդունելության կազմակերպման գործընթացին:

Հաշվետու ժամանակաշրջանում վարչությունը ձգտել է կատարելագործելու նախապատրաստական դասընթացների համակարգը՝ այդ նպատակով ձևավորելով դասընթացների լայն ընտրանի՝ ըստ ընդունելության քննությունների համար նախատեսված կրթական ծրագրերի՝ ապահովելով նաև դրանց իրականացման ճկուն ժամանակացույց:

Ունկնդիրների համար, ըստ ընտրած մասնագիտությունների, ուսուցումը կազմակերպվել է հանրակրթական առարկաներից: Այստեղ դասավանդում են մեր առավել հմուտ և փորձառու դասախոսները: Նախապատրաստական դասընթացների ունկնդիրների մեծ մասը, հաջողությամբ հանձնելով առկա ուսուցման ընդունելության միասնական և կենտրոնացված քննությունները, ընդունվել է ԵՊՀ տարբեր ֆակուլտետներ, իսկ մյուս մասը՝ հեռակա բաժիններ:

4. Ընդունելություն

Հաշվետու ժամանակաշրջանում ևս վերանայվել են առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերը՝ հաշվի առնելով դրանց արդիականությունը և ուսանողների նախասիրությունները: Մասնավորապես, պատմության ֆակուլտետի առկա ուսուցման «Սփյուռքագիտություն» մասնագիտությունում Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հետ համատեղ բացվել է «Հայագիտություն» մագիստրոսական նոր ծրագիրը:

2015/2016 ուստարում ԵՊՀ դիմորդների թիվը առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կազմել է համապատասխանաբար 3568 և 810: Կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում ԵՊՀ բակալավրիատի դիմորդների բաժնեմասը կազմել է 30,4 %:

Հաշվետու ուստարում ԵՊՀ բակալավրիատ ընդունվել է 3060 հոգի (անվճար՝ 411, վճարովի՝ 2649), իսկ մագիստրատուրա՝ 655 (անվճար՝ 412, վճարովի՝ 243): Հարկ է նշել, որ 2011 թ. հանրապետության հանրակրթական դպրոցները շրջանավարտ չեն

ունեցել, ուստի այդ տարի ԵՊՀ բակալավրիատ քիչ թվով դիմորդներ են ընդունվել (725 հոգի), որոնք ավարտել են 2014/2015 ուստարում: Հետևաբար՝ մագիստրատուրա ընդունվածների ցածր ցուցանիշը պայմանավորված է այդ հանգամանքով:

Համալսարանի բակալավրի կրթական ծրագրի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում կազմել է 31 %: ԵՊՀ դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքերում իգական սեռի հաշվեկշիռը կազմել է համապատասխանաբար՝ 66,2 % և 66,9 %:

ԵՊՀ բակալավրիատ դիմել է 64, իսկ մագիստրատուրա՝ 7 օտարերկրյա քաղաքացի: Նրանցից ընդունվել են համապատասխանաբար՝ 50-ը և 6-ը:

2015/2016 ուստարում հեռակա ուսուցման համակարգում դիմորդների թիվը բակալավրիատում կազմել է 522, որից ընդունվել է 437-ը, իսկ մագիստրատուրայում՝ 263, որից ընդունվել է 210-ը:

5. Հիմնական ուսանողական համակազմ և շրջանավարտներ

2014/2015 ուստարում ԵՊՀ առկա ուսուցման համակարգի ուսանողների թվակազմը եղել է 12335, որից 9866-ը՝ բակալավրիատում (այդ թվում՝ 8390-ը վճարովի), 2431-ը՝ մագիստրատուրայում (այդ թվում՝ 1501-ը վճարովի), իսկ 38-ը Միջազգային կրթական կենտրոնի ուսանողներ են:

Հեռակա ուսուցման համակարգում սովորել է 4378 ուսանող, որից 3564-ը՝ բակալավրիատում, իսկ 814-ը՝ մագիստրատուրայում:

Օտարերկրյա ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 337, որից 303-ը՝ առկա ուսուցմամբ, 34-ը՝ հեռակա:

ԵՊՀ հիմնական ուսանողական թվակազմում (16713՝ առանց Իջևանի մասնաճյուղի) մագիստրոսական համակազմի հաշվեկշիռը 19,4 % է, իսկ օտարերկրյա և հեռակա ուսուցման ուսանողներինը՝ համապատասխանաբար 2 % և 26,2 %:

2014/2015 ուստարում Համալսարանը տվել է առկա ուսուցմամբ 2097 շրջանավարտ, որից 834-ը՝ բակալավրի կրթական ծրագրով, 1263-ը՝ մագիստրոսի, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 1218 շրջանավարտ, որից 769-ը՝ բակալավրի կրթական ծրագրով, 449-ը՝ մագիստրոսի: Առկա ուսուցմամբ բակալավրիատը գերազանցության դիպլոմով ավարտել է 58 (6,9 %) շրջանավարտ, մագիստրատուրան՝ 459 (36,3 %): Հեռակա

ուսուցմամբ բակլավրիատը գերազանցության դիպլոմով ավարտել է 9 (1,2 %) շրջանավարտ, իսկ մագիստրատուրան՝ 28 (6,2 %):

6. Դասախոսական կազմ և ուսումնական բեռնվածություն

2014/2015 ուսումնական տարում Համալսարանի հիմնական դասախոսական կազմում եղել է 1259 դասախոս, որից պրոֆեսոր՝ 160 (12,8 %), դոցենտ՝ 472 (37,4 %), ասիստենտ և դասախոս՝ 627 (49,8 %): Այդ կազմի 68,7 %-ն ունի գիտական աստիճան: Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը կազմել է 56,4 %:

Ինչպես և նախորդ տարիներին, իրականացվել է ԵՊՀ դասախոսական կազմի երիտասարդացման գործընթաց, մասնավորապես՝ բարձր տարիքի դասախոսների ուսումնական բեռնվածության նվազեցման և դասավանդման գործընթացում երիտասարդ դասախոսների ներգրավման միջոցով: Հաշվետու ուստարում դասախոսական կազմը համալրվել է 6-23 նոր դասախոսներով, որոնցից 3-ը՝ ԵՊՀ ասպիրանտուրայից: Հիմնական դասախոսական կազմում մինչև 35 տարեկան դասախոսների թիվը կազմել է 229, 35-65 տարեկաններինը՝ 790, իսկ 65-ից բարձր՝ 240:

Լրիվ հաստիքային համարժեքով ուսանող/դասախոս հարաբերակցությունը 2014/2015 ուստարում կազմել է 13,5 (նախորդ ուստարում եղել է 13):

7. Դասախոսների որակավորման բարձրացում և մասնագետների վերապատրաստում

ԵՊՀ-ում կրթության զարգացման ռազմավարության շրջանակներում որոշակի դեր է հատկացված նաև լրացուցիչ ուսումնառությանը: Համալսարանում Բոլոնիայի գործընթացի այս կարևոր ուղղության հետևողական կատարելագործումը դարձել է մեր բուհի մրցակցային առավելություններից մեկը: ԵՊՀ-ն համալսարանական բազմաստիճան կրթության պայմաններում հարատև ուսումնառությունը դիտում է որպես բարձրագույն կրթության մակարդակների ինտեգրման և կրթության որակի ապահովման գործոն:

Լրացուցիչ կրթության զարգացումը ԵՊՀ-ում ավանդաբար ունի երկու ուղղվածություն՝ սեփական մարդկային ռեսուրսների կատարելագործում և հասարակայնության կրթական պահանջմունքների բավարարում: Դրանով պայմանավորված՝ Հա-

մալսարանում իրականացվում է լրացուցիչ կրթության երկու ծրագիր՝ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացում և մասնագիտական վերապատրաստում:

Առաջին ծրագիրը ԵՊՀ-ում լրացուցիչ կրթության համակարգի կայացման երաշխիքն է: Նաև դա է պատճառը, որ Համալսարանում այն անընդհատ կատարելագործվում է: 2011 թվականից ԵՊՀ-ում մեկնարկել է կրեդիտային համակարգով պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիրը, որի բովանդակային և կառուցվածքային առանձնահատկությունները խոստումնալից էին:

1. Առաջին անգամ նման ծրագիրը ներառում էր երկու կառուցամաս՝ կրթական և գիտական: Այս պահանջը մեծապես նպաստել է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի հետազոտական-մեթոդական գործունեության ակտիվացմանը:

2. Հաշվառվում էին դասախոսի՝ նաև հիմնական ծրագրից դուրս ձեռք բերած կրեդիտները: Այսինքն՝ դասախոսը հնարավորություն ուներ ոչ միայն կուտակելու, այլև փոխանցելու իր վաստակած կրեդիտները:

3. Կրեդիտային համակարգի շնորհիվ դասախոսը հնարավորություն էր ստանում անհատական ծրագրով ձեռք բերելու մասնագիտական և մանկավարժական կոմպետենցիաներ՝ իր համար առավել հարմար ժամկետում: Պետք է ասել, որ անհատական ծրագրով աշխատելը ԵՊՀ հիմնական դասախոսական կազմին (շուրջ 900 մարդու) հնարավորություն տվեց լիարժեքորեն ընդգրկվելու ծրագրում:

Ամփոփելով ծրագրի քառամյա արդյունքները՝ համահամալսարանական մակարդակով ուսումնական գործընթացում լուրջ ներդրում պետք է համարել դասախոսների ձեռքբերումները՝ համակարգչային գրագիտություն, անգլերենի որոշակի իմացություն, դասավանդման ժամանակակից մեթոդների յուրացում, մասնագիտության արդի հիմնախնդիրների տիրապետում և այլն: Այս առումով ծրագիրը որոշակիորեն նպաստավոր էր նաև փորձառու և երիտասարդ սերնդի դասախոսների փոխհասկացման ու գիտելիքների փոխանցման համար: 4 տարվա արդյունքում դասախոսական կազմի կեսից ավելին (շուրջ 460 մարդ) արդեն մոտ է ծրագրի ավարտին:

Գնահատելով հանդերձ հետբուհական լրացուցիչ կրթության վարչության և ֆակուլտետների համատեղ աշխատանքը՝ միաժամանակ պետք է նշել, որ կան նաև լուրջ թերացումներ, որոնցից մասնավորապես պետք է նշել հետևյալը.

1. Ֆակուլտետների և ամբիոնների անհամաչափ ընդգրկվածությունը,
2. Անգլերենի իմացության դեռևս ոչ բավարար մակարդակը,
3. Հետազոտական գործունեության համեստ արդյունքները (շուրջ 280 դասախոս դեռևս որևէ աշխատանք չի ներկայացրել):

Ծրագիրը մշտապես գտնվում է Համալսարանի ղեկավարության ուշադրության կենտրոնում, արդյունքների վերաբերյալ յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվություն է ներկայացվում գիտխորհրդին: Մշտադիտարկման արդյունքում անհրաժեշտ փոփոխություններ ու լրացումներ են կատարվել ծրագրային փաստաթղթերում: Ռեկտորի հրամանով ԵՊՀ ստորաբաժանումներին համապատասխան հանձնարարականներ են տրված՝ ապահովելու իրենց դասախոսական համակազմի կողմից ծրագրի կատարումը:

Լրացուցիչ կրթության երկրորդ ծրագիրը մասնագիտական վերապատրաստումն է: Հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային ծրագրերում ԵՊՀ առավելագույն ներգրավումը ապահովելու նպատակով վարչությունը շարունակել է հարատև կրթության ծրագրերի իրականացումը 2 հիմնական ուղղությամբ՝ հանրային ծառայողների և հոգեբանների մասնագիտական վերապատրաստում: Առաջինը կոչված է ապահովելու համալսարան-պետական կառույցներ կապը, երկրորդը՝ համալսարան-հասարակություն կապը: ԵՊՀ-ում են վերապատրաստվել ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի, ՀՀ պաշտպանության նախարարության և պետական այլ կառույցների աշխատակազմերի շուրջ 400 հանրային ծառայող և զինծառայող՝ 7 մասնագիտական կրթական ենթածրագրերով, այդ թվում՝ ԵԱՀԿ-ի հետ համագործակցությամբ:

«Հոգեբանություն» մասնագիտությամբ վերապատրաստման ծրագիրը, որը գործառում է 1991-ից, մեծ պահանջարկ ունի հարափոփոխ հասարակության կողմից: Ծրագիրը նորացվել և վերակազմակերպվել է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքներում 2014-ին կատարված փոփոխություններին համահունչ:

Լրացուցիչ կրթության ոլորտում մեր ձեռքբերումները պայմանավորված են ԵՊՀ նախաձեռնողականությամբ և հետևողական աշխատանքով: Սակայն, ի հակադրություն բարձրագույն կրթության, լրացուցիչ ուսումնառության համակարգը իր զարգացմամբ հետ է մնում՝ օրենսդրական անկատարության և կրթաշուկա-աշխատա-

շուկա մեզանում դժվար ձևավորվող հարաբերությունների պատճառով: Այստեղ անելիք ունեն ն' պետական կառավարման մարմինները, ն' գործատուները, ն', իհարկե, բուհերը: Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության և ֆակուլտետների համատեղ աշխատանքը այս առումով անբավարար է:

8. Տեղեկատվական ռեսուրսների զարգացում

2014/2015 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում շարունակվել են աշխատանքները տեղեկատվական արդի տեխնոլոգիաների մշակման, ներդրման և գործարկման ուղղությամբ: Այս առումով լայնածավալ գործունեություն է իրականացրել Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնը (ՏՏԿՀ):

Շարունակվել են գործընթացները նոր կրթական տեխնոլոգիաների օգտագործման և մշակման, ՏՏ բնագավառում մագիստրոսական կրթական ծրագրերի և առանձին դասընթացների իրականացման, գիտահետազոտական աշխատանքների կատարման, համալսարանական կրթության կառավարման և որակի ապահովման, տեղեկատվական համակարգերի մշակման և ներդրման ուղղությամբ:

Ստացվել է ԱՄՆ երկու արտոնագիր էլեկտրոնային սարքերի և համակարգերի թեստավորման բնագավառում:

«Բաց հասարակության հիմնադրամ» ԲՀԻ N-18293 դրամաշնորհի շրջանակում մշակվել և իրականացվել են առցանց ուսուցման հետևյալ դասընթացները՝ «Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ», «Ժամանակակից բնագիտության հիմունքներ», «Բնապահպանություն»՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) հետ համատեղ, «Բժշկական էկոլոգիա»՝ Երևանի պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) հետ համատեղ: Առաջին երկու դասընթացները ներդրվել են ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, ռադիոֆիզիկայի, ռուս բանասիրության, սոցիոլոգիայի, փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետներում, երրորդը՝ ՀԱՊՀ-ում, չորրորդը ներդրվել է ԵՊԲՀ-ում:

Նախապատրաստվում է դասընթացների ներդրումը ԵՊՀ հեռակա ուսուցման համակարգի բոլոր կրթական ծրագրերում:

Շարունակվել և ընթացքի մեջ են աշխատանքները ծրագրային գործիքների մշակման ուղղությամբ հեռախոսների, թափլետների և այլ շարժական սարքերի միջոցով դասընթացների հասանելիության համար, ինչպես նաև մշակվում են միջհամալսարանական էլեկտրոնային կուրսերի կիրառման և կրեդիտների փոխանցման մեխանիզմներ: Իրականացվում են աշխատանքներ Համացանցային համալսարանի ենթակառուցվածքի՝ միջազգային չափորոշիչներին հարմարեցման ուղղությամբ: Շարունակվում է մուլտիմեդիա հարթակի վրա ստեղծված մեդիա էլեկտրոնային գրքերի շարքի մշակումը:

Համացանցային համալսարանի և Հայաստանի շախմատի ակադեմիայի հետ համատեղ ընդլայնվել և հարստացվել է սկսնակ մակարդակի երկու մասերից կազմված շախմատի ռազմավարության էլեկտրոնային անիմացիոն առցանց դասընթացը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից մշակված դասագրքերի հիման վրա: Մեկնարկել է նախապատրաստական աշխատանքը ուսուցման հաջորդ մակարդակի համար:

Սփյուռքի լսարանի համար թեմատիկ մասնագիտական կրթություն ապահովելու նպատակով, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հետ համատեղ, մեկնարկել է նախապատրաստական աշխատանքը հայագիտության հետ կապված այլ դասընթացների մշակման ուղղությամբ:

9. Պլանավորում և կառավարում

Հաշվետու ուսումնական տարին ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի (ՌԾ) իրականացման համար եզրափակիչ ժամանակահատված էր: Նկատի առնելով այդ փաստը՝ պատրաստվել և հրատարակվել է նշված ՌԾ-ի իրականացման վերաբերյալ զեկույց, որը քննարկվել է ԵՊՀ գիտական խորհրդում և ներկայացվել ԵՊՀ խորհրդին:

Միաժամանակ, լայնամասշտաբ աշխատանք է կատարվել ԵՊՀ զարգացման նոր ռազմավարական ծրագրի մշակման ուղղությամբ: Մասնավորապես՝ ԵՊՀ ռեկտորի հրամաններով կազմվել և հաստատվել են ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքները համակարգող հանձնաժողովը՝ ռեկտորի նախագահությամբ (Հր. N 92§37, 23.05.2014 թ.) և 9 աշխատանքային խմբերը՝

համապատասխան պրոռեկտորների ղեկավարությամբ (Հր. N 94§1, 27.05.2014 թ.): Մշակվել և ռեկտորի կողմից 2014 թ. հուլիսի 3-ին հաստատվել է նաև ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքների ժամանակացույցը:

Համակարգող հանձնաժողովի կազմում և 9 աշխատանքային խմբերում ընդգրկվել են Համալսարանի տարբեր ստորաբաժանումների վարչական աշխատողներ, դասախոսներ և ուսանողներ: Նրանցից ոմանք նման աշխատանքի փորձ արդեն իսկ ունեցել են, քանի որ ընդգրկված են եղել նախորդ ՌԾ-ի մշակման աշխատանքներում, ինչպես նաև ԵՊՀ ինքնագնահատման զեկույցի պատրաստման և բարելավման գործողությունների ծրագրի մշակման գործընթացներում:

2014 թ. հուլիսի 9-ին տեղի ունեցավ նոր ՌԾ-ի մշակման աշխատանքների մեկնարկման հարցով անդրանիկ նիստը՝ ԵՊՀ ռեկտորի նախագահությամբ և համակարգող հանձնաժողովի ու աշխատանքային խմբերի բոլոր անդամների մասնակցությամբ: Քննարկվեցին ՌԾ մշակման աշխատանքների կարևորությանը, իրականացման գործընթացների կազմակերպմանը, փուլային աշխատանքներին վերաբերող հարցեր, ներկայացվեց նշված աշխատանքների ժամանակացույցը, տրվեցին համապատասխան հանձնարարականներ:

Այնուհետև՝ անցած ողջ ժամանակահատվածում, ըստ հաստատված ժամանակացույցի, համապատասխան պրոռեկտորների ղեկավարությամբ աշխատանքային խմբերում իրականացվել են ծավալուն և հետևողական աշխատանքներ: Կայուն պարբերականությամբ տեղի են ունեցել աշխատանքային խմբերի հանդիպումները ղեկավար պրոռեկտորների հետ, որոնց ընթացքում քննարկվել են ոլորտային պլանավորման աշխատանքների արդյունքները, անհրաժեշտության դեպքում դրանք լրամշակվել կամ փոփոխվել են, այնուհետև ներկայացվել համակարգող հանձնաժողովի դիտարկմանը: Համակարգող հանձնաժողովը նույնպես պարբերաբար հրավիրել է նիստեր, քննարկել իրականացված աշխատանքների արդյունքները, կատարել լրացումներ, դիտողություններ, շտկումներ:

Ամփոփելով ԵՊՀ զարգացման 2016-2020 թթ. ռազմավարական ծրագրի մշակման ուղղությամբ կատարված աշխատանքները՝ նշենք, որ իրոք քրտնաջան ու հետևողական աշխատանքի շնորհիվ նախատեսված ժամկետներում իրականացվել են բոլոր անհրաժեշտ գործընթացները: Մասնավորապես՝

- Ուսումնասիրվել և բացահայտվել են ԵՊՀ գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները, կազմվել է ԵՊՀ SWOT-ը:
- Մշակվել է ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի նախագիծը, որը ներառում է Համալսարանի առաքելությունը, տեսլականը, հիմնարար արժեքները, ռազմավարական նպատակները, դրանց իրականացման խնդիրները և համապատասխան գործողությունները, ինչպես նաև առաջընթացի գնահատման ցուցիչները:
- Կազմվել է ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանի նախագիծը, որտեղ մատնանշված են յուրաքանչյուր գործողության կամ միջոցառման իրականացման ժամանակացույցը, պատասխանատուները, պահանջվող ֆինանսական միջոցները և ակնկալվող արդյունքները:
- Առաջին անգամ ԵՊՀ ռազմավարական պլանավորման պատմության մեջ կազմվել է ԵՊՀ ռազմավարական ծրագրի բյուջեի նախագիծը, ինչն իրատեսական հիմք է ստեղծում ՌԾ-ի հաջող իրականացման համար:
- ՌԾ-ի նախագիծը առաքվել է ԵՊՀ բոլոր ներքին շահակիցներին՝ վարչական կառույցներին և ֆակուլտետներին՝ քննարկական և առաջարկությունների ու դիտողությունների ներկայացման համար, ինչպես նաև տեղադրվել է ԵՊՀ կայքում՝ արտաքին շահակիցներին նույնպես հնարավորություն տալով ծանոթանալու նախագծին: Ստացված առաջարկները հաշվի են առնվել վերջնական նախագծի կազմման համար:

Նշենք, որ նոր ՌԾ-ի նախագիծն արժանացել է ԵՊՀ գիտական խորհրդի հավանությանը և երաշխավորվել է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի հաստատմանը ներկայացնելու:

* * *

Ընդհանրացնելով հաշվետու ուստարում ԵՊՀ կրթական գործունեության արդյունքները՝ պետք է փաստել, որ ձեռքբերումները, իրոք, զգալի են: Բայց միննույն ժամանակ հարկ է նշել, որ այս ասպարեզում բացթողումներ ու թերացումներ ևս եղել են: Մասնավորապես՝

- Նկատելի են թերացումները որակի ներքին մշակույթի ձևավորման գործում՝ պայմանավորված ՈԱ գործընթացներում ֆակուլտետների և ամբիոնների ներգրավվածության ցածր մակարդակով:
- Մի շարք գործընթացներում դեռևս ամբողջովին չի իրականացվում որակի կառավարման պլանավորում-իրագործում-գնահատում-բարելավում շրջափուլը:
- Որակի ապահովման ոչ բոլոր ընթացակարգերն են լիովին գործում, մասնավորապես՝ ուսանողների գնահատման, ուսումնառության ռեսուրսների և օժանդակ ծառայությունների ոլորտներում:
- Դեռևս չեն գործում կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական գնահատման գործընթացները:
- Օրակարգային խնդիր է մնում ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների արդյունավետության գնահատման համակարգի ներդրումը:
- Մտահոգիչ է նաև այն, որ ԵՊՀ դասախոսների զգալի մասը դեռևս չունի կրթական վերջնարդյունքների վրա հիմնված դասընթացների և այլ ուսումնական մոդուլների մշակման և իրականացման կարողություն:
- Դեռևս չեն գործում դասախոսների ինքնագնահատման և անմիջական դեկավարի ու գործընկեր դասախոսների գնահատումների մեխանիզմները, ուստի դասախոսական կազմի գնահատումը հիմնված է միայն ուսանողական հարցումների արդյունքների վրա:
- Բացակայում է սկսնակ դասախոսների մենթորության համակարգը:
- Առաջնային է նաև դասախոսական կազմի բավարար վարձատրության հարցը, քանի որ այն դեռևս չի հասել ցանկալի մակարդակին՝ պայմանավորված ցածր պետական ֆինանսավորմամբ և ուսման ցածր վարձաչափերով:
- Բարելավման և ակտիվացման կարիք ունեն ԵՊՀ կարևորագույն արտաքին շահակիցներին՝ նախկին շրջանավարտներին, հիմնական գործատու կազմակերպություններին և աշխատաշուկայի ներկայացուցիչներին կրթական ծրագրերի մասնագիտական փորձաքննության գործընթացներում ներգրավելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2014/2015 ուսումնական տարում ԵՊՀ-ն արդյունավետ գործունեություն է ծավալել նաև գիտահետազոտական աշխատանքների բնագավառում: Ընդլայնվել է համալսարանականների ընդգրկվածությունը գիտական նոր ծրագրերում, մասնակցությունը մրցույթներին ու դրամաշնորհներին:

Գիտական աշխատանքները հիմնականում ընթացել են երեք ուղղությամբ՝ պետական բազային («Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում»), թեմատիկ և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում: Բազային ծրագրերի ոլորտում լուրջ ձեռքբերում էր ԵՊՀ-ում 4 նոր գիտահետազոտական լաբորատորիաների ստեղծումը:

Հաշվետու ժամանակաշրջանում գիտահետազոտական գործունեություն է իրականացվել Հայագիտության հետազոտությունների ինստիտուտում, 41 գիտահետազոտական կենտրոններում և գիտահետազոտական լաբորատորիաներում: 2015 թվականի դրությամբ՝ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտից բացի՝ ԵՊՀ-ում գործում է նաև Կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտը, 36 գիտահետազոտական կենտրոն և լաբորատորիա:

ԵՊՀ գիտական ստորաբաժանումներում կատարված աշխատանքների արդյունքներն ու ձեռքբերումները ներկայացված են 2015 հոդվածներում, 95 մենագրություններում: Բազմաթիվ գիտնականներ մասնակցել են միջազգային և տեղական տարբեր գիտաժողովների՝ ներկայացնելով 359 թեզիս:

Ուրախալի է, որ հաշվետու տարում նույնպես Համալսարանի մի շարք աշխատողներ գիտության բնագավառում ակնառու ձեռքբերումների համար արժանացել են պետական պարգևների և պատվավոր կոչումների: Այսպես, տեխնիկական գիտությունների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառում ՀՀ Նախագահի մրցանակի են արժանացել Հակոբ Մարգարյանը, Նունե Հակոբյանը, Դավիթ Հովհաննիսյանը, Տիգրան Մարգարյանը, Վալերի Աբրահամյանը՝ «Նոր սերնդի օպտիկական տարրի հիման վրա ստեղծված սպեկտրաբևեռաչափ» աշխատանքի համար: Ֆիզիկայի բնագավառում ՀՀ Նախագահի մրցանակի արժանացել են Խաչատուր Ներկարարյանը, Արսեն Բաբաջանյանը՝ «Մակերևութային պլազմոն պոլյարիտոնների գրգռման և տարածման առանձնահատկությունները նանոկառուցվածքներում» գիտական հոդված-

ների շարքի համար: ՀՀ գիտության վաստակավոր գործչի կոչման են արժանացել Արամ Միմոնյանը, Արծրուն Ավագյանը, Սամվել Մուրադյանը: ՀՀ վաստակավոր մանկավարժի կոչում շնորհվել է Նազիկ Հարությունյանին, Գևորգ Քիլիմջյանին: «Մովսես Խորենացի» մեդալով պարգևատրվել են Էդիկ Մինասյանը, Սերյոժա Գալստյանը, Մագդալինա Ջանփոլադյանը:

Կարևոր է նշել նաև ԵՊՀ աշխատողների մասնակցությունը խոշոր գիտական նախագծերին, ինչպիսին է «Հորիզոն 2020»-ը: Չնայած որ ՀՀ-ն նշված նախագծի կոնսորցիումի անդամ չէ, այդուհանդերձ ԵՊՀ մի շարք գիտաշխատողներ մասնակցում են Նախագծի ծրագրերին՝ որպես գործընկեր՝ խթանելով համաշխարհային առաջատար գիտական կառույցների հետ համագործակցությունը: Բացի վերը նշվածից՝ ԵՊՀ-ում 2014/2015 ուստարում շարունակվել են նաև ՆԱՏՕ-ի կողմից ֆինանսավորվող թվով 2, ՄԳՏԿ-ի կողմից՝ 1, Volkswagenutiftung-ի կողմից՝ 1, ԵԱՀԿ-ի կողմից՝ 1 գիտական ծրագրերը:

- Պինդմարմնային գազային սենսորներ անվտանգության համար և ռազմական սպառնալիքների դեմ (NATO ISEG.EAP.SFPP 984597): Ղեկավար՝ Վ. Մ. Հարությունյան (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ)
- Ատոմակայանի ետվթարային ժամանակահատվածում շրջակա միջավայրի արդյունավետ մոնիթորինգի մեթոդի մշակում կենսաթաղանթների կառուցվածքային փոփոխությունների ուսումնասիրության միջոցով (MHTI/ISTC դրամաշնորհ, A-2089): Ղեկավար՝ Հ. Գ. Բադալյան (Ֆիզիկայի ֆակուլտետ)
- Բիոսենսորների նախագծում ածխածնային նանո խողովակների օգտագործման միջոցով (NATO, Science for Peace, 110116): Ղեկավար՝ Ե. Շ. Մամասախլիսով (Ֆիզիկայի ֆակուլտետ)
- Միաթել և երկթել կենսաբանական մոլեկուլների հավասարակշիռ և ոչ հավասարակշիռ վարքագիծը (Volkswagenstiftung, 85 927): Ղեկավար՝ Ե. Շ. Մամասախլիսով (Ֆիզիկայի ֆակուլտետ)
- Աջակցություն Կառավարությանն ու քաղաքացիական հասարակությանը շրջակա միջավայրի խնդիրների լուծման գործընթացներում (OSCE project UB 4200655): Ղեկավար՝ Ռ. Ս. Մովսեսյան (Կայուն զարգացման կենտրոն)

2014/2015 ուստարում իր գործունեությունն է շարունակել Կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնը, որտեղ առկա գերժամանակակից սարքավորումները հնարավորություն են տալիս իրականացնել մի շարք բարձրակարգ հետազոտություններ ինչպես բջջային, այնպես էլ մոլեկուլային մակարդակով: Միաժամանակ, ԵՊՀ-ում իրականացվում են 3 Start up լաբորատորիաների ստեղծման աշխատանքները, և շուտով մենք կունենանք հարթակ, որտեղ հնարավոր կլինի իրականացնել Start up ծրագրեր:

* * *

Հարկ է նշել, որ դրամաշնորհային (թեմատիկ, հայ-բելառուսական, հայ-ֆրանսիական, հայ-գերմանական և երիտասարդ գիտնականների) ծրագրերի շրջանակներում ստացված արդյունքների գիտական ու գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը գնահատելու համար գիտական փորձաքննության են ներկայացվել վերջիններիս հաշվետվությունները:

ԵՊՀ-ում 2014 թվականին շարունակվել են հայ-գերմանական 3 և «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2013» 9 դրամաշնորհային ծրագրերը, իսկ 2014 թվականից գործում են 1 նպատակային, 8 հայ-ռուսական, 3 հայ-բելառուսական, 1 հայ-ֆրանսիական և 8 «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2014» դրամաշնորհային ծրագրերը: 2015 թվականից ավելացել է հայ-ռուսական 6 դրամաշնորհային ծրագիր: Ընդհանուր առմամբ, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված դրամաշնորհային ծրագրերի մրցութային շեմը հաղթահարած ծրագրերի 26 %-ից ավելին բաժին է ընկնում Երևանի պետական համալսարանին, իսկ բուհերի կողմից մրցութային շեմը հաղթահարած ծրագրերում այդ մասնաբաժինը կազմում է մոտ 51 %: Այսօր ԵՊՀ գիտաշխատողների թիվը 478 է, որոնցից 114-ն ընդգրկված են նաև պետական դրամաշնորհային ծրագրերում: ԵՊՀ աշխատողներից և սովորողներից ևս 144-ը նույնպես ընդգրկված են պետական դրամաշնորհային ծրագրերում:

Գիտակազմակերպական բաժնի կողմից շարունակաբար կազմակերպվում են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրերի» թափուր պաշտոնների

համար մրցույթներ: Հաշվետու ժամանակաշրջանում բաժնի անմիջական աջակցությամբ ձևակերպվել և պետական գրանցում է ստացել 5 արտոնագիր, որից 2-ը՝ ֆիզիկայի բնագավառում, 3-ը՝ երկրաբանության: Աշխատանքներ են տարվել «Եվրասիական արտոնագրային տեղեկատվական բազայից» ԵՊՀ-ի գիտահետազոտական ստորաբաժանումների ազատ օգտվելու ուղղությամբ:

Տարին նշանակալից է եղել նաև գիտական միջոցառումների տեսանկյունից: Կազմակերպված և իրականացված գիտաժողովներից կարելի է առանձնացնել հետևյալները՝ «Հայ-գերմանական հարաբերությունների 100-ամյա հոբելյանը» (ԵՊՀ, 18-19 սեպտեմբերի, 2014 թ.), «Արդիականության պարադոքսներ: Փիլիսոփայական և հոգեբանական անդրադարձներ» (ԵՊՀ, 10-12 հոկտեմբերի, 2014 թ.), «Մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրները», (Ծաղկաձոր, 17-18 հոկտեմբերի, 2014 թ.), «Բնագիտությունը 21-րդ դարում. ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ» (ԵՊՀ, 15-17 նոյեմբերի, 2014 թ.), «Բյուջետային եկամուտների և ծախսերի կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (ԵՊՀ, 21-23 նոյեմբերի, 2014 թ.), «Աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնախնդիրները (նվիրված՝ ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 80-ամյա հոբելյանին)» (ԵՊՀ, 10-11 դեկտեմբերի, 2014 թ.), «Ինտեգրվող համակարգերը և սիմետրիաները» չորրորդ միջազգային դպրոց (Ծաղկաձոր, 6-11 հուլիսի, 2015 թ.), IX միջազգային գիտաժողով՝ «Քվանտային տեսություն և սիմետրիա» (ԵՊՀ, 13-18 հուլիսի, 2015 թ.):

2014/2015 ուստարում գիտակազմակերպական բաժնի կողմից շարունակվել են աշխատանքները ԵՊՀ ողջ գիտական և վերջինիս օժանդակ աշխատակազմի կադրային գործերի վարման թվայնացման ուղղությամբ:

* * *

Հաշվետու ժամանակահատվածում իր ակտիվ գործունեությունն է շարունակել Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը (ՀՀԻ): 2014/2015 ուստարում ինստիտուտը հրատարակել է 14 մենագրություն, 81 գիտական հոդված, 7 զեկուցումների թեզիս և 62 քարտեզ: Արդեն հրատարակության է ներկայացվել շուրջ մեկ տասնյակ մենագրություն: Ինստիտուտի գիտաշխատողները մասնակցել են հանրապետական և միջազգային՝ հայագիտական ուղղվածության բազմաթիվ գիտաժողովների, կլոր սեղանների:

Հաշվետու ժամանակահատվածում համալրվել են ինստիտուտի հայագիտական կայքերը (1 պաշտոնական և 7 թեմատիկ). արդյունքում ընդհանուր առմամբ տեղադրված են 1000 գիրք, 590 գիտական հոդված, ավելի քան 2500 գիտահանրամատչելի հանրագիտարանային հոդված, 190 քարտեզ, 120 արխիվային փաստաթուղթ: Առկա են նաև, որպես օժանդակ միջոց ծառայող, բազմաթիվ պատմական լուսանկարներ (2400) և տեսանյութեր:

Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը համալսարանական և արտահամալսարանական կամավորների հետ վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժնին կից շարունակում է իրականացնել «Հայ ազգ» էլեկտրոնային հանրագիտարանի հայերեն տարբերակի խմբագրությունը (<http://am.hayazg.info>): Ինստիտուտն իր գործունեությունը շարունակում է Սփյուռքի առավել հոծ հայկական համայնքներում՝ հայագիտական հետազոտական, կրթական ծրագրերի իրականացմամբ: Որպես օրինակ՝ կարելի է առանձնացնել Ռուսաստանի Դաշնության «Նոր Նախիջևան» հայկական համայնքին կից գործող Հայագիտական կենտրոնի հետ վերջին շրջանում հստակեցրած աշխատանքները, որի արդյունքում հրատարակվել է 2 ուսումնասիրություն: ՀՀԻ «Հայագիտության հարցեր» հանդեսի 2015 թ. 2-րդ համարն ամբողջությամբ նվիրված է «Հայագիտությունը Ռուսաստանում» թեմային: Լիբանանի հայկական կրթամշակութային մեկ տասնյակից ավելի կառույցների հետ գործակցությունը շարունակելով՝ ՀՀԻ աշխատողները պարբերաբար ուսումնամեթոդական օժանդակություն են ցուցաբերում տեղի հայկական կրթօջախներին: Մինչև տարեվերջ նախատեսվում է ավարտին հասցնել Սոչիի հայկական համայնքին կից Հայագիտական կենտրոնի բացումը, որը կտեղակայվի Ադլեր քաղաքում: Ռյազանի պետական համալսարանում նախապես կատարված աշխատանքների արդյունքում որպես հարակից առարկա արդեն գործարկվել է հայոց լեզվի դասավանդումը. ընթանում են առաջին խմբի հավաքագրման աշխատանքները, և գալիք տարում կսկսվի առարկայի դասավանդման գործընթացը:

* * *

ԵՊՀ առաջնահերթ խնդիրներից մեկը երիտասարդ գիտական կադրային ներուժի կայացման գործին նպաստելն է: Այդ առումով կարևորվում է ուսումնասիրատուրայում, որն իրականացվում է կրեդիտային համակարգով, առկա և հեռակա ձևե-

րով: 2014 թ. առկա ուսուցմամբ ասպիրանտուրա անվճար հիմունքով ընդունվել է 36 հոգի, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 56 հոգի անվճար և 2-ը՝ վճարովի հիմունքներով:

Կրեդիտային համակարգի պահանջներից ելնելով՝ կազմվել է շուրջ 30 ասպիրանտական ծրագիր: Բոլոր ասպիրանտների և հայցորդների համար կրեդիտային համակարգով կազմակերպվում են դասընթացներ, ինչպիսիք են՝ «Գիտության փիլիսոփայություն», «Ակադեմիական գրագրություն (անգլերեն)», «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Մասնավարժություն և հոգեբանություն» և այլն: «Ինֆորմատիկա» առարկայից նույնպես կազմակերպվում են դասընթացներ՝ որակավորման ստուգարք հանձնելու համար: Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բաժնի կողմից կազմակերպվում են աշնանային և գարնանային քննաշրջաններ: 2014 թ. գարնանային քննաշրջանում քննություն են հանձնել 435 հայցորդ և ասպիրանտ՝ 55 մասնագիտությամբ: Նույն տարվա աշնանային քննաշրջանում քննություն են հանձնել 294 հայցորդ և ասպիրանտ՝ 61 մասնագիտությամբ: 2014 թ. առկա ուսուցմամբ ասպիրանտուրան ավարտել է 40 հոգի, հեռակա ուսուցմամբ՝ 60-ը:

2015 թ. գարնանային քննաշրջանում քննություն են հանձնել 190 հայցորդ և ասպիրանտ՝ 65 մասնագիտությամբ: Աշնանային քննաշրջանի քննությունների համար գրանցվել են շուրջ 90 ասպիրանտ և հայցորդ:

* * *

Հաշվետու ուստարում գիտահետազոտական ոլորտում առկա հաջողությունների, լուրջ ձեռքբերումների կողքին, անշուշտ, հարկ է նշել նաև որոշակի բացթողումներ և թերություններ: Մասնավորապես՝

- Դեռևս զգալի է ժամանակակից փորձարարական բազայի/սարքավորումների պակասը բնագիտական հետազոտություններ կատարող մի շարք լաբորատորիաներում:
- Ոչ լիարժեք են հետազոտական ծրագրերի կատարման մոնիթորինգի և արդյունքների գնահատման ներքին ընթացակարգերը և չափանիշները:
- Գիտական մշակումները և դրանց արդյունքի առևտրայնացումը դեռևս լուրջ ֆինանսական մուտքեր չեն ապահովում, ցածր է պետական ֆինանսավորման մակարդակը:

- Թերի է զարգացման ծրագրերի ֆինանսավորումը, քանի որ ֆինանսական միջոցների գերակշիռ մասն ուղղվում է աշխատավարձի ֆոնդ և ուսումնական գործընթացի ռեսուրսային ապահովվածությանը:
- Մահմանափակ է հետազոտական աշխատանքներում ներգրավված դասախոսների և ուսանողների թիվը:
- Թեև պարբերաբար հիշատակվում է, որ հետազոտությունը կրթության մեջ ուսումնառության հիմնական մեթոդը պետք է լինի, այնուհանդերձ, այդ գաղափարը դեռևս հստակորեն չի կիրառվում: Մինչդեռ ուսանողներին հետազոտական գործունեության նախապատրաստելը պետք է բոլոր կրթական ծրագրերի բաղկացուցիչ մասը կազմի:

ՄԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Համալսարանի գիտաուսումնական գործունեության մեջ իր կարևոր տեղն ունի նաև գրադարանը, որի հիմնական գործառույթն է համալսարանականներին ապահովել ժամանակակից պահանջներին համահունչ գրական տեղեկատվությամբ: Տեղեկատվական հասարակության արդի դարաշրջանի գրադարանի խնդիրն է ոչ միայն կատարելագործել աշխատափուլերի ավանդական եղանակները, այլև, համաշխարհային տեղեկատվական տարածքում ինտեգրվելու միտումով, շարունակաբար ներդնել զարգացած տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները, առավել մատչելի և դյուրին դարձնել տեղեկույթի կրիչներից օգտվելու գործընթացը: Ուստի գրադարանային գործում շարունակում են կարևոր մնալ ինչպես գրական պաշարների նպատակային համալրումը, մշակումը, համակարգումը, պահպանումն ու սպասարկումը, մատենագիտական ցանկերի կազմումը, այնպես էլ աշխատափուլերի ավտոմատացումը, էլեկտրոնային պաշարների հարստացումը մատենագիտական գրառումներով ու գրականության թվայնացված տարբերակներով, գրադարանի ամբողջ տարածքում ազատ ինտերնետային անլար կապի (WIFI) ապահովումը:

Հաշվետու ուստարում գրադարանային ֆոնդերի համալրումը, լինելով նպատակային, միտվել է հնարավորինս բավարարելու Համալսարանի ուսումնական ծրագրերի և գիտական գործընթացի պահանջները: Հաշվառվել, մշակվել, թղթային և էլեկտրոնային գրացուցակներում քարտագրվել ու գրադարանի պահոցներ են մուտք գործել շուրջ 12.500 միավոր հայերեն, ռուսերեն, օտարալեզու գիտական, ուսումնական և գեղարվեստական գիրք (մոտ 8070 միավոր), աստենախոսություն, պարբերական: Համալրման հիմնական աղբյուրները, ինչպես նախորդ տարիներին, եղել են դրամական փոխանցումները, միջազգային գրքափոխանակությունը, ԵՊՀ տպագրատունը: Ֆոնդերի հարստացմանը նպաստել են նաև Բոննի, Ռոստոկի, Կալիֆոռնիայի, ԱՄՆ Կոնգրեսի գրադարանների, ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, Գերմանական գիտահետազոտական կենտրոնի, Միջազգային դրամական ֆոնդի և JDP ամսագրերի տարածման կենտրոնի օժանդակությամբ ձեռք բերված գրականությունը, կորցրած գրքերի փոխարեն արված փոխհատուցումները, անհատական նվիրատվությունները և այլն:

Շարունակական աշխատանքներ են տարվել գրադարանի հիմնական, առձեռն և առանձնացված ֆոնդերում: Դրանց շարքում կարելի է թվարկել բազմաթիվ աշխատափուլեր՝ նոր ստացված գրականության հաշվառում և մատենագրում, գիտական դասակարգում և դարակավորում, սպասարկման, մուտքագրման, թվայնացման կամ այլ նպատակով տեղահանված գրականության վերադասավորում, ֆոնդերի վերաձևավորում և այլն. մի խոսքով՝ գրադարանային գործում պահանջվող առօրեական, բայց և դժվարին գործընթացներ, քանի որ խոսքը վերաբերում է շուրջ 2 միլիոնանոց գրապաշարի շրջանակում կատարվող տեղաշարժերին: Հատկապես կարևորվում են գրքերի պահպանման ուղղությամբ տարված աշխատանքները (կազմում, վերանորոգում (ավելի քան 17.000 միավոր), պակասող էջերի լրացում, մաքրում և այլն), որոնց շնորհիվ ապահովվել է ուսումնական գործընթացին անհրաժեշտ շատ հրատարակությունների երկարակեցությունը:

Հաշվետու ուստարում գրադարանում ձևավորվել են նաև նոր ֆոնդեր: Այս ոլորտում առանձնապես ուշագրավ է Հայոց ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ գրադարանում ցեղասպանագիտության կաբինետի բացման իրողությունը: Նշյալ ֆոնդը ձևավորվել է գրապահոցից, գրադարանի այլ բաժիններից և ֆակուլտետներից բերված պատմաքաղաքական արժեք ունեցող շուրջ 1000 միավոր բազմալեզու գրականությամբ և միտված է շարունակաբար համալրվելու: Կարելի է ասել, որ այն տեղեկատվական մեծ օժանդակություն է մեր ժողովրդի պատմական անցյալի ու ներկայի ամենախնդրահարույց թեման ուսումնասիրողների համար:

Գրադարանում առանձնացված ֆոնդերն ընդհանուր առմամբ ձևավորվում են ինչպես համալսարանական կրթության, այնպես էլ ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական և պատմաքաղաքական պահանջների թելադրանքով: Հաշվետու ուստարում նախկինում առանձնացված հատուկ ֆոնդի 673 միավոր գրականությունը գաղտնագերծվել է և մասնակի գտումից հետո հանձնվել ընթերցողի լայն շրջանակին:

Գրադարանային գործի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է գրական տեղեկատվությունն ընթերցողին հասու դարձնելու եղանակներով, որոնցից ամենագործունը սպասարկման գործընթացն է՝ իր քանակական ու որակական ցուցանիշներով: Հաշվետու շրջանում ավանդական՝ գրապահոցից պահանջաթերթերով սպասարկման ցուցանիշները գրեթե նույնն են, ինչ անցած տարում: Մինչդեռ առցանց էլեկտրոնային պատվերով գրքատացքի քանակը զգալիորեն աճել է: Ընթերցա-

արահներում հաճախումների ընդհանուր թիվը 200.000-ից մեծ է, սպասարկված գրականությունը՝ ավելի քան 415.000: Այս ոլորտում աճի միտում պետք էլ չէ սպասել, քանի որ ընթերցողներից շատերն արդեն գերադասում են հաճախել գրադարանի «վիրտուալ» ընթերցասրահ, որտեղ հնարավոր է օգտվել գրականության էլեկտրոնային տարբերակներից:

Տեղեկատվության ավանդական եղանակներից մեկն էլ մատենագիտական տեղեկատուների կազմումն է: Հաշվետու ուստարում հրատարակության է հանձնվել «Երևանի պետական համալսարանում պաշտպանված աստենախոսությունների մատենագիտության (2013-1014)» 11-րդ պրակը:

Գրադարանի ավտոմատացման բաժնում շարունակվել են գրադարանային գործառույթների արդիականացմանն ուղղված աշխատանքները: Թվայնացվել, մշակվել և կայքէջում տեղադրվել են մեծ պահանջարկ ունեցող 530-ից ավելի գրքեր՝ ուսումնական ձեռնարկներ, մշակութային և տեղեկատվական արժեք ունեցող հրատարակություններ, ինչպես նաև գիտական հոդվածներ: Մատենագիտական գրառումները գուգահեռաբար կատարվել են «ԱԼԵՖ» և «ԿՕՀԱ» ծրագրերով: Շարունակվել են ներդրված նոր՝ «ԿՕՀԱ» ծրագրի կատարելագործման աշխատանքները: Սպասարկվել են պատվիրված էլեկտրոնային հոդվածներ Ֆրեզնոյի համալսարանի շտեմարաններից (մոտ 3500), և «SUBITO» գերմանական ծառայությունից (շուրջ 150): Պատրաստվել և էլեկտրոնային մուտքագրման են ենթարկվել շուրջ 5300 ընթերցողական տոմսեր, աշխատանքներ են տարվել գրադարանի կայքէջում:

Հաշվետու ուստարում գրադարանը կազմակերպել է մի շարք սեմինարներ՝ նվիրված էլեկտրոնային ռեսուրսներից օգտվելու հմտություններին, ինչպես նաև միջազգային տարբեր տվյալների բազաների ներկայացուցիչներ ներկայացրել են բարձր ազդեցության գործոն ունեցող ամսագրերում տպագրության հնարավորությունները: Գրադարանի աշխատողները մասնակցել են հայրենական և արտասահմանյան կազմակերպությունների հրավիրած միջոցառումների, խորհրդակցությունների և գիտաժողովների:

ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ հրատարակչություն

2014 թ. ընթացքում հրատարակվել է 102 անուն գիրք՝ 14.570 տպաքանակով, 1450 տպագրական մամուլ ընդհանուր ծավալով: ԵՊՀ հրատարակչության աշխատանքներն ընթացել են հետևյալ հիմնական ուղղություններով՝ ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականության իրականացում, ԵՊՀ գրահրատարակչական խորհրդի բնականոն աշխատանքների կազմակերպում, գրքերի հրատարակչական և տպագրական աշխատանքներ, էլեկտրոնային գրքերի ստեղծում:

Հաշվետու ժամանակաշրջանում հրատարակվել են բազմաթիվ դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, բառարաններ և ակադեմիական այլ գրականություն:

Ուշադրության են արժանի հատկապես Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակներում հրատարակված գրքերը: Լույս են տեսել իսպանացի հայտնի գրող Գոնսալո Գուարչի՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված եռագրության վերջին՝ երրորդ գիրքը՝ «Սպիտակ լեռը», Հռոմի Սապիենցա համալսարանի պրոֆեսոր Մարիա Իմակոլատա Մաչոտիի հեղինակած «Հայոց ցեղասպանությունը պատմության և հիշողության մեջ» աշխատությունը, Վենետիկի համալսարանի աշխատող Սոնա Հարությունյանի «Հայոց ցեղասպանության թեման իտալական գրականության մեջ» գիրքը, ԵՊՀ անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի դոցենտ Սիլվա Խասապետյանի «Ցեղասպանագիտական տերմինների հայերեն-անգլերեն և անգլերեն-հայերեն բառարանը», որը նորություն էր բառարանագրության մեջ և հետաքրքիր աղբյուր՝ ցեղասպանագետների համար:

Ուշագրավ են նաև Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ցեղասպանագիտության բաժնի վարիչ Վարուժան Պողոսյանի «Էջեր հայոց ցեղասպանության և պատմագրության» աշխատությունը, պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանի կազմած՝ Նիկողայոս Ադոնցի ասույթները հայոց ցեղասպանության և հայկական հարցի մասին, ինչպես նաև Շահան Նաթալիի «Թուրքերը և մենք» ժողովածուն:

Ծավալուն աշխատանք է տարվել նոր դասագրքերի ստեղծման, ինչպես նաև մի շարք արժեքավորների վերահրատարակման ուղղությամբ: Հրատարակվել է «Հայոց

լեզու և խոսքի մշակույթ» դասագրքի 2-րդ մասը՝ Յու. Ավետիսյանի, Ա. Սարգսյանի, Ն. Ներսիսյանի, Լ. Թեյլանի, Ա. Տեր-Մինասյանի, Շ. Գևորգյանի, Ա. Ադիլխանյանի խմբագրությամբ, Պավել Բալայանի, Լուիզա Տեր-Սարկիսյանի, Բելլա Խոջունյանի «Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация. Речь.», Ալբերտ Կիրակոսյանի «Պինդ մարմնի ֆիզիկայի ներածություն», Յուրի Մովսիսյանի «Բարձրագույն հանրահաշիվ և թվերի տեսություն», Վահագն Միքայելյանի «Ալգորիթմական հանրահաշիվ» և մի շարք այլ դասագրքերը:

Ընթերցողների շրջանում մեծ հետաքրքրություն առաջացրեց Հայկ Ավետիսյանի, Արտակ Գնունու, Արսեն Բոբոխյանի, Գագիկ Սարգսյանի «Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը. հնագիտական հետազոտություններ»-ը, Հրաչիկ Միմոնյանի «1912-1913 թթ. բալկանյան պատերազմները և հայերը», ինչպես նաև «Ադրբեջանցիների պատմության «հերոսական» էջերից մեկը լուսանկարներում» գրքերը:

Պատրաստ են տպագրության Նիկողայոս Ադոնցի 8 հատորյակի 7-րդ և 8-րդ հատորները, որտեղ զետեղված են մեծանուն պատմաբանի նամականին և «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» մեծածավալ աշխատությունը: Վերահրատարակման են պատրաստ Մանուկ Աբեղյանի երկերի 5 հատորյակի վերջին երեք հատորները, ինչպես նաև Գևորգ Ջահուկյանի «Լեզվաբանության պատմություն» երկհատորյակը:

ԵՊՀ հրատարակչությունն աշխատանքներ է իրականացրել նաև լույս ընծայվող գրքերի հանրայնացման ուղղությամբ: Գործարկվել է հրատարակչության նոր կայքը՝ <http://publishing.yasu.am/>, ուր տեղադրվում են նոր լույս տեսած, շուտով լույս տեսնող գրքերը, ինչպես նաև թարմացվում են նախկին տարիներին լույս տեսած գրքերը: Պարբերաբար հրատարակվել է լույս տեսած վերջին գրքերի կատալոգը, ֆակուլտետներում կազմակերպվել են նոր լույս տեսած գրքերի շնորհանդեսները:

Հրատարակչությունը մասնակցել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակներում կազմակերպված միջազգային ֆորումի ժամանակ անցկացված գրքերի ցուցահանդեսին, ինչպես նաև այս տարվա սեպտեմբերի 24-26-ը կազմակերպված «ArmBook Expo» գրքի միջազգային ցուցահանդեսին: Ցուցահանդեսին մասնակցում էին ավելի քան 50 երկրի հարյուրավոր հրատարակչություններ, և ներկայացված էր վերջին 3 տարիների ընթացքում լույս տեսած բացառապես Հայկական

հարցին և Հայոց ցեղասպանությանը նվիրված գրականություն: Նկատենք, որ ԵՊՀ-ն հրատարակել էր այս թեմայով Հայաստանում լույս ընծայված ամենաշատ գրքերը՝ 34 անուն գիրք: Այս առումով ԵՊՀ հրատարակչությանը հաջորդում էին Ցեղասպանության թանգարան ինստիտուտը և «Զանգակ 97» հրատարակչությունը՝ համապատասխանաբար 18- և 14-ական անուն գրքերով:

ԵՊՀ հրատարակչությունը մասնակցել է նաև Փարիզի, Լոնդոնի, Նյու Յորքի և Ֆրանկֆուրտի գրքի միջազգային տոնավաճառներին: Ֆրանկֆուրտում կայացած գրքի տոնավաճառին, որն աշխարհում ամենամեծն է, ներկայացված էր 27 անուն գիրք Հայաստանի, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության մասին: Ֆրանկֆուրտի գրքի տոնավաճառի շրջանակներում կայացել է նաև գերմանացի հայտնի մտավորական Ռոլֆ Հուֆելդի «Մահ անապատում. Հայոց ցեղասպանությունը» գրքի գերմաներեն տարբերակի շնորհանդեսը, իսկ գերմաներենից հայերեն թարգմանության աշխատանքները մոտենում են ավարտին, և գիրքը առաջիկայում հրատարակվելու է նաև հայերենով:

Ընդլայնվել է համագործակցությունը Եվրոպական համալսարանների հրատարակչությունների ասոցիացիայի հետ, պաշտոնապես ներկայացվել են լիիրավ անդամության համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Հաշվետու ուստարում ԵՊՀ հրատարակչությունում շարունակվել են հրատարակված գրքերի թվայնացման, ինչպես նաև Android, iOS օպերացիոն համակարգերի և Kindle-ի համար նախատեսված էլեկտրոնային գրքերի ստեղծման աշխատանքները:

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՄՆԵՐ

«Բանբեր Երևանի համալսարանի»

2014-2015 թթ. հաշվետու ժամանակաշրջանում «Բանբեր Երևանի համալսարանի». հասարակական գիտություններ, քառամյա գիտական հանդեսի հրատարակման գործընթացում տեղի են ունեցել որոշ փոփոխություններ: 2014 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին հանդեսը լույս է ընծայվել նախկինի պես՝ մասնագիտական 6

շարքով («Հայագիտություն», «Բանասիրություն», «Իրավագիտություն», «Փիլիսոփայություն, հոգեբանություն», «Սոցիոլոգիա, սոստեսագիտություն», «Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն»), որոնցից հրատարակվել է մեկական համար (N 15):

Շարքերի յուրաքանչյուր համարը հրատարակվել է 5 մամուլ ծավալով, 100 օրինակ տպաքանակով:

Սկսած 2015 թվականից, համաձայն ՀՀ գրապալատի պահանջների, «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի շարքերը դարձել են առանձին հանդեսներ՝ իրենց անհատական միջազգային համարանիշներով.

«Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն»՝ ISSN 1829-4588,

«Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն»՝ ISSN 1829-457X,

«Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն»՝ ISSN 1829-4561,

«Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, հոգեբանություն»՝ ISSN 1829-4553,

«Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, սոստեսագիտություն»՝ ISSN 1829-4545,

«Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն»՝ ISSN 1829-4529:

2015 թ. հունվարից, ԵՊՀ խորհրդի որոշմամբ, վերոթվարկյալներին ավելացել է «Բանբեր Երևանի համալսարանի. Ռուս Բանասիրություն» (ISSN 1829-4537) հանդեսը:

2015 թ. հունվարից մինչև սեպտեմբեր լույս են տեսել հանդեսների առաջին և երկրորդ համարները (N 16, 17):

Հանդեսի հրատարակությանը զուգահեռ իրականացվում են ԵՊՀ կայքում հանդեսի էլեկտրոնային տարբերակի զետեղման աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում կայքում տեղադրվել են 1997-1999 թթ. լույս տեսած համարները, իսկ 2000-2014 թթ. համարները մուտքագրվել էին նախորդ տարիներին: «Բանբերի» ավելի վաղ շրջանի համարների տեղադրումը կշարունակվի հետագայում ևս:

«Գիտական տեղեկագիր»

«Գիտական տեղեկագիր» հանդեսի «Բնական գիտություններ» սերիան հրատարակվում է 1967 թ-ից: 2009 թ-ից ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ տեղեկագիրը տրոհվել է 3 հանդեսների:

2014 թ. երրորդ քառամսյակում լույս է տեսել «Գիտական տեղեկագիր» (Proceedings of YSU) «Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ» և «Քիմիա, կենսաբանություն» շարքերի (անգլերեն), ինչպես նաև «Երկրաբանություն և աշխարհագրություն» շարքի (հայերեն, ռուսերեն) 3-րդ համարները:

2015 թ. արդեն լույս են տեսել նշված 3 հանդեսների 1-ին և 2-րդ համարներ:

2014 թ. մայիսից «Գիտական տեղեկագիր» (Proceedings of YSU) «Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ» հանդեսը ներկայացված է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում հրատարակվող zbMATHJournal հանդեսում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ուսումնական տարում ընդլայնվել է Երևանի պետական համալսարանի գործունեությունը՝ արտաքին կապերի հաստատման և շարունակման առումով: Ներկայումս ԵՊՀ-ն միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի աշխարհի շուրջ 50 երկրների 253 համալսարանների, հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ: Առկա պայմանագրերի շրջանակներում յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում տեղի են ունենում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների փոխանակումներ:

Առավել ակտիվ շարունակվում է համագործակցությունը Արիզոնայի համալսարանի (ԱՄՆ), Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի (Ռուսաստան), Կազանի Դաշնային համալսարանի (Ռուսաստան), Բոլոնիայի համալսարանի (Իտալիա), Մոնպելյե 1 համալսարանի (Ֆրանսիա), Պրովանսի համալսարանի (Ֆրանսիա), Մադրիդի անվան Թուրքմենական պետական համալսարանի (Թուրքմենստան), Քուվեյթի համալսարանի (Քուվեյթ), Կրակովի Յագելլոնյան համալսարանի (Լեհաստան) հետ:

ԱՊՀ երկրների Ցանցային համալսարանի կոնսորցիումի շրջանակում 2014/2015 ուսումնական տարում Ռուսաստանի Ազգերի բարեկամության համալսարան և Մոսկվայի Միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտ են գործուղվել ԵՊՀ 9 ուսանող՝ միջազգային հարաբերությունների, աշխարհագրության և երկրաբանության, ռուս բանասիրության ֆակուլտետներից:

Շարունակվել է համագործակցությունը Պրովանսի, Մոնպելյե 1, Մոնպելյե 3 համալսարանների հետ (Ֆրանսիա): Ի դեպ, 2016 թ. լրանում է Մոնպելյե 3 համալսարանի հետ համագործակցության 30 տարին:

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ստորագրվել է 22 պայմանագիր արտասահմանյան բուհերի հետ, որոնց թվում են՝ Բաբեշ-Բոյայի համալսարանը (Ռումինիա), Հումբոլդտի համալսարանը (Գերմանիա), Կարլի համալսարանը (Չեխիա), «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանը (ՌԴ), Ուրալի պետական տնտեսագիտական համալսարանը (ՌԴ), Թեհրանի համալսարանը (Իրան), Սանկտ Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարանը (ՌԴ), Մշակութային դիվանագիտության ինստիտուտը (Գերմանիա):

Վերակնքվել են Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի (Ֆրանսիա), Ի. Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանի (Վրաստան), Ֆլորենցիայի համալսարանի (Իտալիա), Քուվեյթի համալսարանի (Քուվեյթ) հետ ստորագրված պայմանագրերը:

Ակտիվացել է նաև ֆակուլտետների միջազգային համագործակցությունը: Այսպես, համագործակցության պայմանագրեր են կնքվել ԵՊՀ իրավագիտության և Մոնպելյե 1 համալսարանի (Ֆրանսիա) իրավագիտության և քաղաքագիտության, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և Մոսկվայի պետական համալսարանի (ՌԴ) քաղաքագիտության ֆակուլտետների, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և Կոնֆուցիոսի ինստիտուտի (Չինաստան) հայաստանյան մասնաճյուղի միջև:

Ինչպես և նախորդ տարիներին, 2014/2015 ուստարում Երևանի պետական համալսարանն ակտիվորեն մասնակցել է տարբեր միջազգային գիտաժողովների, սեմինարների և քննարկումների կազմակերպմանը: Մինևույն ժամանակ, ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությունը աջակցել է ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպությունների և ՀՀ-ում հավատարմագրված դեսպանությունների կողմից տարբեր գիտակրթական միջոցառումների, սեմինարների, կրթական ծրագրերի և տեղեկատվական ցուցահանդեսների կազմակերպմանը:

Հաշվետու ժամանակահատվածում միջազգային միջոցառումներից առավել ուշագրավ է 2014 թ. նոյեմբերի 10-14-ը «Հայաստան-ՆԱՏՕ. Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի» շրջանակում Հայաստանում անցկացված «ՆԱՏՕ-ի շաբաթ» խորագրով հերթական՝ 8-րդ միջոցառումը, որի շրջանակում 2014 թ. նոյեմբերի 12-ին ԵՊՀ-ում հյուրընկալվել և համալսարանականների համար ելույթ են ունեցել ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան Քաթրին Լիչը, ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Հեֆֆերնը, ՆԱՏՕ-ի անդամ պետությունների ռազմական կցորդները, ՀՀ-ում գործող մի շարք դեսպանատների և ՀՀ ԱԳՆ ներկայացուցիչները, ՆԱՏՕ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ, դեսպան Սամվել Մկրտչյանը: 2015 թ. հունիսի 26-ին ԵՊՀ-ում անցկացվել է «Թուրքմենստանի մշտական չեզոքության կարգավիճակը՝ կայուն զարգացման և միջազգային կառուցողական համագործակցության հիմք» խորագրով միջազգային գիտաժողովը, որին մասնակցել են Թուրքմենստանի, Չինաստանի, Հնդկաստանի, Իրանի, Ճապոնիայի, Բելառուսի, Ղազախստանի դեսպաններ ու դեսպանությունների ներկայացուցիչներ:

Վերջին 5 տարիների ընթացքում Երևանի պետական համալսարանն ակտիվորեն մասնակցել է TEMPUS-ի շրջանակներում իրականացվող նախագծերի մշակմանն ու կյանքի կոչմանը:

2014/2015 ուստարում հաջողությամբ շարունակվել են TEMPUS, ERASMUS MUNDUS դրամաշնորհային ծրագրերը: Իրականացվել են ERASMUS MUNDUS ծրագրի WEBB, ELECTRA, HUMERIA, BACKIS, EMBER նախագծերը, որոնց նպատակն է ընդլայնել ուսանողների, դասախոսների և հետազոտողների փոխանակումները և աջակցել շարժունությանը ոչ ԵՄ անդամ պետություններից դեպի ԵՄ անդամ երկրներ:

2011 թ-ից ԵՊՀ-ում TEMPUS ծրագրի շրջանակներում իրականացվում է «Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում համալսարան-ձեռնարկություն գործընկերությանն ուղղված վերապատրաստման հնարավորություններ» դրամաշնորհը, որի հիմնական նպատակն է ընդլայնել համալսարանների հնարավորությունները Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում՝ համաձայն հասարակության և շուկայական տնտեսության պահանջների՝ հիմնված համապատասխան կրթության վրա: Իրականացվել են նաև TEMPUS, ծրագրի այլ դրամաշնորհներ, մասնավորապես՝ PICASA, La MANCHE, ATHENA, SuTomA, ARMENQA, PACT, VERITAS ծրագրերը:

ԵՊՀ-ն TEMPUS PICASA ծրագրի համակարգողն է: Ծրագրի շրջանակում մշակման և ներդրման փուլում են Ուկրաինայի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի մի շարք առաջատար բուհերի, այդ թվում՝ Թբիլիսիի Ի. Ջավախիշվիլու անվան պետական (Վրաստան), Դոնեցկի ազգային տեխնիկական (Ուկրաինա), Մոլդովայի տեխնիկական (Մոլդովա) և այլ համալսարանների միջազգայնացման ռազմավարությունները:

Հաշվետու ուստարում ԵՊՀ մասնագետները, ինչպես նաև բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի սովորողները մասնակցել են տարբեր գիտական միջոցառումների, սեմինարների, արտասահմանյան գիտակրթական ծրագրերի: Իրականացվել են նաև միջբուհական փոխանակման ծրագրեր: Միջազգային համագործակցության վարչությունն ապահովել է համալսարանականների՝ արտասահման գործուղվելն ու գիտաուսումնական փոխանակումները: Համալսարանականներն առավել հաճախ գործուղվել են Ռուսաստան, Վրաստան, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա:

2014/2015 ուսումնական տարում իրականացվել է 536 անձ/գործուղում. գործուղվել են 227 մասնագետ, 135 ուսանող և ասպիրանտ: Համալսարանի վարչական կազմից արտասահման է գործուղվել 174 հոգի:

2014/2015 ուստարում ԵՊՀ ֆակուլտետներում սովորել է 434 օտարերկրյա քաղաքացի, այդ թվում՝ ԵՊՀ միջազգային կրթական կենտրոնում՝ 33 ուսանող, բակալավրիատում՝ 247 (225-ը՝ վճարովի, 22-ը՝ անվճար հիմունքներով), մագիստրատուրայում՝ 57 (35-ը՝ վճարովի, 22-ը՝ անվճար հիմունքներով), ասպիրանտուրայում՝ 37 (34-ը՝ վճարովի, 3-ը՝ անվճար հիմունքներով) և 11 ստաժոր: Հեռակա ուսուցման համակարգում սովորել է 49 օտարերկրացի:

«Գալուստ Գյուլբենկյան» հաստատության կողմից հատուցվել են Համալսարանի երիտասարդ գիտնականների՝ արտասահմանյան կարճաժամկետ գործուղումների (գիտական կոնֆերանսներ, սեմինարներ, դասընթացներ և այլն) ծախսերը:

«Գ. Գյուլբենկյան» հիմնադրամի և ՀԲԸՄ կողմից փոխհատուցվել է ԵՊ-ում սովորող 37 սիրիահայ ուսանողների և մագիստրանտների ուսման վարձերի 60 %-ը:

Կազմակերպվել է լույս տեսնող և նախկինում հրատարակված գրականության առաքումը Լիբանանի, Սիրիայի և Իրանի հայկական համայնքների մշակութային, ուսումնական կենտրոններ, ինչպես նաև «Գ. Գյուլբենկյան» հիմնադրամին (Լիսաբոն)՝ Եվրոպայի հայկական համայնքներում դրանք տարածելու նպատակով: Հաշվետու ուսումնական տարում այդ նպատակով առաքվել է շուրջ 100 կտոր գրականություն:

* * *

ԵՊՀ միջազգային կապերի նկատելի աճը և այդ ոլորտում ձեռքբերումները, անշուշտ, ոգևորող են, սակայն այստեղ ևս կան մտահոգիչ խնդիրներ, անելիքներ: Մասնավորապես՝

- Դեռևս փոքր է օտարերկրյա քաղաքացիների մասնաբաժինը ԵՊՀ ընդունելության համակարգում, ԵՊՀ-ն չունի բավարար հանրակացարանային պայմաններ օտարերկրացի ուսանողների համար:
- Անհանգստացնող խնդիրներից է դասախոսական կազմի անգլերենի իմացության ոչ բավարար մակարդակը, ինչը որոշակի խոչընդոտ է առաջացնում միջազգայնացման զարգացման գործընթացում:
- Արտասահման գործուղվածների շարքում փոքր թիվ են կազմում ասպիրանտները:

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

1. Հասարակայնության հետ տարվող աշխատանքներ

ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի գերակա ուղղություններից են հասարակայնության հետ տարվող աշխատանքները, որոնց առանցքում հաշվետու ժամանակահատվածում եղել են Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ծրագրերին և միջոցառումներին առնչվող գործընթացները:

Շարունակվել է ակտիվ համագործակցությունը հայաստանյան և արտերկրի տպագիր և էլեկտրոնային ՁԼՄ-ների հետ: Ինտերնետային ռեսուրսների զարգացման, ինչպես նաև համացանցային տիրույթում ԵՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածման նպատակով առանձնահատուկ ուշադրություն է դարձվել համապատասխան ոլորտում աշխատանքների իրականացմանը: Անխախտ պարբերականությամբ տպագրվել է «Երևանի համալսարան» պաշտոնաթերթը և անվճար բաժանվել ԵՊՀ աշխատողներին, ուսանողներին և բուհի հետ համագործակցող կազմակերպություններին:

ԵՊՀ ստորաբաժանումների կողմից հրապարակվելիք, ԵՊՀ-ին վերաբերող, հանրային նշանակություն ունեցող, լայն տարածման ենթակա նյութերի (գրքույկներ, բուկլետներ, ուղեցույցներ, տեղեկատվական թերթիկներ, օրացույցներ և այլն), ինչպես նաև էլեկտրոնային նյութերի (ինտերնետային կայքեր, գովազդային խտասկավառակներ և այլն) պատրաստման հարցում Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչությունը տրամադրել է մասնագիտական խորհրդատվություն և համապատասխան աջակցություն:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացվել Համալսարանի հանրային կապերի, ներքին և արտաքին հաղորդակցության ոլորտներում ԵՊՀ զարգացման 2010-2014 թթ. ռազմավարական ծրագրով սահմանված խնդիրների իրականացման ուղղությամբ, մշակվել են իրականացված աշխատանքների հաշվետվություն, ԵՊՀ զարգացման ռազմավարական նոր ծրագրի համապատասխան բաժինների նախագծերը: ԵՊՀ-ում տարվող աշխատանքներին համահունչ մշակվել և ամփոփվել է ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումների համառոտ հաշվետվությունը, կազմվել և հրատարակման է նախապատրաստվել ԵՊՀ նախորդ ուստարվա հաշվե-

տվությունը: Հասարակայնության հետ կապերի ոլորտում էապես կարևորվում է տարբեր ստորաբաժանումների փոխգործակցությունը, և հաշվետու ժամանակահատվածում պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների հանրային կապերի պատասխանատուների հետ, քննարկվել են ստորաբաժանումներում տարվող աշխատանքների առանձնահատկությունները: ԵՊՀ-ում նոր բացված (վերանվանված) ստորաբաժանումների համար մշակվել և շրջանառության մեջ են դրվել համապատասխան ձևաթղթեր:

Ապահովվել է տարբեր հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների հետ ԵՊՀ փոխգործակցությունը, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով կազմակերպություններին և քաղաքացիներին տրամադրվել է տեղեկատվություն, Համալսարանը օպերատիվ արձագանքել է նրանց նախաձեռնություններին:

* * *

ԵՊՀ-ում կազմակերպվող միջոցառումների լուսաբանումը ՁԼՄ-ներում կարևոր աշխատանքային ուղղություններից մեկն է, որն իրականացվում է «ԵՊՀ-ում հանրային նշանակություն ունեցող միջոցառումների կազմակերպման, իրազեկման և հասարակայնության հետ տարվող աշխատանքների ուղեցույց»-ի դրույթներին համապատասխան: Հետևողական աշխատանք է տարվել ուղեցույցի դրույթների կիրառման (այդ թվում՝ իրազեկման հայտերը պատշաճ կերպով լրացնելու) ուղղությամբ: Հաշվետու ուստարվա ընթացքում վարչությունն ստացել է հանրային նշանակության միջոցառման 348 հայտ: 53 մամուլի հաղորդագրություն է ուղարկվել ՁԼՄ-ներին:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ ԵՊՀ-ում իրականացվող բազմաբնույթ ծրագրերն ու միջոցառումները հավուր պատշաճի լուսաբանվել են հայաստանյան լրատվամիջոցներով:

Իրականացվել է տպագիր ՁԼՄ-ներում և ինտերնետային կայքերում Համալսարանի, կրթության և գիտության ոլորտի կարևոր խնդիրների մասին հրապարակված նյութերի մոնիթորինգ: Հաշվետու ժամանակահատվածում տպագիր լրատվամիջոցներում ԵՊՀ-ի մասին հրապարակվել է 575 նյութ, իսկ ինտերնետային կայքերում ԵՊՀ-ին անդրադարձած նյութերի թիվը 656 է: Հայաստանյան հեռուստաընկերություններով ԵՊՀ-ի վերաբերյալ հեռարձակվել է 97 տեսանյութ: Համապատասխան նյու-

թերը յուրաքանչյուր օր՝ առավոտյան, ներկայացվել են ԵՊՀ ռեկտորատին, կիսամյակը մեկ անգամ իրականացվել է նյութերի վերլուծություն:

ԵՊՀ կենտրոնական և այլ մասնաշենքերի նախասրահների հեռուստակրաններին յուրաքանչյուր աշխատանքային օր տեղեկատվություն և հայտարարություններ են տեղադրվել Համալսարանում կայանալիք միջոցառումների վերաբերյալ: Դրանց ընդհանուր թիվը 348 է:

* * *

ԵՊՀ ինտերնետային ռեսուրսների զարգացման գործողությունների պլանի համաձայն՝ շարունակվել են ԵՊՀ ինտերնետային պորտալի զարգացման աշխատանքները: Նորաստեղծ պորտալում ընդգրկված են 63 կայք ու ենթակայք: Կայքի «Նորություններ» բաժնում հրապարակվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն 1416 նյութ, իսկ «Հայտարարություն» բաժնում՝ 186 հայտարարություն:

Օգտատերերի հետ ապահովվել է առցանց հետադարձ կապ, ինչպես նաև մշակվել և վերլուծվել են էլեկտրոնային փոստով ստացված նամակները: ԵՊՀ պորտալում գործող «Հարց-պատասխան» բաժնի միջոցով ստացվել են բազմաթիվ նամակներ (1263՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն), որոնց ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների օգնությամբ հնարավորինս սեղմ ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ:

Ամենօրյա օպերատիվ աշխատանքի շնորհիվ և կայքի այցելուների հետ ինտերակտիվ կապ ապահովելու արդյունքում, նախորդ ուստարվա համեմատ, կայքի այցելուների թիվն աճել է՝ հասնելով օրական միջինը 4800-ի:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետների կայքերում շարունակվել են թարմացվել ու տեղադրվել դասախոսների տվյալները (հայերեն ու անգլերեն), լուսանկարները, խմբագրվել և ավելացել են մոտ 1470 գիտական հրապարակումների մասին տվյալներ: Կայքում առկա է շուրջ 19 000 հրապարակում:

Հաշվետու ուստարում շահագործման են հանձնվել ԵՊՀ պորտալում տեղակայված հետևյալ կայքերը և նոր դիզայնով ու հավելումներով համալրված բաժինները՝

- Ձեռնարկությունների հետ համագործակցություն (<http://ysu.am/cooperation/>)
- «ԵՊՀ-ն հիշում է և պահանջում» (<http://ysu.am/armeniangenocide100/>)
- Առաջին կուրսեցու ուղեցույց (<http://1course.ysu.am/>)
- Լավագույն ուսանող (<http://beststudent.ysu.am/hall/beststudent>)

- ԵՊՀ հրատարակչություն (<http://publishing.yzu.am/>)
- ԵՊՀ միգրացիայի կենտրոն (<http://mcc.yzu.am/>)

Փոփոխության են ենթարկվել հետևյալ բաժինները՝ «Պատկերասրահ», «Ռետրո պատկերասրահ», «Տեսադարան», «Հարց-պատասխան», «Օրացույց», «Համալսարանականներ»:

Սոցիալական ցանցերում ակտիվորեն գործարկվել են ԵՊՀ էջերը, մասնավորապես՝ Facebook-ի (<http://www.facebook.com/ysu.am>) տիրույթում բազմաթիվ այցելուներ բուռն քննարկումներ են ծավալել, ԵՊՀ Facebook-ի էջի հետևորդների թիվը անցել է 25500-ի շեմը:

Առկա և հեռակա ուսուցման համակարգերի դիմորդների համար ԵՊՀ ինտերնետային կայքում տեղադրվել է համապատասխան տեղեկատվություն, իսկ հեռակա ուսուցման ընդունելության քննությունների պատասխանների 24 ձևաթղթեր տեղադրվել են օրական երկու անգամ օպերատիվ կերպով: Տեղադրվել են նաև 2015 թ. առկա ուսուցման համակարգով ԵՊՀ ընդունված ուսանողների տվյալները: Իրականացված աշխատանքների արդյունքում էապես ավելացել է այցելուների թիվը:

«Վեբոմետրիքս» (Webometrics Ranking of World Universities) կայքի՝ բուհերի վարկանիշավորման սանդղակում ԵՊՀ-ն ամրապնդել է դիրքերը՝ նախորդ տարվա համեմատ առաջընթաց գրանցելով 81 նիշով: 2015 թվականի հուլիսին «Վեբոմետրիքսի» հրապարակած բուհական համաշխարհային վարկանիշային աղյուսակում ԵՊՀ-ն 2510-րդ տեղում է: Մայր բուհը միաժամանակ շարունակում է գլխավորել ՀՀ բուհերի ցանկը, իսկ տարածաշրջանում 2-րդն է:

* * *

«Երևանի համալսարան» պաշտոնաթերթի հրատարակմանը զուգընթաց հաշվետու ժամանակաշրջանում տպագրվել են նաև ուղեցույցներ, բուկլետ (անզլերեն) ու տեղեկատվական գրքույկներ:

2014/2015 ուստարվա ընթացքում լույս է տեսել «Երևանի համալսարան» թերթի 10 համար՝ միջինը 32 էջ ծավալով, յուրաքանչյուր համարում՝ 50-55 նյութ (ուստարվա կտրվածքով՝ 500-550 նյութ, այդ թվում՝ վերլուծություններ, հարցազրույցներ, կայացած միջոցառումների լուսաբանում և այլն): ԵՊՀ պաշտոնաթերթը հանդես է եկել հստակ խորագրերով՝ «Քաղաքականություն», «Գիտություն», «Կրթություն», «Հասա-

րակություն», «Մարզական», «Մշակույթ», «Միջազգային», «Ուսումնագիտական խճանկար»:

Օպերատիվ թարմացվել է նաև «Երևանի համալսարան» պաշտոնաթերթի կայքը:

* * *

Հաշվետու ժամանակաշրջանում անցկացվել են ԵՊՀ արտաքին իմիջի վերաբերյալ Երևանի բնակչության պատկերացումների բացահայտմանն ուղղված և հեռախոսային հարցման մեթոդով իրականացված հետազոտության իններորդ և տասներորդ փուլերը: Հետազոտությունը շարունակական բնույթ ունի և անցկացվում է վեց ամիսը մեկ:

ԵՊՀ արտաքին իմիջին վերաբերող հետազոտության համար ներգրավվել են ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ուսանողներ, ովքեր աջակցել են հետազոտության դաշտային և տվյալների մշակման փուլերի աշխատանքներին՝ ստանալով վերջիններիս իրականացման վերաբերյալ համապատասխան մանրամասն գիտելիքներ և հմտություններ:

Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի հետ համատեղ անցկացվել է կենտրոնի գործառույթների և ուսանողների զբաղվածության վերաբերյալ հետազոտություն:

Անցկացվել են մի շարք որակական թեմատիկ հետազոտություններ ԵՊՀ ուսանողների շրջանում (ընտանիք կազմած ուսանողների, առաջին կուրսեցիների հետ և այլն): Կազմակերպական աջակցություն է ցուցաբերվել ՀՀ ԿԳՆ-ի միջոցով ստացված տարբեր կազմակերպությունների ուսումնասիրություններին և հետազոտություններին (ՄԻԱՎ/ՁԻԱՎ, ծխելու դեմ պայքար և այլն):

* * *

Հաշվետու ուստարում կատարվել է 402 լուսանկարահանում (միջոցառումներ, թերթի համար ֆոտոսեսիաներ և այլն), ընդհանուր թվով՝ 36.924 լուսանկար: Շարունակվել են տեսանյութերի և լուսանկարների թվայնացման և արխիվացման աշխատանքները:

Վարչության համապատասխան բաժնի աշխատակիցները ԵՊՀ-ում կայացած միջոցառումների լուսանկարներով ապահովել են ինչպես համալսարանական, այնպես էլ հանրապետական մամուլը:

2. Տեղեկատվական համակարգերի սպասարկում և զարգացում

2014/2015 ուսումնական տարում շարունակվել են աշխատանքները ԵՊՀ տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման ուղղությամբ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ հիմնական մասերի՝

- Տեղեկատվական համակարգերի, համակարգչային տեխնիկայի զարգացման և արդիականացման ուղղությամբ համապատասխան վարչական գործառույթների իրականացում,
- Համալսարանում առկա համակարգչային տեխնիկայի սպասարկում և արդիականացում,
- Համալսարանական տեղեկատվական համակարգերի սպասարկում և զարգացում:

* * *

Տեղեկատվական համակարգերի և համակարգչային տեխնիկայի ոլորտում համապատասխան վարչական գործառույթներն իրականացվել են ԵՊՀ տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչության կողմից: Վարչության աշխատողները ներգրավված են TEMPUS-ի շրջանակներում իրականացվող HEN-GEAR ծրագրում, որի շրջանակում ստեղծվել է շրջանավարտների տվյալների շտեմարաններ՝ նրանց զբաղվածության և այլ խնդիրների լուծման նպատակով: Արդիականացվել և սպասարկվել են գույքի էլեկտրոնային գույքագրման, վարչական գործառույթների ավտոմատացման համակարգերը:

* * *

Համակարգչային պահեստամասերից հավաքվել և շահագործման է հանձնվել շուրջ 50 նոր համակարգիչ: Սպասարկվել է (վերանորոգում, կարգաբերում) շուրջ 800 համակարգիչ:

Ավելացել են պետական և ավարտական քննությունների ընդունման լսարաններում տեղադրված IP տեսախցիկները (5 նոր տեսախցիկ), որոնց միջոցով բոլոր ֆակուլտետներում ապահովվել են քննությունների ողջ ընթացքի տեսահեռարձակումը ԵՊՀ ներքին ցանցում և սահմանված կարգով քննությունների տեսաձայնագրումը:

ԵՊՀ աշխատողներին տրամադրվել է համակարգչային ծրագրերին և տեխնիկային վերաբերող խորհրդատվություն (շուրջ 1500 այցելություն և խորհրդատվություն), տարվել են բացատրական աշխատանքներ համակարգչային անվտանգության ուղղությամբ:

* * *

ԵՊՀ համակարգչային ցանցն իր չափերով և տեխնիկական հագեցվածությամբ ու համապատասխան որակական բնութագրիչներով առանձնանում է Հայաստանի բուհական համակարգում և զբաղեցնում առաջատար դիրք: Ապահովվել են ԵՊՀ մասնաշենքերի միջև ստեղծված 1Գբիթ/վ արագությամբ գործող օպտիկամալուխային ցանցի անխափան աշխատանքները, որի միջոցով միմյանց հետ միացված են ԵՊՀ բոլոր ուսումնական մասնաշենքերը՝ ներառյալ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը:

Ժամանակակից չափանիշներին համապատասխանող կենտրոնական սերվերի անխափան շահագործման արդյունքում ապահովվել են անխափան տեղեկատվական հոսքերը:

Հաշվետու ուստարում շարունակվել են աշխատանքները ներհամալսարանական ցանցի ընդլայնման ուղղությամբ. ԵՊՀ ցանցին են միացվել ինչպես նոր ձեռք բերված, այնպես էլ նախկինում ձեռք բերված համակարգիչները (շուրջ 200 համակարգիչ), վերանորոգված մասնաշենքերում և այլ լսարաններում ու աշխատասենյակներում ԵՊՀ համակարգչային ցանցին միանալու նպատակով անցկացվել է նոր համակարգչային ցանց: ԵՊՀ ներքին ցանցին լարանցմամբ միացված ընդհանուր կետերի (սարքերի) թիվը հասել է 2450-ի, իսկ անլար ինտերնետ կապինը (WiFi)՝ 90-ի: Ապահովվել է ԵՊՀ-ում ինտերնետային կապի կայուն թողունակությունը և միջինը կազմել է 50Mb/s (մշտական օգտվողների թիվը հասնում է շուրջ 2100-ի):

Ավարտվել են ԵՊՀ հեռախոսակապի համակարգի հիմնովին վերակառուցման և արդիականացման աշխատանքները (տարբեր մասնաշենքերում տեղադրվել են 6 ժամանակակից ԱՀԿ-ներ), որի արդյունքում կրկնակի աճել է ներքին և քաղաքային հեռախոսահամարների թվաքանակը:

* * *

Ապահովվել են առանձին սերվերով ԵՊՀ-ի www.y-su.am պորտալի շուրջ 60 կայքերի հոստինգը (տեղադրում ինտերնետում) և բոլոր կայքերի անխափան աշխա-

տանքն ու անվտանգության բարձր մակարդակը: ԵՊՀ աշխատողներին տրամադրվել է շուրջ 120 նոր էլեկտրոնային փոստի հասցե ysu.am դոմեյնում (աշխատողների էլեկտրոնային փոստի հասցեների ընդհանուր թիվը շուրջ 2100 է):

Նախորդ տարի մեկնարկած ԵՊՀ ուսանողների էլ. փոստի հասցեների տրամադրման ընթացիկ գործընթացը հասցվել է ավարտին, և հաշվետու ժամանակաշրջանում ուսանողական էլ. փոստի հասցեների թիվը կազմել է շուրջ 21200: Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ ֆակուլտետների դեկանատներն օգտվել են նորաստեղծ «ուսանող-դեկանատ» (uStaff v2.0) էլեկտրոնային կապի գործիքից, և դեկանատների կողմից ուսանողներին ուղարկվել է շուրջ 2100 էլեկտրոնային հաղորդագրություն:

ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում տեղադրված և համակարգչային ցանցին միացված հեռուստամոնիտորներից բացի՝ նոր հեռուստամոնիտորներ են տեղադրվել ԵՊՀ թիվ 1, թիվ 4, թիվ 6, թիվ 8 մասնաշենքերում, որոնք նպաստում են ներհամալսարանական տեղեկատվության արդյունավետ տարածմանը:

* * *

Համալսարանի գործունեության այս ոլորտում ևս առկա են բացթողումներ, մասնավորապես՝

- Տարբեր ստորաբաժանումների (հատկապես ֆակուլտետների) մակարդակում դեռևս ամբողջովին արդյունավետ չէ հանրային կապերի պատասխանատուների աշխատանքը:
- Մի շարք ստորաբաժանումների գործառույթների ուղղությամբ ԵՊՀ ինտերնետային պորտալում դեռևս ստեղծված չեն կայքեր կամ ենթակայքեր:
- Կայքերի և ենթակայքերի տվյալների թարմացման գործընթացը ամբողջովին կանոնակարգված չէ, լինում են ուշացումներ:
- Վերջնականապես ձևավորված չեն հանրության տարբեր շերտերի ներկայացուցիչների հետ հետադարձ կապի մեխանիզմները, թույլ են զարգացած առցանց հարցումների գործիքները:
- Ինտերնետային կայքերը չունեն շարժական սարքերի (Android, iOS) համար տարբերակներ:

- Ուսանողական էլեկտրոնային փոստի համակարգը դեռևս ամբողջովին և արդյունավետ չի օգտագործվում, ցածր է պարբերաբար էլփոստը ստուգող ուսանողների ցուցանիշը:
- Ուսանողական էլեկտրոնային փոստի համակարգը չունի շարժական սարքերի համար հարմարեցված տարբերակ:
- ԵՊՀ կառավարման մեկ միասնական տեղեկատվական համակարգ դեռևս ձևավորված չէ:

ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏ

1. Ուսանողական կազմակերպություններ և ուսանողների հետ տարվող աշխատանքներ

ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժինը ԵՊՀ ուսանողական կազմակերպությունների աշխատանքներին մշտապես ցուցաբերել է կազմակերպչական և մեթոդական աջակցություն: Աշխատանքներն ընթացել են երկու հիմնական ուղղություններով՝ աջակցություն ԵՊՀ ՈՒԽ և ՈՒԳԸ նախաձեռնություններին և ծրագրերին, ինչպես նաև ուսանողական կառույցների կարողությունների զարգացում:

Բաժնի և համապատասխան կառույցների համատեղ իրականացրած աշխատանքներից հարկ է առանձնացնել մեծածավալ ծրագրերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (ԵՊՀ 95-, ԱրՊՀ 45- և ՈՒԽ 20-ամյակներին նվիրված այց Արցախ, ՈՒԽ նախագահության նիստ ԱրՊՀ-ում և ծառատունկ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի համալսարանական պուրակում, Ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումների շարքում այցելություն Արցախ, սեմինար-քննարկում ԱրՊՀ-ում, Բերձորում Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված պուրակի հիմնում, համաբուհական բանակում Արցախի Հաղորթի շրջանի Տող գյուղում): Ուսանողական ծրագրերի և նախաձեռնությունների շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ուսանողական ամենամյա գիտական հոդվածների ժողովածուի հրատարակումը, ձեռներեցության 8-շաբաթյա դասընթացները (համագործակցությամբ ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության կողմից իրականացվող և Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Հայաստանում մաքուր տեխնոլոգիաների գլոբալ ինովացիոն ծրագիր ՓՄՁ-ների համար» ծրագրի հետ), Ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպչական աշխատանքներում ներգրավված ԵՊՀ ուսանողների կամավորական գործունեության համակարգումը, ազգագրական պարի դասընթացը համալսարանականների համար, «Լավագույն ուսանող-2014» մրցույթի կազմակերպումը, սոցիալապես անապահով շուրջ 100 ուսանողների վարձավճարների զեղչերի հատկացումը, ուսանողների պարբերաբար այցելությունները թանգարաներ (Սարդարապատի հուշահամալիր, Մուսա լեռան հերոսամարտի հուշահամալիր, ՀՀ պատմության թանգարան,

Գրականության և արվեստի պատմության թանգարան և այլն) ուսանողների ամառային հանգստի կազմակերպումը և այլ ծրագրերն ու նախաձեռնությունները: ԵՊՀ ուսանողները մասնակցել են «Բազե-2015» ամենամյա երիտասարդական հավաքին: Ուսանողների հետ տարվող աշխատանքներում ներառված են նաև ուսանողների տարբեր խնդիրների քննարկումներն ու ներկայացումը ռեկտորատին:

* * *

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ուսանողական խորհուրդը (ՈւԽ) շարունակել է գործունեությունն իր կանոնադրական կարևորագույն խնդիրների ուղղությամբ՝ ապահովել ուսանողների ներգրավվածությունը Համալսարանի կառավարման գործընթացում, պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները, խթանել ուսումնական գործընթացի և այլ աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպումը և աջակցել ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը: Տարին յուրահատուկ էր ուսխորհրդի համար այն առումով, որ 2014 թ. լրացավ ՈւԽ-ի հիմնադրման 20-ամյակը, որին նվիրված բազմաթիվ այլ միջոցառումների շարքում հոկտեմբեր ամսին կազմակերպվեց միջազգային ուսանողական համաժողով Երևանում:

Սահմանված կանոնակարգերի համաձայն՝ իրականացվել են տարբեր մակարդակի ՈւԽ անդամների ընտրություններ: Ուսանողության կողմից ընտրված անդամների միջոցով ապահովվել է ուսանողների մասնակցությունը Համալսարանի կառավարման գործընթացում. ուսանողները ներգրավվել են տարբեր մակարդակի կառավարման մարմիններում (ԵՊՀ խորհուրդ, գիտական խորհուրդ, ֆակուլտետների խորհուրդներ և գիտական խորհուրդներ):

ԵՊՀ ուսանողական խորհուրդն իր հանձնաժողովների համակարգված և կանոնավոր աշխատանքի արդյունքում խթանել է ուսանողների ռազմահայրենասիրական, գիտակրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական և ֆիզիկական զարգացումը, աջակցել է ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել է ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը, ինչպես նաև զբաղվել է ուսանողներին հուզող բազմաթիվ այլ խնդիրներով: 2014/2015 ուստարվա ընթացքում ԵՊՀ ՈւԽ-ն կազմակերպել է շուրջ 300 միջոցառում:

ՈւՄ աշխատանքներում էական կարևորություն ունի ուսանողներին գործող կրթական համակարգի, իրենց իրավունքների և պարտականությունների և ներհամալսարանական կյանքի մասին իրազեկելու խնդիրը: Կազմակերպվել են քննարկումներ, բանավեճեր, սեմինարներ մասնավորապես 1-ին կուրսեցիներին իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնելու նպատակով, ինչպես նաև ուսուցման բոլոնյան համակարգի մասին իրազեկելու և այն ավելի մատչելի դարձնելու համար: Առաջին կուրսեցիների համար անցկացվել է երկփուլ սեմինար-դասընթաց, որի նպատակը ուսանողներին ուսանողական ինքնակառավարման գործընթացի մանրամասների և իրավական նորմերի մասին համընդհանուր գիտելիքներ տալն էր:

Ակտիվ գործում են ՈւՄ կայքը և ուսանողական պորտալը: Ներկայումս ԵՊՀ ուսանողական պորտալը ներառում է 8 առանձին գործող կայք:

Ուսանողական կազմակերպությունների գործունեության առաջնությունների շարքում են ռազմահայրենասիրական բնույթի միջոցառումները, որոնց թվում՝ հանդիպումներ, քննարկումներ, հուշ-երեկոներ, գիտաժողովներ Համալսարանում, ինչպես նաև այցելություններ գորամասեր, պատմամշակութային վայրեր, թանգարաններ և այլն: Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ ուսանողներն ու պրոֆեսորադասախոսական կազմը չորս տարբեր մեծ ծրագրերով այցելել են Լեոնային Ղարաբաղի Հանրապետություն: Բացի ավանդաբար աշնանը և գարնանը ԼՂՀ Քաջաթաղի շրջանի Համալսարանական պուրակում կազմակերպվող երկու ծառատունկ-ծրագրերից՝ Հաղթության շրջանում կազմակերպվել է միջբուհական ամառային ճամբար-բանակում 120 ուսանողների մասնակցությամբ, ինչպես նաև այցեր ԼՂՀ պատմաճարտարապետական հուշարձաններ, գորամասեր, դպրոցներ և այլն:

Հետևողական աշխատանքներ են իրականացվել ուսանողների սոցիալական վիճակը բարելավելու ուղղությամբ, մասնավորապես՝ իրականացվել են ամառային հանգստի, ազատ ժամանցի ծրագրեր, ուսանողների ուսման վարձերի զեղչեր, կրթաթոշակներ, ցուցաբերվել է այլ աջակցություն (ՈւՄ վերոհիշյալ ծրագրերում ներգրավված է եղել շուրջ 1000 ուսանող):

Ուսանողների ազատ ժամանցը կազմակերպելու ուղղությամբ անցկացվել են բանավեճի, «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ»-ի և այլ ինտելեկտուալ մրցակցային առաջնություններ: Ուսանողության միջազգային օրվա առթիվ կազմակերպվել է ամենամյա «Ուսա-

նողական ռեկտորատ» միջոցառումը, երբ ուսանողական շարադրությունների մրցույթի հաղթողները մեկ օրով ստանձնում են «համալսարանը ղեկավարելու» պարտականությունները: Հայրենաճանաչողական ծրագրերի շրջանակներում շուրջ 2500 ուսանող մասնակցել է ՈԻԽ-ի կողմից կազմակերպված էքսկուրսիաներին դեպի ՀՀ պատմամշակութային վայրեր և թանգարաններ:

Կազմակերպվել է ԵՊՀ ուսանողական սպարտակիադան, որի շրջանակում տեղի են ունեցել ֆուտբոլի, սեղանի թենիսի, շախմատի, բասկետբոլի մրցումներ:

Աշխատանքներ են ծավալվել նաև ՀՀ տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում: Հաշվետու ուստարում ակտիվ է եղել համագործակցությունը Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և հասարակական բազմաթիվ այլ կազմակերպությունների հետ, որի շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ այցելություններ Արցախ, սեմինար-դասընթացներ, ՀՀ բարձրագույն կրթության որակի վերաբերյալ քննարկումներ և այլն:

* * *

2014/2015 ուստարում ԵՊՀ ուսանողական գիտական ընկերությունն իրականացրել է իր կանոնադրային պահանջներից բխող գործունեություն, կազմակերպել ուսանողության գիտական, կրթական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը նպաստող՝ ընդհանուր առմամբ 559 միջոցառում, ինչը 150-ով ավել է նախորդ ուստարվա միջոցառումների ընդհանուր թվից: Միջոցառումները բազմաբնույթ են՝ հանրապետական, միջբուհական և ֆակուլտետային գիտաժողովներ, սեմինար-քննարկումներ, դասախոսություններ, ֆիլմերի դիտումներ, օլիմպիադաներ, ինտելեկտուալ խաղեր, դատախաղեր, բանավեճեր, գիտաճանաչողական էքսկուրսիաներ և այլն:

Ուսումնական տարվա ընթացքում տեղի ունեցած հանրապետական և միջբուհական գիտաժողովներից հատկանշական են ՈԻԳԸ տարեկան գիտական նստաշրջանը, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված գիտաժողովը, հայ բանասիրության ֆակուլտետի ՈԻԳԸ աշնանային գիտական նստաշրջանը, պատմության ֆակուլտետի հիմնադրման 95-ամյակին, աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի հիմնադրման 80-ամյակին, սոցիոլոգիայի ֆակուլտետի հիմնադրման 10-ամյակին նվիրված գիտաժողովները, «Հայագիտության արդի հիմնախնդիրները» խորագրով գիտաժողովը՝ նվիրված ԵՊՀ 95- և ԱրՊՀ 45-ամյակներին:

Ինչպես նախորդ երկու ուստարիներին, հաշվետու ուստարում ևս ՈԻԳԸ կազմակերպած գիտաժողովների ընթացքում հնչել է շուրջ 1000 գիտական զեկուցում: ՈԻԳԸ տարեկան նստաշրջանի ընթացքում ներկայացվել է ավելի քան 350 զեկուցում ԵՊՀ 19 ֆակուլտետներից, Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնից և Հայագիտական հետազոտությունների ինստիտուտից, ՀՀ և ԼՂՀ շուրջ 10 այլ բուհերից, Ռուսաստանի Դաշնությունից և Ռուսաստանի Դաշնությունից:

Նախորդ ուստարում կազմակերպվել էր գիտական աշխատանք կատարելու հմտությունների ուսուցման միասնական եռօրյա դասընթաց: Որպես ծրագրի շարունակություն՝ հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ գրեթե բոլոր ֆակուլտետներում կազմակերպվել են նմանատիպ սեմինարներ (ընդհանուր թվով՝ 27 սեմինար): Ուստարվա ընթացքում կազմակերպված շուրջ երկու տասնյակ միջոցառումներ (դրանց թվում՝ գիտաժողովներ, սեմինար-քննարկումներ, ֆիլմի դիտումներ, էսսեների մրցույթ և այլն) նվիրվել են Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին:

Առաջընթաց է արձանագրվել ՈԻԳԸ հրատարակումների թվի հարցում: Նախորդ ուստարվա համեմատ՝ այն շուրջ 3 անգամ ավելացել է, ինչը պայմանավորված է նրանով, որ «ԵՊՀ ՈԻԳԸ գիտական հոդվածների ժողովածու» գիտական պարբերականի 2015 թ. 7 համարներում ընդգրկված են ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջանի հոդվածները:

Հարկ է նշել, որ 2014 թ. հոկտեմբերի 30-ին «ԵՊՀ ՈԻԳԸ գիտական հոդվածների ժողովածու»-ն գրանցվել է պարբերականների միջազգային ստանդարտ համարակալման համակարգում՝ որպես պարբերաբար տպագրվող ժողովածու՝ ISSN 1829-4367 համարանիշով: Զուգահեռաբար գործարկվել է ԵՊՀ ՈԻԳԸ գիտական հրատարակումների կայքը: 2014 թ. դեկտեմբերին «ԵՊՀ ՈԻԳԸ գիտական հոդվածների ժողովածու»-ն ընդգրկվել է նաև ՀՀ ԲՈՀ-ի՝ ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրապարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

Ընդհանուր առմամբ, ՈԻԳԸ աշխատանքներին մասնակցում է մոտ 1550 սովորող, որից ՈԻԳԸ կառուցվածքային ստորաբաժանումների անդամ է շուրջ 350-ը: Այլ բուհերից ու գիտահետազոտական կենտրոններից ԵՊՀ ՈԻԳԸ աշխատանքներում ներգրավված է շուրջ 400 սովորող: Իսկ մոտ 500 դասախոս անմիջականորեն աջակցում է ՈԻԳԸ աշխատանքներին (գիտական հոդվածների ղեկավարում կամ գրա-

խոսում, գիտաժողովների նիստերի նախագահում, սեմինարավարություն, լրացուցիչ դասախոսությունների անցկացում և այլն):

2. Մշակութային գործունեություն

ԵՊՀ-ում գիտակրթական գործընթացներին զուգահեռ կարևորվում է նաև ուսանողների արտալսարանային մշակութային կյանքը, նրանց մասնակցությունը մշակութային իրադարձություններին: Այս առումով 2014/2015 ուստարում ևս ակտիվ է գործել Մշակույթի կենտրոնը, որը կազմակերպել է 30 միջոցառում, 11 կինոդիտումքննարկում: «Համալսարանական» թատրոն-ստուդիան բեմադրել է 1 նոր ներկայացում: Վերոնշյալ միջոցառումներին մասնակցել է շուրջ 10.000 ուսանող: Բացվել է երկու նոր խումբ՝ կիթառահարների խումբ և ժողովրդական գործիքների նվագախումբ:

Կենտրոնն արդեն 8-րդ տարին է կազմակերպում է համալսարանականների կողմից շատ սիրված և սպասված «ԵՊՀ մեծարման և առաջին կուրսեցիների երդման արարողությունը»: Յուրաքանչյուր տարի այն նվիրվում է Հայաստանի և ԵՊՀ-ի համար կարևոր որևէ իրադարձության: Այս տարի այն նվիրված էր ԵՊՀ 95- և ԵՊՀ ուսանողական խորհրդի 20-ամյակներին: Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի և ՈԻԽ-ի հետ համատեղ կազմակերպվել է «Լավագույն ուսանող-2014» համերգ-մրցանակաբաշխությունը: Տեղի է ունեցել համերգ՝ նվիրված ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հիմնադրման 80- և վերաբացման 30-ամյակներին: Մշակույթի կենտրոնի կողմից կազմակերպվել է ամենամյա ամանորյա համերգ-ներկայացումը, որն այս անգամ կրում էր «Երնե՛կ, թե այս Նոր տարին...» խորագիրը: Իրականացվել է «Գարուն, սեր, կիթառ...» գրական-երաժշտական երեկոն՝ նվիրված Կանանց միջազգային օրվան: Առաջնային համարելով նոր սերնդի մշակութային դաստիարակությունն ու հայ մեծերին ճանաչելու կարևորությունը՝ Մշակույթի կենտրոնի «Համալսարանական» թատրոն-ստուդիայի սաները Թատրոնի միջազգային օրվա կապակցությամբ հաշվետու ուստարում ևս այցելեցին ՀՀ գրականության և արվեստի թանգարան, ապա Կոմիտասի անվան պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու հայ բեմի հանճարներին: ԵՊՀ պատմության ֆակուլտետի հետ համատեղ կազմակերպվել է Թաթուլ Կրպեյանի 50-ամյակին նվիրված հուշ-երեկո՝ Մշակույթի կենտրոնի երգչախմբի և աղջիկների պարային համույթի մասնակ-

ցությամբ: Շարունակելով մշակութային գործիչների հետ հանդիպումների շարքը՝ Համալսարանի ուսանողությունը հանդիպել է «Զույգ արեգակներ» նոր բալետային ներկայացման հեղինակ, բալետմեյստեր Ռուդոլֆ Խառատյանի և ներկայացման ստեղծագործական խմբի հետ, որը բաղկացած էր աշխարհի լավագույն բալետային պարողներից: Ներկայացումը հանդիսանում էր հայ արվեստի նվիրվածների ստեղծագործությունների մի յուրահատուկ ամբողջություն՝ ընդգրկելով Մաշտոցի շարականները, Թորոս Ռոսլինի մանրանկարները, Արշիլ Գորկու վերացական պատկերները, Արամ Խաչատրյանի, Ալան Հովհաննեսի, Առնո Բաբաջանյանի, Աշոտ Արեյանի և Ավետ Տերտերյանի երաժշտությունները: Վերսկսելով «ԵՊՀ ռեկտորը ներկայացնում է...» հանդիպումների ծրագիրը՝ կազմակերպվել է «ԵՊՀ ռեկտորը ներկայացնում է ...Սաթյաններին» երաժշտական երեկոն՝ նվիրված Սաթյանների կոմպոզիտորական գերդաստանին, մասնավորապես՝ Աշոտ Սաթյանին, Արամ Սաթունցին, Արամ Սաթյանին:

Հաշվետու ուստարում Մշակույթի կենտրոնը կազմակերպել և իրականացրել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների մի քանի ծրագիր: Տեղի է ունեցել ամերիկահայ գրող Զոյա Վան Դայկի «Աքսորվածները» երազպիսեի անգլերենով բեմադրված ընթերցանությունը Մշակույթի կենտրոնի «Համալսարանական» թատրոն-ստուդիայի սաների մասնակցությամբ: Ժամանակակից արվեստի թանգարանում կազմակերպվել է ՀՀ վաստակավոր գործիչ, նկարչուհի Աննա Հարությունյանի «Ու կյանքը սկսվեց...» խորագիրը կրող անհատական ցուցահանդեսը Մշակույթի կենտրոնի երգչախմբի և թատրոն-ստուդիայի մասնակցությամբ: «Աշխարհասփյուռ հայ արվեստագետներ» ծրագրի շրջանակներում անդրադարձ է կատարվել Ցեղասպանության հետևանքով աշխարհի տարբեր երկրներում հայտնված, այնտեղ ապրող և ստեղծագործող հայ մշակութային գործիչներին: Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակներում կազմակերպվել է «Աշխարհասփյուռ հայ արվեստագետներ... Ֆրանսիա» միջոցառումը, իսկ Մեծ հայրենական պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 70-ամյակի կապակցությամբ՝ «Աշխարհասփյուռ հայ արվեստագետներ...Ռուսաստան» միջոցառումը: Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակմանը և ոգեկոչմանը նվիրված Գիտխորհրդի հանդիսավոր նիստին ներկայացվել է համերգային ծրագիր, որին հրավիրվել էր նաև «Նորայր Քարտաշյան և Վան նախագիծ» համույթը: Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի է

ունեցել «Փարիզյան դատավարություն» ներկայացման դիտում, որը բեմադրված էր Պերճ Զեյթունցյանի համանուն պիեսի հիմա վրա: Ցեղասպանությանը նվիրված միջոցառումների շրջանակներում ցուցադրվել են «Արարատից Եվրոպա», «Շների կղզին» և «Մայրիկ» ֆիլմերը:

2014/2015 ուստարում Մշակույթի կենտրոնը, ավանդաբար իրականացվող ծրագրերին և միջոցառումներին զուգահեռ, գործուն մասնակցություն է ունեցել ԵՊՀ-ում և հանրապետության տարբեր պետական հաստատություններում կազմակերպված մի շարք միջոցառումների և փառատոնների՝ բարձր պահելով ԵՊՀ-ի պատիվը: «Հայ-Ֆեստ» միջազգային թատերական փառատոնի շրջանակներում Համազգային թատրոնում ԵՊՀ մշակույթի կենտրոնը բեմադրել է «Ռոմեո և Ջուլիետ» երաժշտական նոր ներկայացումը, որն արժանացել է «Հանդիսատեսի համակրանք» մրցանակին: Կենտրոնի մեներգիչներ Արփինե Խեչիկյանը, Տիգրան Գրիգորյանը և Մարիցա Թիլիքյանը մասնակցել են «Մենք երգում են Առնո Բաբաջանյանի երգերը» և «Խորհրդային երգեր» մրցույթ-փառատոնների դափնեկիրների համերգին: Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի կազմակերպած ֆրանսիական երգի մրցույթ-փառատոնում Մշակույթի կենտրոնի մեներգիչ Հովհաննես Կարապետյանը և դաշնակահար Արտյոմ Անդրեասյանը զբաղեցրել են 2-րդ տեղը: Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 70-ամյակին նվիրված միջազգային «Հարմոնիա» ռուսական կենտրոնի կազմակերպած «Ռուսական մարտական երգեր» («Русские военные песни») խորագրով ուսանողական հանրապետական երաժշտական մրցույթ-փառատոնի երեք մրցութային փուլերի արդյունքում ԵՊՀ-ն ներկայացնող Մշակույթի կենտրոնի վեց մեներգիչներից Մարիցա Թիլիքյանը, Արևիկ Պռազյանը և Մարիաննա Վարոսյանը դարձել են դափնեկիրներ:

2014/2015 ուստարում Մշակույթի կենտրոնը շարունակել և ընդլայնել է համագործակցությունը ՀՀ նախարարությունների, պետական ու հասարակական հաստատությունների, մշակութային և հասարակական գործիչների հետ: ՀՀ սփյուռքի նախարարության «Սփյուռք ամառային դպրոց-2015» ծրագրի ազգային երգ ու պարի դասընթացները կազմակերպել է ԵՊՀ մշակույթի կենտրոնը: Կենտրոնն արդեն չորս տարի է պրոֆեսիոնալ հիմքերով անցկացնում է այդ դասընթացները՝ հրավիրելով նաև անվանի մասնագետների, ինչպիսիք են ՀՀ ժողովրդական արտիստ, հայ ջազային երաժիշտ Մարտին Վարդազարյանը, ՀՀ ժողովրդական արտիստ, պարուսույց Սուրեն

Գյանջումյանը, «Կարին» ավանդական երգի և պարի գեղարվեստական ղեկավար Գագիկ Գինոսյանը: Ինչպես նախորդ 5 տարիներին, հաշվետու տարում ևս Մշակույթի կենտրոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի հետ համատեղ Վարդանանց տոնին կազմակերպել է Մբ. Վարդանանց նահատակներին նվիրված միջոցառում: Հայաստանի Շախմատի ակադեմիայի կողմից կազմակերպված և Մարտունիում անցկացվող «Սևանա լիճ 2015» շախմատի միջազգային երիտասարդական մրցաշարի փակման արարողության համերգային ծրագրին մասնակցել են Մշակույթի կենտրոնի մենեջրիչները և աղջիկների պարային համույթը: Կենտրոնի աջակցությամբ «Միջմշակութային ուսումնասիրությունների ուսուցման և երկխոսության միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունն իրականացրել է «Մոզական Ասիա» խորագրով լուսանկարների ցուցադրություն: ՀՀ վաստակավոր գործիչ, դերասանուհի Լալա Մնացականյանի բեմադրությամբ ՀՀ ժողովրդական արտիստ Ռաֆայել Քոթանջյանի կուրսը հանդես է եկել «Հում օր կամ մեծ աղմուկ ոչնչից» երգիծական մանրապատումներով: Հունիսի 1-ի՝ Երեխաների պաշտպանության օրվա կապակցությամբ Գյումրու տիկնիկային թատրոնը հանդես է եկել Հովհ. Թումանյանի «Պոչատ աղվեսը» տիկնիկային ներկայացմամբ՝ նվիրված Գյումրու տիկնիկային թատրոնի 80-ամյակին: ԵՊՀ մշակույթի կենտրոն, Հայաստանի Ազգային կինոկենտրոն և Կամերային թատրոն եռահամագործակցության արդյունքում թատրոնի ղեկավար Արա Երնջակյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է «Արմակեդոն» հոռետեսական կատակերգության դիտման համար ամբողջ դահլիճի տոմսերի նվիրատվություն, այնուհետև դիտում-քննարկում:

ԵՊՀ մշակույթի կենտրոնի կինոակումբի և Հայաստանի ազգային կինոկենտրոնի կողմից յուրաքանչյուր չորեքշաբթի ցուցադրվել է հայկական արտադրության նոր 11 ֆիլմ, որոնց ցուցադրությունից հետո տեղի են ունեցել դիտում-քննարկումներ ֆիլմարտադրողների հետ (ռեժիսորներ, դերասաններ, պրոդյուսերներ, սցենարիստներ):

3. Կարիերայի խթանում և աշխատանք շրջանավարտների հետ

Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի 2014/2015 ուսումնական տարվա գործունեության հիմքում ընկած են եղել հետևյալ ծրագրերն ու միջոցառումները՝

- Համալսարան-ձեռնարկություն փոխգործակցության խթանում,

- Պարբերական բնույթ կրող սեմինար-դասընթացների կազմակերպում,
- Ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող այցեր և հանդիպումներ,
- Ինտերնշիփների և լրացուցիչ ուսանողական պրակտիկայի կազմակերպում,
- Աշխատանքային հնարավորությունների ընձեռում,
- Էլեկտրոնային նոր ռեսուրսների մշակում և զարգացում,
- Կրթաթոշակներ:

2014 թ. մայիսին կենտրոնի նախաձեռնությամբ հայաստանյան առաջատար բուհերի (Երևանի պետական համալսարան, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, Հայաստանի ամերիկյան համալսարան, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, Հայաստանի ազգային ազրարային համալսարան, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան) ուսանողների կարիերայի խնդիրներով զբաղվող կառույցների միջև կնքվեց համագործակցության հուշագիր, որում, ի թիվս այլ խնդիրների, ամրագրվեց նաև ամենամյա միջբուհական աշխատանքային տոնավաճառի կազմակերպման դրույթը:

2014 թ. նոյեմբերի 19-ին ԵՊՀ-ում կազմակերպվեց «Բուհից աշխատաշուկա՝ 1 քայլ» խորագրով առաջին միջբուհական աշխատանքային տոնավաճառը, որին մասնակցեցին շուրջ 100 մասնավոր և պետական ձեռնարկություն, ինչպես նաև տեղական և միջազգային կազմակերպություն: Միջոցառման ընթացքում մասնակից կազմակերպությունների ներկայացուցիչները իրենց հատկացված տաղավարներում ներկայացրին տեղեկատվական նյութեր ընկերության և առաջարկվող աշխատատեղերի, ինտերնշիփերի և տվյալ կազմակերպության կադրային քաղաքականության վերաբերյալ:

Միաժամանակ անցկացվեց «ՀՀ կրթական համակարգ և աշխատաշուկա. առկա խնդիրներն ու փոխգործակցության ընդլայնմանն ուղղված քայլեր» խորագրով կլոր սեղան սեմինար-քննարկում մի շարք ձեռնարկությունների, միջազգային կազմակերպությունների պատասխանատու անձանց, պետական այրերի և նշված ոլորտում մասնագիտացած փորձագետների մասնակցությամբ:

Կազմակերպվեցին նաև ուսանողների համար նախատեսված դասընթացները հետևյալ թեմաներով՝

- Բարձրագույն կրթության հնարավորությունները Erasmus+ ծրագրում,
- Ներքին աուդիտորի մասնագիտության ընձեռած հնարավորությունները,
- Որոնք են աշխատաշուկայում մրցունակ լինելու հիմնական կարողությունները:

Հաշվետու ուստարում կենտրոնը բավականին ակտիվ գործունեություն է ծավալել ոչ ֆորմալ կրթության ձևաչափով անվճար սեմինար-դասընթացների կազմակերպման ուղղությամբ: Շուրջ 800 ուսանող մասնակցել է ինչպես կենտրոնի աշխատողների, այնպես էլ գործընկեր կազմակերպությունների («Ամբոբ Հայաստան» ՀԿ, «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի «Էսպաս» երիտասարդական կրթամշակութային կենտրոն, «Օրանժ Արմենիա» ՓԲԸ, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ, «Այ Էյ Բի» բիզնեսի միջազգային ակադեմիա) մասնագետների և անկախ փորձագետների կողմից իրականացված թեմատիկ տարբեր սեմինար-դասընթացների:

Ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող հանդիպումների շարքում հարկ է առանձնացնել «Կոկա-Կոլա Հելլենիկ Բորլինգ Քամփնի Արմենիա» և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ընկերությունների ներկայացուցիչների հետ հանդիպումները, որոնց ակտիվ մասնակցություն է ցուցաբերել տարբեր ֆակուլտետների 118 ուսանող:

Աշխատաշուկայում երիտասարդ մասնագետների ինտեգրման և մրցունակության բարձրացման հարցում կարևորվել է պրակտիկ հմտությունների գործոնը, և այդ առումով կազմակերպվել են նաև բազմաթիվ ինտերնշիփեր և լրացուցիչ ուսանողական պրակտիկաներ, որոնց մասնակցել է ԵՊՀ տարբեր ֆակուլտետների 75 ուսանող: Մասնավորապես, 19 ուսանող՝ «Ռոսգոստրախ Արմենիա» ՓԲԸ-ում, 24-ը՝ «ՎիվաՍել-ՄՏՄ» ընկերության տարբեր բաժիններում, 3-ը՝ «Իդրամ» ՍՊԸ-ում, 3-ը՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովում, 11-ը՝ «Զիզգագ» ՍՊԸ-ում, 13-ը՝ «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ում և այլն:

Ձեռնարկությունների հետ համագործակցության շրջանակի արդյունքում կենտրոնն աջակցել է 83 ուսանողի և շրջանավարտի՝ աշխատանքի ընդունման հարցում:

Կենտրոնի աշխատանքների համակարգման, արդյունավետության բարձրացման նպատակով վերամշակվել է կայքը (<http://career.yasu.am/>), ստեղծվել է ձեռնարկությունների հետ համագործակցության պորտալը (<http://yasu.am/cooperation/>):

Հաշվետու ուստարվա ընթացքում կենտրոնի միջնորդությամբ «ՎիվաՄեյ-ՄՏՍ»-ը վճարել է ԵՊՀ տարբեր ֆակուլտետների 22 ուսանողի տարեկան վարձավճարը, իսկ «Օրանժ Արմենիա» ընկերությունը կրթաթոշակ է տրամադրել է գերազանց առաջադիմություն ցուցաբերած 10 ուսանողի:

* * *

Վերոնշյալով հանդերձ՝ ուսանողների և շրջանավարտների հետ տարվող աշխատանքներում ևս առկա են թերացումներ ու բացթողումներ: Մասնավորապես՝

- Ուսանողական կազմակերպությունների գործունեության պլանավորման բաղադրիչը, միջոցառումների նախապատրաստման և կազմակերպչական որոշ աշխատանքային փուլերը բարելավման կարիք ունեն:
- Ուսանողական գործուղումների միջոցները բավարար չեն արտերկրում տեղի ունեցող միջոցառումներին և ծրագրերին պատշաճ մասնակցություն ապահովելու համար:
- Մի շարք կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանումներում (կենտրոններ, ինստիտուտ) դեռևս ամբողջովին ձևավորված չեն ուսանողական կազմակերպությունների համապատասխան օղակներ:
- Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների (ֆիզիկական դժվարություններ, ծանր սոցիալական խնդիրներ ունեցող և այլ անձինք) ուսումնառության համար առկա են էական խոչընդոտներ:
- Մարզական միջոցառումների համար ենթակառուցվածքները գտնվում են անբավարար վիճակում:
- Մշակութային խմբերը մասնակցության հնարավորություն են ընձեռում խիստ սահմանափակ թվով ուսանողների կամ շրջանավարտների:
- Շրջանավարտների զբաղվածության վիճակագրական բազան, ինչպես նաև շրջանավարտների հետ հետադարձ կապի մեխանիզմները բարելավելու կարիք ունեն:
- Ձեռնարկությունների հետ համագործակցության զարգացման բնագավառում թույլ է ֆակուլտետների անմիջական ներգրավումն ու մասնակցությունը:

ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ռեկտորատն ու արհեստակցական կազմակերպությունը, կարևորելով ԵՊՀ աշխատողների սոցիալական վիճակի բարելավումը, ինչպես նաև սոցիալական գործընկերության մակարդակի բարձրացումը, մի շարք աշխատանքներ են իրականացրել սոցիալական քաղաքականության ուղղությամբ՝ առավել ուշադրություն դարձնելով Համալսարանի աշխատողների հանգստի, առողջության պահպանման, սոցիալական այլևայլ խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրագործմանը: Այդ նպատակով ԵՊՀ արհեստակցական կազմակերպության ֆինանսական միջոցներից օգնության կարգով Համալսարանի 382 աշխատողի, առանձին դեպքերում նաև սոցիալապես խիստ անապահով և հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողների հատկացվել է 16.407.000 (տասնվեց միլիոն չորս հարյուր յոթ հազար) դրամի օգնություն:

2014/2015 ուստարում ԵՊՀ աշխատողների՝ ԵՊՀ-ում սովորող 188 երեխայի համար կիրառվել է ուսման վարձի մինչև 80 % զեղչ՝ Համալսարանի ֆինանսական միջոցներից հատկացնելով 51.176.000 (հիսունմեկ միլիոն հարյուր յոթանասունվեց հազար) դրամ, իսկ խրախուսման և օգնության նպատակով 112 աշխատողի հատկացվել է 16.937.200 (տասնվեց միլիոն ինը հարյուր երեսունյոթ հազար երկու հարյուր) դրամ:

Կարևորելով երեխաների գեղագիտական դաստիարակությունը՝ ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունն իր ֆինանսական միջոցների հաշվին աշխատողների և ուսանողների 2020 երեխաների և թոռնիկների համար կազմակերպել և իրականացրել է ամանորյա միջոցառումներ՝ ներկայացման տոմսերի և նվերների հատկացմամբ, իսկ Հունիսի 1-ի՝ Երեխաների պաշտպանության օրվա առթիվ ձեռք է բերել մանկական երաժշտական ներկայացման 2100 տոմս:

Ֆակուլտետներում և ստորաբաժանումներում իրականացվել են Կանանց միջազգային օրվան՝ Մարտի 8-ին նվիրված միջոցառումներ 1562 կին աշխատողի համար՝ ԵՊՀ արհեստակցական կազմակերպության ֆինանսական միջոցներից ծախսելով 3.139.000 (երեք միլիոն հարյուր երեսունինը հազար) դրամ գումար:

Համալսարանականներին մայրաքաղաքի մշակութային կյանքից անմասն չթողնելու համար հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը ձեռք է բերել և կոլեկտիվի անդամներին անվճար հատկացրել է համերգային և թատերական տարբեր ներկայացումների 2487 տոմս:

Հաշվետու շրջանում հատկացված ուղեգրերով Ծաղկաձորի ուսումնասիրտադրական բազայում իրենց հանգիստն են անցկացրել Համալսարանի մոտ 1460 աշխատող, նրանց ընտանիքի անդամներ և ուսանողներ (5985 մարդ-օր): Սոցիալապես առավել անապահով աշխատողների նկատմամբ ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը կիրառել է ուղեգրերի արժեքը 50 տոկոսով զեղչելու սկզբունքը:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության «Ծննդօգնություն համալսարանականներին» ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում 79 աշխատողի ընդհանուր առմամբ հատկացվել է 4.760.000 (չորս միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար) դրամ գումար (38-ին՝ առաջին երեխայի համար, 28-ին՝ երկրորդի, 11-ին՝ երրորդի, 1-ին՝ չորրորդի և 1-ին՝ երկրորդ զույգ երեխայի համար):

Հաշվի առնելով ԵՊՀ կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետի ավարտը՝ 2015 թ. մայիսի 20-ին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-ռեկտորի և ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահի կողմից կնքվել է ԵՊՀ նոր կոլեկտիվ պայմանագիրը, որը նախապես մշակվել է Գործատուի և Արհեստակցական կազմակերպության կողմից ստեղծված համատեղ հանձնաժողովում, իսկ այնուհետև քննարկվել և հավանության է արժանացել ԵՊՀ կոլեկտիվի կողմից:

2014/2015 ուսումնական տարում ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը որոշ ֆակուլտետների կոլեկտիվների համար մեկօրյա և բազմօրյա արշավներ է կազմակերպել դեպի Հայաստանի, Ջավախքի և Արցախի տարբեր տեսարժան վայրեր:

2015 թվականի ապրիլից ԵՊՀ արհեստակցական կազմակերպության արհկոմիտեի որոշմամբ մեկնարկել է ԵՊՀ նորապսակ աշխատողներին Ծաղկաձորի ուսումնասիրտադրական բազայում արհկոմիտեի կողմից անվճար հնգօրյա ուղեգիր հատկացնելու ծրագիրը, որն իրականացվում է ԵՊՀ արհեստակցական կազմակերպության ֆինանսական միջոցների հաշվին: Այն գործում է Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) գործակալության կողմից ամուսնության վկայականի տրման օրվանից՝ վեց ամիս ժամկետում:

2015 թ. ապրիլից սկսած՝ ռեկտորատի հետ համատեղ արհեստակցական կազմակերպությունը կազմակերպել և իրականացրել է ԵՊՀ աշխատողների պարտադիր բժշկական զննությունը Երևանի թիվ 4 պոլիկլինիկայում: Ձևությունը սահմանված կարգով կատարվել է աշխատանքային ժամերին և գործատուի հաշվին:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունում գործող անվճար իրավաբանական խորհրդատվության ծառայությունից հաշվետու ժամանակաշրջանում օգտվել է 124 աշխատող՝ ստանալով իրավաբանական խորհրդատվություն ոչ միայն աշխատանքային, այլև քաղաքացիաիրավական, ընտանեկան, վարչական և այլ իրավական խնդիրների վերաբերյալ:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության և «Ինգո Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության միջև կնքված փոխհամաձայնության շնորհիվ հաշվետու ուստարում ԵՊՀ 204 աշխատող և ուսանող իրենց և ընտանիքի անդամներին պատկանող ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությունը իրականացրել են սահմանվածից 10 % զեղչով:

Գործարկվել է ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նոր ինտերնետային կայքը (<http://ysu.am/tu>), որը մասնրամասնորեն ներկայացնում է կազմակերպության գործունեությունն ու ծրագրերը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ուստարվա ընթացքում ԵՊՀ ծախսերի և եկամուտների նախահաշվով հատկացված միջոցների շնորհիվ զգալիորեն բարելավվել է Համալսարանի նյութատեխնիկական բազան: Ձեռք են բերվել 55 մլն դրամ արժողությամբ համակարգչային տեխնիկա (համակարգիչներ, շարժական և պլանշետային համակարգիչներ, համակարգչային պահեստամասեր, պատճենահանող սարքեր, տպիչներ և այլն), 1,7 մլն դրամի չափով հեռախոսակայանների բաղադրամասեր, 21,5 մլն դրամի չափով էլեկտրատեխնիկա և կենցաղային սարքավորումներ (սառնարան, օդորակիչ, փոշեկուլ, հեռուստացույց, հեռախոս և այլն): 38 մլն դրամ հատկացվել է կահույք գնելու համար (պահարան, սեղան, աթոռ, ուսանողական նստարան, գրատախտակ և այլն), 22 մլն դրամ՝ գրենական պիտույքների, 14 մլն դրամ՝ քիմիական նյութերի, 26 մլն դրամ՝ տնտեսական ապրանքների ու սանհիգիենիկ միջոցների, 22 մլն դրամ՝ բեռզինի, դիզվառելիքի ու քսայուղերի, 9,8 մլն դրամ՝ ավտոպահեստամասերի, 3 մլն դրամ՝ պոլիգրաֆիական նյութերի, 2,5 մլն դրամ՝ սպորտային գույքի, 2,9 մլն դրամ՝ շերտավարագույրների, ուղեգորգերի ու ցուցանակների համար և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են նաև շինարարական ու բարեկարգման աշխատանքներ՝ ծախսելով ընդհանուր առմամբ շուրջ 400 մլն դրամ:

Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցի կապակցությամբ ԵՊՀ գրադարանի դիմաց՝ Չարենցի փողոցին հարող հատվածում, ստեղծվել է Երախտիքի ծառուղի, որտեղ տեղադրվել են ցեղասպանությունը դատապարտած ու հայերին օգնության ձեռք մեկնած օտարազգի հայտնի 12 գործչի կիսանդրիներ: Թիվ 5 ուսումնական մասնաշենքի բակում տեղադրվել է ԴՆԹ-ն խորհրդանշող արձան, իսկ թիվ 8 մասնաշենքին հարող պուրակում կանգնեցվել է Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակին նվիրված հուշակոթող:

Կառուցվել է թիվ 1 ուսումնական մասնաշենքի մանսարդային հարկը, վերանորոգվել են կենտրոնական, թիվ 2, 4 և 6 ուսումնական մասնաշենքերի մի շարք լսարաններ և սանհանգույցներ: Կաթսայատանն իրականացվել են 86,2 մլն դրամի հիմնանորոգման աշխատանք, առաստաղի ձայնամեկուսացում և ներքին հարդարում, տեղադրվել է 5 նոր կաթսա՝ իրենց գազայրիչներով:

10,4 մլն դրամ արժողությամբ հակահրդեհային-ազդանշանային համակարգ է տեղադրվել հաշվապահությունում, գրադարանում, հին ու նոր գրապահոցներում և հարակից սենյակներում:

ԵՊՀ ավտոպարկի կողմից իրականացվել է շուրջ 323 ուղերթ հյուրերի սպասարկման, գիտաժողովներին մասնակցության, գիտաճանաչողական էքսկուրսիաների, ուսումնասիրտադրական պրակտիկայի, մշակութային և ռազմահայրենասիրական միջոցառումների համար:

ԵՊՀ Ծաղկաձորի, Հանքավանի և Բյուրականի ուսումնասիրտադրական բազաներում պատշաճ կերպով կազմակերպվել են աշխատողների և ուսանողների հանգստի և ուսումնասիրտադրական պրակտիկայի հետ կապված աշխատանքները:

Ցանկապատվել է ԵՊՀ ջերմատան տարածքը: Մեծածավալ աշխատանք է կատարվել ԵՊՀ հարակից տարածքը կանաչապատելու և ծաղկազարդելու ուղղությամբ:

Տեխնիկապես վերազինվել է ԵՊՀ սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացնող «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի աշխատակազմը, և հետևողականորեն բարձրացվել է սանմաքրման աշխատանքների որակը:

2015 թ. մայիսին կնքված պայմանագրի համաձայն՝ ԵՊՀ անվտանգության աշխատանքների կատարումը ստանձնել է «Ալֆա-Դելտա» անվտանգության ծառայությունը: Ընդլայնվել է տեսահսկման ցանցը, ձեռք են բերվել նոր տեխնիկական միջոցներ, որոնց կիրառմամբ լիցենզավորված մասնագետների աշխատանքն ավելի արդյունավետ է դարձել:

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը հաշվետու ժամանակաշրջանում իր գործունեությունն իրականացրել է՝ ղեկավարվելով ԵՊՀ գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումներով ու հանձնարարականներով, ինչպես նաև ելակետ ունենալով մասնաճյուղի՝ 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրի դրույթները: Դրանք մասնավորապես նպատակաուղղված են եղել մասնաճյուղում բարձրորակ կրթության տրամադրմանը, կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխմանը, հանրային ներգրավման և ծառայությունների զարգացմանը, կադրային ներուժի կատարելագործմանը և այլն:

2014/2015 ուստարում մասնաճյուղում իրականացվել են առկա ուսուցման 12 և հեռակա ուսուցման 11 բակալավրի կրթական ծրագրեր: Տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան իրականացվել է մասնագիտությունների ճշգրտում: Առաջնորդվելով ԵՊՀ մեթոդական ուղենիշներով՝ ֆակուլտետներում վերանայվել և բարելավվել են, իսկ նոր մասնագիտությունների համար կազմվել են կրթական վերջնարդյունքների վրա հիմնված կրթական ծրագրեր, լրամշակվել է ուսանողների համար նախատեսված «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք»-ը:

Հաշվետու ուստարում մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ 11 մասնագիտությունների գծով ընդունվել է 161 ուսանող (38-ը՝ անվճար, 123-ը՝ վճարովի), իսկ հեռակա ուսուցմամբ 7 մասնագիտությունների գծով՝ 217-ը: Նշենք, որ հեռակա ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թիվը 27-ով գերազանցում է նախորդ ուստարվա ընդունելությանը, իսկ առկա ուսուցման համակարգ ընդունվածների թիվը 44-ով պակաս է նախորդ ուստարվա ընդունելությունից:

Քանի որ մասնաճյուղի դիմորդների 90 %-ից ավելին կազմում են Տավուշի մարզի դպրոցների շրջանավարտները, մասնաճյուղը շարունակաբար ընդլայնում է համագործակցությունը մարզի միջնակարգ և ավագ դպրոցների հետ՝ նպատակ ունենալով ոչ միայն պահպանել, այլև ընդլայնել ընդունելության համակազմը: Մասնաճյուղի զարգացման ռազմավարական այդ առանցքային դրույթներից մեկի իրականացման համար մարզում մասնաճյուղի մասնագիտական կողմնորոշման և

պրակտիկաների կազմակերպման բաժնի կողմից կատարվել են ուսանողների հավաքագրման և մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ աշխատանքներ: Մասնաճյուղն ունի պայմանագրեր մարզի 4 ավագ դպրոցների ու քոլեջների հետ և հստակ կազմված ժամանակացույցով կազմակերպել է հանդիպումներ մարզի 4 ավագ և 30 հիմնական դպրոցների, ինչպես նաև Իջևանի և Բերդի վարժարանների շուրջ 1000 աշակերտի հետ: Պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներն այցելել են մարզի դպրոցներ, ակնարկային դասախոսություններ կարդացել աշակերտների համար, տվել են անհրաժեշտ խորհրդատվություն, իսկ յուրաքանչյուր ուսումնական տարվա հոկտեմբեր և մարտ ամիսներին կազմակերպվել են բաց դռների օրեր: 2014 թ. հոկտեմբերից կիրառական արվեստի ֆակուլտետում «Գծանկար», «Գունանկար», «Կոմպոզիցիա» առարկաներից իրականացվում են նախապատրաստական դասընթացներ:

Գործող մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով տպագրվել և դպրոցներին, հիմնական գործատուներին ու շահագրգիռ այլ կազմակերպություններին են տրամադրվել ԵՊՀ հրատարակած «Դիմորդի ուղեցույց»-ը, մասնաճյուղի (2014 թ.), կիրառական արվեստի ֆակուլտետի (2014 թ.) և հեռակա ուսուցման բաժնի (2015 թ.) գովազդային բուկլետները:

Հաշվետու ուստարում մասնաճյուղում բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցմամբ սովորել է 1531, իսկ մագիստրոսի կրթական ծրագրով՝ 4 ուսանող, որոնցից 1415-ը՝ վճարովի ուսուցման համակարգում: 2014/2015 ուստարում մասնաճյուղը բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ շրջանավարտ չի ունեցել: Մագիստրոսի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ տվել է 4 շրջանավարտ, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 188 շրջանավարտ:

Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի միջոցով մասնաճյուղն իրականացնում է շրջանավարտների ապագա զբաղվածության գործում իր աջակցությունն ապահովող մի շարք միջոցառումներ: 2015 թ. հունիսին մասնաճյուղի մի շարք ակտիվ շրջանավարտների հետ կազմակերպվել է հանդիպում, որի նպատակն էր ստեղծել «Շրջանավարտների միություն» հասարակական կազմակերպություն: 2015 թ. հունիսին Իջևանի ՁՏԿ-ի կողմից կազմակերպված աշխատանքի տոնավաճառում մասնաճյուղն ունեցել է իր տաղավարը և ընդունել է բազմաթիվ հայտեր: Նույն ժամանակ ստեղծվել է մասնաճյուղի «Կադրային բանկ», որտեղ գրանցված շրջանավարտներին

հնարավորություն կտրվի մրցութային կարգով համալրելու մասնաճյուղի դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմը: Կենտրոնի աջակցությամբ շրջանավարտները մասնակցել են տարբեր մրցույթների և հարցազրույցների, որոնց շնորհիվ մեկ տասնյակից ավելի շրջանավարտներ ընդունվել են աշխատանքի:

Պետության կողմից ուսման վարձի (ուսանողական նպաստի ձևով) լրիվ փոխհատուցում է ստացել 82 ուսանող: Պետական և ներբուհական կրթաթոշակներ են հատկացվել մասնաճյուղի 115 ուսանողի, որոնցից անվանական կրթաթոշակ է ստացել 7 ուսանող: 1-ին կիսամյակում զեղչվել են առկա ուսուցման համակարգի 29, հետևյալ ուսուցման համակարգի 76 ուսանողի ուսման վարձավճարները, 2-րդ կիսամյակում՝ համապատասխանաբար 58 և 107:

Ուսումնական գործընթացի բարելավման և արդյունավետ կազմակերպման համար մասնաճյուղում պարբերաբար գնահատվում է լսարանային ֆոնդի և ուսումնագիտական լաբորատորիաների վիճակի համապատասխանությունը կրթական ծրագրերի իրականացման պահանջներին: Հաշվետու ուստարում կատարվել են լսարանների, արվեստանոցների, լաբորատորիաների և այլ ուսումնական տարածքների տեխնիկական վերազինման և վերանորոգման աշխատանքներ: Կատարվել է շուրջ 1760 ք.մ. վերանորոգման աշխատանք, վերանորոգվել է 16 լսարան, վերակառուցվել է ջեռուցման համակարգը և այլն:

Մասնաճյուղն իր գործընթացների արդյունավետ կազմակերպման համար ուսանողներին, դասախոսներին և ուսումնաօժանդակ անձնակազմին ապահովել է բավարար տեխնիկական միջոցներով: Հաշվետու ուստարում մասնաճյուղն ունեցել է հետևյալ ուսումնական ցուցանիշները՝ 76 լսարան, համակարգչային 4 սրահ, 1 լաբորատորիա, 12 արվեստանոց, պրոյեկտորով համալրված 3, ինտերակտիվ ուսուցման (On-line) 1 լսարան, լեզուների ուսուցման 2 մասնագիտական լսարան: Համապատասխան լսարանները և աշխատատեղերը հագեցված են եղել 50 տպող սարքով (26 բազմաֆունկցիոնալ, 22 տպիչ և 2 գունավոր բազմաֆունկցիոնալ):

Մասնաճյուղում գործում է ներքին համակարգչային ցանց, որը միավորում է մասնաճյուղի համակարգիչների մեծ մասը (130 համակարգիչ), 2 Wi-Fi անկյուն և նույն հնարավորությամբ նիստերի դահլիճ: Կրթական գործընթացում լիարժեք ներդրվել և շարունակվում է «Դասընթացի փաթեթ»-ների (պորտֆոլիոների) կազմման գործընթացը: Դրանց միջոցով դասախոսներն իրականացնում են դասընթացի պլա-

նավորում, նրա արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ նյութերի հավաքագրում, ներկայացնում են ուսանողների գնահատման ռազմավարությունը, չափանիշները, գնահատում են դասավանդողի և ուսումնառողի համատեղ ձեռքբերումները, կատարում առաջարկներ դասընթացի հետագա բարելավման ուղղությամբ:

Առաջնորդվելով ԵՊՀ Որակի ապահովման հայեցակարգով, կրթության որակի բնագավառում իր քաղաքականությամբ՝ մասնաճյուղը ձևավորել է որակի ներքին ապահովման իր կազմակերպական կառուցվածքը: Մասնաճյուղում որակի ներքին ապահովման և որակի մշակույթի ձևավորման գործընթացներն իրականացնում է մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը, որը մշակում և ներդնում է որակի ներքին ապահովման անհրաժեշտ մեխանիզմներ, ապահովում և համալրում համապատասխան փաստաթղթային հիմքերը (քաղաքականություններ, կարգեր, կանոնակարգեր, ձևաթղթեր), մշտական խորհրդատվություններով աջակցում բոլոր ենթակառուցվածքներին և խթանում որակի շարունակական բարելավումը:

Բաժնի 3 աշխատակիցներ մասնակցել են ՈԱԱԿ-ի կազմակերպած «Մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգերի մշակում և բարելավում» թեմայով եռօրյակ դասընթացներին և 2014 թ. դեկտեմբերին ստացել Որակի ապահովման գործընթացի աջակցի հավաստագիր:

Կարևորելով իրականացվող կրթական ծրագրերից արտաքին և ներքին շահակիցների բավարարվածության գործոնը՝ հարցումների և հանդիպումների միջոցով իրականացվել են տարբեր ուսումնասիրություններ: Հաշվետու ուստարում վերանայվել են մասնաճյուղում գործող մի շարք հարցումների հարցաշարերը: 3 նոր հարցումների համար գրվել են համապատասխան կանոնակարգեր, հարցման գործիքի անձնագրեր, մշակվել հարցաշարեր: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 9 հարցում: Հարցումների արդյունքների վերլուծությունները տեղադրվել են մասնաճյուղի էլեկտրոնային կայքի «Կրթության որակի կառավարում» բաժնի «Հարցումների արդյունքներ» ենթաբաժնում: Մշակվել է արտաքին և ներքին շահակիցների առաջարկություններից ու դիտողություններից կազմված փաթեթ, որը տրվել է համապատասխան ստորաբաժանումներին՝ իրենց գործունեության հետագա նպատակային պլանավորման համար:

Համալրվել են մասնաճյուղի գնահատման առանցքային ցուցանիշները (ԳԱՑ 2009-15), որոնցում ներկայացված են մասնաճյուղի վերջին 5 տարիների գործունեությունը, ձեռքբերումները, դրանց վերլուծությունները և ինքնագնահատումները:

Հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղում դասավանդել է հիմնական և համատեղությամբ 113 դասախոս, այդ թվում՝ 3 պրոֆեսոր, 33 դոցենտ, 45 ասիստենտ և 32 դասախոս, որոնցից գիտական աստիճանով՝ 3 դոկտոր և 54 թեկնածու, ընդ որում՝ գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը հասել է 50 %-ի: Դասախոսների միջին տարիքը 48 է:

Լրիվ հաստիքային համարժեքով ուսանող-դասախոս հարաբերակցությունը 2014/2015 ուստարում կազմել է 19.33 (նախորդ ուստարում՝ 20.54):

Դասախոսների (հատկապես երիտասարդ) գիտամանկավարժական և մասնագիտական գործունեությունը գտնվում է մասնաճյուղի տնօրենության ուշադրության կենտրոնում: Աջակցվում և խրախուսվում են նրանց ինքնակրթության և ինքնագարգացման բոլոր դրսևորումները (գործուղումներ, վերապատրաստման դասընթացներ, պարզևատրումներ և այլն): Կարևոր ռազմավարական խնդիրներից մեկի իրականացման համար 2014 թ. հոկտեմբերի 17-ի գիտական խորհրդի որոշմամբ ստեղծվել է ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոն: Վերջինիս գործունեության նպատակն է զարգացնել առաջավոր մանկավարժական փորձի խրախուսման և տարածման ներմասնաճյուղային մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը: Կենտրոնի կազմակերպած դասընթացները միտված են երիտասարդ դասավանդողների որակավորման բարձրացմանը, դասավանդման մեթոդիկայի կատարելագործմանը, ուսումնական գործընթացում կրթական նորագույն տեխնոլոգիաների կիրառմանը: 2015 թ. ստեղծվել է Անգլերեն լեզվի ուսուցման կենտրոնը, որտեղ մասնաճյուղի դասախոսներն անվճար հիմունքներով սովորում են անգլերեն:

2015 թվականից մասնաճյուղը հաստատել է սկսնակ դասավանդողների մենթորության իր քաղաքականությունը: Երիտասարդները պարբերաբար մասնակցում են փորձառու դասախոսների դասերին կամ նրանց են հրավիրում իրենց դասերին: Հաշվետու ուստարում Աջակցման կենտրոնի կողմից երիտասարդ դասախոսների համար կազմակերպվել են դասավանդման մեթոդների, դասընթացների արդյունավետ

վարման, ուսանողների ձեռքբերումների գնահատման, տեղեկատվական տեխնոլոգիաների նպատակային կիրառման վերաբերյալ դասընթացներ:

Աջակցման լավագույն միջոց է մասնաճյուղի «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն, որտեղ անվճար տպագրվում են աշխատողների հոդվածները: Հաշվետու ուստարում հրատարակվել է 2 ժողովածու, որոնցում ընդգրկված 57 հոդվածից 21-ի հեղինակները մասնաճյուղի հիմնական դասախոսներ են: Ավելացել է այլ հեղինակների (մասնաճյուղում չաշխատող) հոդվածների քանակը, ինչը կարող է վկայել ժողովածուի վարկանիշի բարձրացման, մասնաճյուղի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման մասին:

Հաշվետու ուստարում մասնաճյուղի 1 դասախոս պաշտպանել է դոկտորական, 7-ը՝ (այդ թվում՝ 4-ը՝ երիտասարդ) թեկնածուական ատենախոսություն: Հարկ է նշել, որ վերջին 4 ուստարիների ընթացքում թեկնածուական ատենախոսություն պաշտպանած 22 դասախոսներից 12-ը հիմնական աշխատողներ են, իսկ նրանցից 7-ը՝ մասնաճյուղի շրջանավարտներ: Մասնաճյուղն ունի 14 ասպիրանտ և հայցորդ:

Հաշվետու ուստարում մասնաճյուղի դասախոսների կողմից հրատարակվել են 7 մենագրություն, 14 ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկ, 113 գիտական հոդված:

Դասախոսական կազմի մասնագիտական կարողությունները, մանկավարժական հմտությունները, դասավանդման որակը և արդյունավետությունը պարբերաբար գնահատվում են ԵՊՀ-ի կողմից իրականացվող ուսանողական հարցումների միջոցով, որոնց արդյունքներով մասնաճյուղի դասախոսների միջին միավորը հաշվետու ուստարվա 1-ին կիսամյակի տվյալներով կազմել է 4.66, որը նախորդ ուստարիների համեմատ բարելավվել է, և բոլոր մասնագիտությունների գծով միջին թվաբանական միավորն ըստ ամբիոնների բարձր է 4.48-ից:

«Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման» կրթագիտական ծրագրի շրջանակներում մասնաճյուղի դասախոսները շարունակում են հավաքել սահմանված կրեդիտները՝ մասնակցելով մասնաճյուղում մայր բուհի աջակցությամբ ու նախաձեռնությամբ պարբերաբար իրականացվող որակավորման բարձրացման դասընթացներին: Հաշվետու ուստարում մասնագիտական, մանկավարժական, համակարգչային և այլ ուղղություններով որակավորման բարձրացում է անցել 87 դասախոս:

Առկա և հեռակա ուսուցման համակարգերում դասախոսների մեծամասնությունը դասընթացները վարում է տեղեկատվական և տեխնիկական համապատասխան միջոցների և համակարգերի կիրառմամբ:

Քանի որ մասնաճյուղը հիմնականում իրականացնում է բակալավրական կրթություն, ուստի հետազոտական նախագծեր, գիտահետազոտական ծրագրեր չեն իրականացվում, սակայն մասնաճյուղի դասախոսներն ակտիվորեն մասնակցում են հանրապետական և միջազգային գիտաժողովների, գիտական ծրագրերի: Հաշվետու ուստարում մասնաճյուղում կազմակերպվել է գիտագործնական 3 կոնֆերանս: Մասնաճյուղի դասախոսները մասնակցել են հանրապետական 12 և միջազգային 9 գիտաժողովների: 3 դասախոս ընդգրկված է եղել տարբեր դրամաշնորհային ծրագրերում:

2014/2015 ուստարում մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսների և ուսանողների կողմից ԵՊՀ ԻՄ-ում, Իջևանի քաղաքային պատկերասրահում, ԵՊՀ-ում, ՀՀ նկարիչների միությունում և Հայաստանի պետական պատկերասրահում կազմակերպվել է շուրջ 8 ցուցահենդես՝ նվիրված Մեծ եղեռնի 100-ամյակին, Կանանց միջազգային տոնին, Գեղեցկության և մայրության տոնին, Հայրենական պատերազմի հաղթանակի 70-ամյակին, Կոմիտասի ծննդյան 145-ամյակին և այլն: Արդյունավետ ուսումնառության ապահովման նկատառումներով արդեն երկու տարի է ուսանողների համար կազմակերպվում են պլեներային նկարչության դասեր:

Տարբեր կազմակերպությունների և հիմնական գործատուների հետ անցկացվում են փոխշահավետ համագործակցային հանդիպումներ՝ ուսանողների արտադրական և մանկավարժական պրակտիկաներն առավել արդյունավետ իրականացնելու համար:

Ակտիվացվում և ընդլայնվում է համագործակցությունը մասնաճյուղի հիմնական գործատու և նվիրատու կազմակերպությունների հետ (VivaCell MTS, Orange, ՀՕՖ և այլն):

Մասնաճյուղն իր հեղինակության ամրապնդման, հասարակական վարկանիշի բարձրացման նպատակով վարում է տեղեկատվության տարածման, գովազդային-լրատվական, քարոզչական համապատասխան քաղաքականություն: ԵՊՀ ԻՄ-ի բոլոր ստորաբաժանումների գործընթացների, իրադարձությունների, կազմակերպված միջոցառումների, հարցազրույցների, անհրաժեշտ հայտարարությունների, ուսանողական կյանքին և միջավայրին վերաբերող նորությունների լուսաբանումը, տեղեկա-

տվության մատչելիությունն ապահովվում է մասնաճյուղի ինտերնետային կայքի /<http://www.ijevan.yso.am/>, «Facebook» սոցիալական ցանցում գործող ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էջի և խմբի միջոցով, նաև մասնաճյուղի մասին տեղեկատվություն ու նկարագրություններ են տպագրվում տարբեր տեղեկագրքերում, ժողովածուներում և կայքերում:

Տարեցտարի բարձրացվում է ներքին և արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը, որին աջակցում են անվճար ինտերնետ կապը, էլեկտրոնային ընթերցասարահի հիմնումը, էլեկտրոնային պաշարների հարստացումը: Մասնաճյուղի գրադարանը հաշվետու ուստարում իր ֆոնդը հարստացրել է 2266 կտոր գրականությամբ: Համալրումը կատարվել է մասնաճյուղի կողմից գնման, տարբեր գրադարաններից փոխանցման, նվիրատվության միջոցով: Մայր բուհից մեծաքանակ ուսումնագիտական և մասնագիտական գրքեր են փոխանցվել:

Մասնաճյուղում կազմակերպվում և հաջողությամբ լուծվում են Երևանից ժամանող դասախոսների հանգստի և գիշերելու հարցերը: Ուսումնական մասնաշենքերից ոչ հեռու կառուցված մասնաճյուղի հյուրանոցային համալիրն ապահովում է շուրջ 60 դասախոսի կենցաղային խնդիրները, հանգստի ու հարմարավետ աշխատանքի պայմանները: Համալիրն ապահովված է ինտերնետ կապով, կոմունալ բոլոր հարմարություններով:

Մասնաճյուղում ուսանողական և ուսումնագիտական միջավայրի ձևավորման ուղղությամբ իրենց ներդրումն ունեն ուսանողական համապատասխան կառույցները (ՈՒԽ, ՈՒԳԸ), որոնք կազմակերպում են տարբեր տոների, հիշատակների նվիրված բազմաթիվ միջոցառումներ, մասնակցում ԵՊՀ ուսանողական ձեռնարկումներին, մշակութային և մարզական տարբեր միջոցառումների՝ դրսևորելով լավ արդյունքներ: Հաշվետու ուստարում մասնաճյուղի մի շարք ուսանողներ ԵՊՀ ուսանողական խորհրդի կողմից արժանացել են պատվոգրերի:

Հարկ է նշել, որ մասնաճյուղը մշտապես գտնվում է ԵՊՀ-ի ուշադրության կենտրոնում, նրա ամբողջ գործունեությունը, ձեռքբերումներն ու նվաճումները պայմանավորված են Մայր բուհով:

* * *

Ամփոփելով Երևանի պետական համալսարանի 2014/2015 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ հաշվետվությունը՝ կրկին պետք է նշել, որ Մայր բուհը հաշվետու ժամանակաշրջանում զգալի ձեռքբերումներ ու հաջողություններ է գրանցել իր գործունեության բոլոր բնագավառներում: Միաժամանակ, հարկ է նշել նաև բացթողումների ու թերացումների մասին, որոնք շտկելու համար պետք է ներդնել լուրջ ջանքեր, իրականացնել համառ ու հետևողական աշխատանքներ:

**ԵՊՀ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ 2015-2018 ԹԹ.
ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ (2015 Թ.)**

**ԵՊՀ կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի
2015-2018 թթ. ծրագրի մշակում և ընդունում**

ԵՊՀ կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի 2015-2018 թթ. միջոցառումների ծրագիրը շարունակում և ընդլայնում է 2010 թ-ից մեկնարկած հակակոռուպցիոն բնույթ ունեցող ծրագրային միջոցառումները:

ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով հակակոռուպցիոն միջոցառումները համարվել են գործունեության կարևոր ուղղություն: Անցած ժամանակահատվածում իրականացվել են ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված 2011-2012 թթ. և 2013-2014 թթ. հակակոռուպցիոն ծրագրերը:

ԵՊՀ ռեկտորի 2014 թ. դեկտեմբերի 22-ի հրամանով ձևավորվեց ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող նոր հանձնաժողով, որը մշակեց 2015-2018 թթ. համապատասխան միջոցառումների ծրագիրը և պատասխանատու է ծրագրով սահմանված աշխատանքների իրականացման և համակարգման համար:

Հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է ԵՊՀ ռեկտորը (հանձնաժողովի նախագահ), իսկ հանձնաժողովի կազմում ընդգրկված են ԵՊՀ պրոռեկտորները, ուսումնամեթոդական վարչության պետը, հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետը, որակի ապահովման կենտրոնի տնօրենը, արհեստակցական կազմակերպության նախագահը, գիտական քարտուղարը, իրավաբանական բաժնի վարիչը, ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի վարիչը, հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչը (հանձնաժողովի քարտուղար), որոշ ֆակուլտետների ղեկավարներ, դասախոսներ, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության ներկայացուցիչներ:

2015 թ. փետրվարի 19-ին ԵՊՀ գիտական խորհուրդը հաստատեց հանձնաժողովի կողմից մշակված ԵՊՀ կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի 2015-2018 թթ. միջոցառումների ծրագիրը: Ծրագրի հիմնական թիրախը կոռուպցիոն ռիսկերն են, իսկ գործողությունների առումով շեշտադրվում են ինչպես իրազեկվածության մակարդակը բարձրացնող և մասնակցային գործընթացները խթանող, այնպես էլ տարբեր ռիսկեր և երևույթներ կանխարգելող ու չեզոքացնող, դրանց նկատմամբ հսկողությունը խստացնող միջոցառումները:

Ծրագրի խնդիրներն են.

- Աջակցել ԵՊՀ ֆակուլտետներին և առանձնացված ստորաբաժանումներին՝ հստակեցնելու հակակոռուպցիոն մշակույթը, կոռուպցիոն երևույթների նկատմամբ ձևավորել անհանդուժողականության մթնոլորտ, մշակել համապատասխան էթիկայի կանոններ:
- Կատարելագործել ներքին իրավական ակտերը, կառավարման ու վերահսկման մեխանիզմները՝ ապահովելով տարբեր գործընթացների առավել

կանոնակարգված, թափանցիկ և հրապարակային ընթացքն ու հնարավորինս բացառելով գործառնության շահերի բախումը:

- Բարձրացնել ներհամալսարանական գործընթացների վերաբերյալ շահառուների իրազեկվածության մակարդակը, ապահովել համալսարանական լայն շրջանակների մասնակցությունը հակակոռուպցիոն միջոցառումների իրականացմանը, զարգացնել հետադարձ կապի մեխանիզմները:
- Բարձրացնել հակակոռուպցիոն միջոցառումների մոնիթորինգի արդյունավետությունն ու անկողմնակալությունը, ինչպես նաև իրականացվող աշխատանքների հրապարակայնությունն ու հաշվետվողականությունը:
- Վերհանել շահերի բախման դրսևորումները և իրականացնել միջոցառումներ դրանց չեզոքացման ուղղությամբ:
- Իրականացնել «կոռուպցիա» երևույթի և դրա կանխարգելմանն ուղղված գիտահետազոտական ուսումնասիրություններ, կրթական (այդ թվում՝ դասախոսների վերապատրաստման) ծրագրերում մշակել և ներդնել կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված դասընթացներ:

Ծրագրում ներառված են գործողությունների նոր ուղղություններ, մասնավորապես՝ շահերի բախման խնդիրը, կոռուպցիայի տարաբնույթ դրսևորումների վերաբերյալ խորքային ուսումնասիրությունների և հետազոտությունների խնդիրը, էթիկայի կանոնակարգը, գրագողության դեմ պայքարի մեխանիզմների կատարելագործումը, կոռուպցիայի կանխարգելման հիմնախնդիրների դասավանդումը և այլն:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում են միջոցառումներ 11 ուղղությամբ, որոնց իրականացման համար սահմանվել են համապատասխան արդյունքեր, պատասխանատուներ և ժամկետներ:

Կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի միջոցառումներն իրենց արտացոլումն են գտել նաև ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի նախագծում: «Տինանսական կայունություն և արդյունավետ կառավարում» ռազմավարական նպատակի շրջանակներում սահմանվել է թիվ 8.4 խնդիրը՝ «Նպաստել համալսարանական գործընթացների թափանցիկության ապահովմանը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը»:

Հակակոռուպցիոն միջոցառումների իրականացում

2015 թ. ԵՊՀ հակակոռուպցիոն ծրագրի մշակումն ու միջոցառումների իրականացման գործընթացը նախորդ տարիների համեմատ առանձնացել է արտաքին միջավայրի ազդեցության մի շարք գործոններով: 2014 թ. ապրիլի 10-ին հաստատված «Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգի» համաձայն՝ կրթությունն առանձնացվել է որպես հակակոռուպցիոն ծրագրերի առաջնահերթ իրականացման ոլորտ: Հայեցակարգի համաձայն՝ ՀՀ կառավարության 2015 թ. սեպտեմբերի 25-ի որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրով» նախատեսված միջոցառումները համապատասխան ազդեցություն են թողել ԵՊՀ 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի առանձին դրույթների վրա:

ՀՀ կրթության և գիտության նախարարության աջակցությամբ Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության կողմից համատեղ իրականացվող ԵՄ Արևելյան գործընկերության երկրների «Ծրագրային համագործակցության շրջանակ»-ի ներքո 2015 թ. մեկնարկել է «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեփոխության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարի ծրագիրը»: Այս ծրագրի պլանավորման և իրականացման գործընթացներում ակտիվ մասնակցություն են ցուցաբերել ԵՊՀ ներկայացուցիչները: Ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Հայաստան ժամանած Եվրախորհրդի՝ կրթության գծով փորձագետների մասնակցությամբ 2015 թ. փետրվարի 18-ին ԵՊՀ-ում կազմակերպվել էր հայաստանյան առաջատար բուհերի ներկայացուցիչների հետ քննարկում, որի նպատակն է եղել բացահայտել և վերլուծել բուհական համակարգի կարիքները՝ հակակոռուպցիոն միջոցառումների տեսանկյունից: ԵՊՀ 2015-2018 թթ. հակակոռուպցիոն ծրագրերի ժամանակացույցը կազմվել է նաև հաշվի առնելով վերոհիշյալ ծրագրի միջոցառումների պլանը:

Համալսարանական հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման ընթացքում բազմիցս ընդգծվել է, որ բուհական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարն իր բնույթով բավականին բարդ գործընթաց է, ներառում է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ հիմնախնդիրներ՝ միաժամանակ փոխկապակցված լինելով մի շարք այլ՝ բարձրագույն կրթությանը չառնչվող հիմնահարցերի հետ:

Իրականացված միջոցառումներից շատերը միաժամանակ կարող են առնչվել համալսարանական գործունեության տարբեր բնագավառներին, սակայն դրանցում առկա է հակակոռուպցիոն բաղադրիչ:

Ստորև ներկայացվում է 2015 թ. ընթացքում իրականացված հակակոռուպցիոն հիմնական միջոցառումների մասին համառոտ տեղեկատվություն:

Գիտելիքների գնահատում, ուսումնական գործընթացի վերահսկում, փոխատեղում, տեղափոխություններ

Հնարավոր կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության ստորաբաժանումները իրականացրել են ստուգումներ ԵՊՀ-ում ուսումնական գործընթացին առնչվող գործառնությունների շրջանակներում:

Համաձայն սահմանված կարգի, ինչպես և նախորդ տարիներին, ԵՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր մասնագիտությունների ամփոփիչ ատեստավորումը (ամփոփիչ քննություն, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզի պաշտպանություն) իրականացվել է տեսաձայնագրմամբ: Բողոքարկումներն անցկացվել են տեսանյութի քննարկման հիման վրա: Լրացուցիչ աշխատանքներ են տարվել նոր լսարաններում տեսախցիկներ տեղադրելու ուղղությամբ:

Փոխատեղման արդյունքները բոլոր ֆակուլտետներում հրապարակվել են՝ փակցվելով ֆակուլտետների հայտարարությունների տախտակներին:

ԵՊՀ-ում ուսանողների տեղափոխությունները մեկ մասնագիտությունից մեկ այլ մասնագիտություն իրականացվել են «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության», իսկ հեռացումները և վերականգնումները՝ «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսա-

նողների հեռացման (ազատման) և վերականգնման» կարգերի համաձայն: Տեղափոխությունները քննարկվել են մանդատային հանձնաժողովներում:

Մեկնարկել են աշխատանքներ ուսանողների կուրսային, ավարտական աշխատանքներում և մագիստրոսական թեզերում գրագողության դեմ արդյունավետ պայքարի լրացուցիչ (ավտոմատացված) մեխանիզմներ ներդնելու ուղղությամբ:

Քննաշրջանից հետո քննությունների արդյունքները փակցվել են ֆակուլտետներում, իսկ փոխատեղման արդյունքները հրապարակվել են՝ գործող կարգի համաձայն: Ամփոփոխ քննությունների արդյունքները քննություններից հետո առավելագույնը մեկ շաբաթվա ընթացքում հրապարակվել են ֆակուլտետների կայքերում:

Անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների թեկնածությունները քննարկվել են ֆակուլտետների գիտական խորհուրդներում և հաստատվել են ԵՊՀ գիտական խորհրդի նիստում: Անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցանկը հրապարակվել է ԵՊՀ կայքում:

Քարոզչական աշխատանքների իրականացում, տեղեկացվածության մակարդակի բարձրացում

Հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման կարևորագույն նախապայման են համապատասխան անհանդուրժողական միջավայրի ձևավորումը, հրապարակայնության ու թափանցիկության մեխանիզմների ապահովումը:

Համալսարանական համակազմի իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով ակտիվորեն օգտագործվել են Համալսարանի ինտերնետային ռեսուրսների հնարավորությունները:

Ուսանողների տեղեկատվածությունն ապահովելու նպատակով ԵՊՀ կայքում տեղադրվել են կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցը և դասընթացների տեղեկագիրքը և՛ բակալավրիատի, և՛ մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգով սովորող ուսանողների համար (<http://ysu.am/education/hy>): Մինևույն նպատակով ստեղծվել է «Կրթություն հանուն ապագայի» առաջին կուրսեցու ուղեցույցի առցանց տարբերակը (<http://1course.yasu.am/>):

Ներքին իրավական ակտերի և փաստաթղթերի արդյունավետ հասանելիությունը ապահովելու համար ԵՊՀ ինտերնետային պորտալում 2011 թ. գործում էր «ԵՊՀ փաստաթղթեր» կայքը (<http://doc.yasu.am>): ԵՊՀ կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի 2015-2018 թթ. միջոցառումների ծրագրի համաձայն՝ ստեղծվել և գործարկվել է ԵՊՀ պորտալի «Փաստաթղթեր» նոր կայքը, որը կբարձրացնի կայքի շահագործման արդյունավետությունը և ներհամալսարանական փաստաթղթերի հասանելիության աստիճանը:

«Երևանի համալսարան» ամսաթերթի համարներում պարբերաբար տպագրվել են կոռուպցիոն խնդիրների կանխարգելմանը վերաբերող նյութեր:

ԵՊՀ կայքի միջոցով իրականացվում է տեղեկատվության տրամադրման՝ առցանց հետադարձ կապի աշխատանք: Բոլոր անձինք ունեն առցանց հարց տալու հնարավորություն (կայքում գործում է «Հարց-պատասխան» բաժինը, որի միջոցով 2015 թ. ընթացքում ստացվել է շուրջ 1100 նամակ, որոնց ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների օգնությամբ հնարավորինս սեղմ ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ):

Հետադարձ կապ է ապահովվում նաև ԵՊՀ ֆեյսբուքյան էջի և էլեկտրոնային փոստի միջոցով:

Ներքին իրավական ակտերի մշակում

2014 թ. «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը վերակազմակերպվեց հիմնադրամի, և հաստատվեց ԵՊՀ նոր կանոնադրությունը: Այս փոփոխությունները ենթադրում են ներքին մի շարք իրավական ակտերի վերանայում:

Հաշվետու տարում կազմվել է ԵՊՀ ներքին իրավական ակտերի վերանայման աշխատանքների ժամանակացույցը, և դրան համապատասխան իրականացվել է ներքին իրավական ակտերի կիրառման արդյունավետության և բացահայտված թերությունների մոնիթորինգ, շարունակվել է գործող ներքին իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու գործընթացը:

«ԵՊՀ կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի 2015-2018 թթ. համալիր միջոցառումների ծրագրի» համաձայն՝ ԵՊՀ գիտական խորհրդի 2015 թվականի մարտի 26-ի որոշմամբ ընդունվել է ԵՊՀ ներքին կարգապահական կանոնները (նոր խմբագրությամբ), որով համապարփակ և նպատակային կանոնակարգում է տրվել ԵՊՀ ներքին կարգապահությանն առնչվող մի շարք հարցերի, էականորեն բարձրացվել է աշխատանքային և ուսումնական կարգապահության մակարդակը, ինչպես նաև նվազեցվել են կոռուպցիոն ռիսկերի և երևույթների ծագման հնարավորությունները:

ԵՊՀ ներքին կարգապահական կանոնների 63-րդ կետով խստացվել է ակադեմիական ազնվության վարքականոնների խախտման, մասնավորապես՝ քննությունների կամ ստուգաքննների ընթացքում արտագրության դեպքում ուսանողների պատասխանատվությունը (ըստ հաստատված կանոնների՝ ուսանողը նման վարքագծի դեպքում հեռացվում է Համալսարանից):

Անձնակազմի կառավարում, գնումների գործընթաց

Իրականացվել են պաշտոնների տեղակալման կանոնակարգերով համապատասխան մրցույթների անցկացման, դրանցում սուբյեկտիվ գործոնների ազդեցության նվազեցման և մրցակցային գործընթացի խրախուսման աշխատանքներ. ԵՊՀ-ում թափուր աշխատատեղերի մրցույթի հայտարարությունները տարածվել են հնարավորինս լայն շրջանակներում՝ ԵՊՀ ինտերնետային պորտալում, հանրապետական մամուլում (անկախ կանոնակարգի պահանջից): 2015 թ. ընթացքում հայտարարվել է պրոֆեսորադասախոսական և գիտական համակազմի պաշտոնների 271 մրցույթ:

Մշակվել են ԵՊՀ վարչական պաշտոնների, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական հաստիքների կանոնակարգի և այդ աշխատողների մասնագիտական ունակությունների համապատասխանության որոշման (ատեստավորման) կարգի նախագծերը, որոնք սահմանում են համապատասխան հաստիքների աստիճանակարգումը, վարչական պաշտոնների անձնագրերի և ուսումնաօժանդակ ու ինժեներատեխնիկական հաստիքների աշխատանքի նկարագրության հիմնական դրույթները, աշխատողների ատեստավորման կարգը: Վերոհիշյալ նախագծերը կներկայացվեն ԵՊՀ գիտական խորհրդի քննարկմանը 2016 թվականին:

2015 թ. մայիսի 20-ին ԵՊՀ ռեկտորի և արհեստակցական կազմակերպության նախագահի կողմից ստորագրվել է ԵՊՀ նոր կոլեկտիվ պայմանագիրը: Գրեթե ամբողջովին վերանայել է նախկին պայմանագիրը, մշակված նախագիծն ուղարկվել է ֆակուլտետներ և կառուցվածքային ստորաբաժանումներ՝ քննարկելու համար: ԵՊՀ շուրջ 2.800 հիմնական աշխատողներից քննարկումներին մասնակցել են ավելի քան 2.000-ը, մասնակիցների ավելի քան 95 %-ը կողմ է քվեարկել պայմանագրի նախագծին:

Գնումների գործընթացը առավել արդյունավետ և կանոնակարգված դարձնելու նպատակով ստեղծվել է գնումների, պլանավորման և պահեստավորման վարչություն: Հստակեցվել են օրենսդրությամբ սահմանված գնումների գործընթացին առնչվող նորմերի, Համալսարանում գնումների իրականացման ընթացակարգի ու այդ համատեքստում ստորաբաժանումների կողմից պարտականությունների ճիշտ և ժամանակին կատարման պահանջները:

Համալսարանի ֆինանսական կառավարման հաշվետվողականությունն ու հրապարակայնությունը բարձրացնելու նպատակով 2016 թ. եկամուտների ու ծախսերի նախահաշիվն ու 2015 թ. կատարողականը ներկայացվել են ԵՊՀ գիտխորհրդի քննարկմանը:

Ուսանողական կազմակերպություններ, աշխատանք ուսանողների հետ

Ուսանողների ակտիվ մասնակցությունը հակակոռուպցիոն միջոցառումներին համարվում է առանցքային խնդիր ծրագրի արդյունավետության ապահովման համար: Ուսանողական կազմակերպությունների (ուսանողական խորհուրդ և ուսանողական գիտական ընկերություն) կողմից պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ ռեկտորի և պրոռեկտորների հետ, որոնց ընթացքում պարզաբանվել են ուսանողներին հուզող մի շարք խնդիրներ: Պարբերաբար կազմակերպվել են ուսանողների ներհամալսարանական մասնակցությունը խթանող դասընթացներ:

Աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու գործում ուսանողական կազմակերպություններին ցուցաբերվել է մեթոդական աջակցություն: Քայլեր են ձեռնարկվել միջազգային համագործակցության ասպարեզում ուսանողական կառույցների կարողությունների զարգացման ուղղությամբ:

Ուսանողական հարցումներ

ԵՊՀ հակակոռուպցիոն ծրագրով նախատեսված են նաև ներհամալսարանական տարբեր գործընթացների մշտադիտարկումը և կոռուպցիոն ռիսկերին առնչվող խնդիրների վերաբերյալ ուսանողների հետ հետադարձ կապի ապահովումը:

Ինչպես և նախորդ տարիներին, յուրաքանչյուր կիսամյակ իրականացվել են ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներ (ուսուցմանն առնչվող տարբեր ասպեկտներից բավարարվածության գնահատում), ինչպես նաև յուրաքանչյուր տարի՝ ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումներ: Տեղի են ունեցել ուսանողների և շրջանավարտների հարցումների արդյունքների քննարկումներ ԵՊՀ գիտական խորհրդում և ֆակուլտետներում:

Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ իրականացվող ուսանողական հարցումների հարցաթերթի տեղեկատվական հատվածը պարունակել է կոռուպցիոն դրսևորումներին վերաբերող 2 հարց (դրամի դիմաց գնահատական ստանալու և հարկադրված մասնավոր պարապմունքների մասին): Հարցաթերթի տեղեկատվական հատվածի արդյունքներն ամփոփվել և տրամադրվել են ֆակուլտետներին՝ ամբիոններում քննարկելու համար: (Հավելվածի թիվ 1 ներդիրում ներկայացված են 2014/2015 ուստարվա 1-ին և 2-րդ կիսամյակների հարցումների արդյունքները):

Առկա ուսուցման համակարգում 2014/2015 ուստարվա 1-ին կիսամյակի վերաբերյալ հարցմանը մասնակցած ուսանողների 1.8 %-ը դրական է պատասխանել դրամի դիմաց գնահատական կամ ստուգարք ստանալու հարցին, իսկ մասնավոր պարապմունքների համար հարկադրված վճարելու հարցին դրական է պատասխանել 2.6 %-ը: 2-րդ կիսամյակի վերաբերյալ հարցմանը մասնակցած ուսանողներից վերոհիշյալ հարցերին դրական են պատասխանել համապատասխանաբար 2.2 %-ը և 2.8 %-ը: Ի դեպ, հարկ է նշել, որ տվյալ ցուցանիշները բակալավրիատի և մագիստրատուրայի համակարգերում տարբերվում են: Այսպիսով, 2014/2015 ուստարվա 1-ին կիսամյակի վերաբերյալ հարցմանը մասնակցած մագիստրատուրայի ուսանողների շրջանում դրամի դիմաց գնահատական կամ ստուգարք ստանալու հարցին դրական է պատասխանել 1.5 %-ը, իսկ մասնավոր պարապմունքների համար հարկադրված վճարելու հարցին՝ 1.3 %-ը:

Եթե համեմատենք նախորդ տարվա ցուցանիշները, ապա պետք է փաստենք, որ ըստ էության պահպանվել են վերոհիշյալ հարցերին դրական պատասխանների ցուցանիշները: Միաժամանակ հարկ է նշել, որ բակալավրիատում վերոհիշյալ ցուցանիշները հավասարապես չեն բաշխված կուրսերի միջև, և առավել մտահոգիչ են 2-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների պատասխանների արդյունքները, որտեղ նկատվում է ընդհանուր ցուցանիշից բարձր պատկեր:

ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումները ընդգրկում են ողջ ուսումնառության ընթացքը և արտացոլում է ցուցանիշների գրեթե նույն պատկերը (Հավելվածի թիվ 2 ներդիրում ներկայացված են 2014/2015 ուստարվա շրջանավարտների հարցումների արդյունքները): Կոռուպցիոն երևույթների վերաբերյալ շրջանավարտների հարցման թերթիկում, ի լրումն վերը նշված երկու հարցերի, առկա է նաև հարց բարեխոսությամբ (հովանավորչությամբ) գնահատական կամ ստուգարք ստանալու մասին: Դրամի դիմաց գնահատական ստանալու հարցին դրական են պատասխանել հարցմանը մասնակցած բակալավրիատի շրջանավարտների շուրջ 2.9 %-ը, իսկ մագիստրատուրայի՝ 1.1 %-ը: Բարեխոսությամբ (հովանավորչությամբ) գնահատական կամ ստուգարք ստանալու հարցին դրական են պատասխանել՝ բակալավրիատի շրջանավարտների 3.2 %-ը և մագիստրատուրայի՝ 1,6 %-ը, իսկ հարկադրված մասնավոր պարապմունքների համար վճարելու հարցին՝ բակալավրիատի շրջանավարտների 4.3 %-ը և մագիստրատուրայի՝ 1,3 %-ը:

Նպատակ ունենալով բարձրացնելու ուսանողական հարցումների արդյունավետությունը՝ մշակվել է ուսանողական հարցումների իրականացման էլեկտրոնային (ինտերնետային) գործիք, որը, ապահովելով հարցումների անանուն լինելու հանգամանքը, միաժամանակ կարող է ավելի դյուրին դարձնել հարցմանը մասնակցելու բուն գործընթացը: 2015 թ. նորաստեղծ ինտերնետային գործիքի օգտագործմամբ իրականացվել են հեռակա համակարգի ուսանողների փորձնական հարցումներ:

Էթիկայի կանոններ, դասընթացներ, ուսումնասիրություններ

Ծրագրով նախատեսված են միջոցառումներ, որոնք նախկին տարիների ծրագրերում նախատեսված չեն եղել: Դրանցից են՝ համալսարանականների էթիկայի կանոնների մշակումը, կրթական (այդ թվում՝ դասախոսների վերապատրաստման) ծրագրերում կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված դասընթացների մշակումն ու ներդրումը, շահերի բախման դրսևորումների բացահայտման և չեզոքացման ուղեցույցի մշակումը, կոռուպցիայի երևույթի և դրա կանխարգելման խնդիրների վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացումը:

Այս աշխատանքների իրականացումն ունի երկարաժամկետ բնույթ և նախատեսում է միջոցառումներ համագործակցություն: Տարբեր ուղղություններով աշխատանքները մեկնարկել են, և ծրագրի ժամանակացույցի համաձայն՝ միջոցառումների արդյունքները հնարավոր կլինի ամփոփել հաջորդ տարիներին:

Համագործակցություն տարբեր ծրագրերի շրջանակում

Երևանի պետական համալսարանի ներկայացուցիչները հաշվետու ժամանակահատվածում պարբերաբար մասնակցել են հայաստանյան և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից կազմակերպված հակակոռուպցիոն սեմինար-քննարկումներին, ներկայացրել են ԵՊՀ-ում իրականացվող աշխատանքները:

2015 թ. մարտի 16-ին «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» և «Հանրային քաղաքականության ինստիտուտ» կազմակերպությունները Երևանի «Կոնգրես» հյուրանոցում ներկայացրին իրենց կողմից իրականացված «ՀՀ 2015-2018 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության և միջոցառումների ծրագրեր»-ի վերլուծությունը:

Եվրոպայի խորհրդի, Եվրոպական միության և ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրի» շրջանակներում 2015 թ. նոյեմբերի 16-17-ը Օադկաձորում կազմակերպվել է կոնֆերանս՝ ՀՀ ԿԳՆ, բուհական համակարգի և այլ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների լայն մասնակցությամբ: ԵՊՀ 5 ներկայացուցիչներ մասնակցել են վերոհիշյալ կոնֆերանսին, իսկ ԵՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռուբեն Մարկոսյանը հանդես է եկել «Գործնականում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար՝ մարտահրավերներ և լուծումներ» վերտառությամբ զեկուցմամբ:

2015 թ. նոյեմբերի 27-ին Երևանի «Կոնգրես» հյուրանոցում տեղի ունեցավ «Կոռուպցիայի դեմ պայքարը և բարեվարքության արմատավորումը Հայաստանի կրթական ոլորտում» թեմայով համաժողով, որի նախաձեռնողները ՀՀ կրթության և գիտության նախարարությունն ու «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպությունն էին: Համալսարանականները ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանի գլխավորությամբ մասնակցեցին համաժողովի պլենար նիստերին և խմբային աշխատանքներին:

Հավելվածի ներդիր 1.

**Երևանի պետական համալսարան
Ուսանողական հարցման «Տեղեկատվական հատված»-ի արդյունքներ
2014/2015 ուստարի 1-ին կիսամյակ**

Առկա ուսուցում

Հարցմանը մասնակցել է 7783 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	139	7458	7597
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	202	7337	7539

Բակալավրիատ

Հարցմանը մասնակցել է 6286 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	116	6017	6133
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	182	5910	6092

Մագիստրատուրա

Հարցմանը մասնակցել է 1497 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	23	1441	1464
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	20	1427	1447

Բակալավրիատ

1-ին կուրս

Հարցմանը մասնակցել է 2139 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	24	2065	2089
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	62	2016	2078

2-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 1790 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	43	1710	1753
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	62	1670	1732

3-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 1904 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	35	1818	1853
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	46	1807	1853

4-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 453 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	14	424	438
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	12	417	429

Մագիստրատուրա

1-ին կուրս

Հարցմանը մասնակցել է 757 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	9	730	739
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	6	722	728

2-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 740 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	14	711	725
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	14	705	719

2014/2015 ուստարի 2-րդ կիսամյակ

Հարցմանը մասնակցել է 6329 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	138	6031	6169
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	172	5885	6057

Բակալավրիատ

Հարցմանը մասնակցել է 5617 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	125	5350	5475
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	164	5212	5376

Մագիստրատուրա

Հարցմանը մասնակցել է 712 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	13	681	694
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	8	673	681

Բակալավրիատ

1-ին կուրս

Հարցմանը մասնակցել է 1735 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	38	1649	1687
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	61	1591	1652

2-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 1719 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	43	1640	1683
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	51	1601	1652

3-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 1754 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	38	1670	1708
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	47	1636	1683

4-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 409 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	6	391	397
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	6	384	389

Մագիստրատուրա

1-ին կուրս

Հարցմանը մասնակցել է 712 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	13	681	694
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	8	673	681

Հավելվածի ներդիր 2.

**Երևանի պետական համալսարան
Կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ
շրջանավարտների հարցման արդյունքներ**

2015 թ.

Բակլավրիատ

Հարցմանը մասնակցել է 639 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	18	587	605
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում բարեխոսությամբ (հովանավորչությամբ) ստացել եք գնահատական (ստուգարք)	20	587	607
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	26	575	601

Մագիստրատուրա

Հարցմանը մասնակցել է 850 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	9	803	812
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում բարեխոսությամբ (հովանավորչությամբ) ստացել եք գնահատական (ստուգարք)	13	796	809
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	11	801	812